



ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԼԱՆՔ

Գործնական ուղեցույց
մասնագետների
համար

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԼԱՆՔ

Գործնական ուղեցույց
մասնագետների համար

Ֆրանսերեն հրատարակություն

*Rétention administrative des migrants et des
demandeurs d'asile – Guide pour les praticiens*

*Սույն աշխատության մեջ արտա-
հայտված կարծիքները պատկանում
են հեղինակին և պարտադիր չէ, որ
արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշ-
տոնական քաղաքականությունը:*

Քաղվածքների վերարտադրումը (մինչև
500 բառ) թույլատրվում է, բացառությամբ
կոմերցիոն նպատակների, այնքանով,
որքանով պահպանվում է տեքստի ամբող-
ջականությունը, քաղվածքը չի օգտագործ-
վում համատեքստից դուրս, թերի տեղե-
կատվություն չի տրամադրում կամ այլ
կերպ չի մոլորեցնում ընթերցողին տեքստի
բնույթի, շրջանակի կամ բովանդակու-
թյան վերաբերյալ: Տեքստի սկզբնաղբյուրը
մշտապես պետք է նշել հետևյալ կերպ.
«© Եվրոպայի խորհուրդ, հրապարակման
տարի»: Փաստաթղթի ամբողջական կամ մի
մասի վերարտադրման/ թարգմանության
հետ կապված բոլոր այլ հարցումները պետք
է ուղղվեն Եվրոպայի խորհրդի Հաղոր-
դակցության գծով տնօրինությանը (F-67075
Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Այս փաստաթղթի հետ կապված մյուս
բոլոր նամակագրությունները պետք է
հասցեագրվեն Իրավական համագործակ-
ցության բաժնին, Մարդու իրավունքների
և իրավունքի գերակայության գլխավոր
տնօրինությանը (DGI-CDCJ@coe.int):

Շապիկի ձևավորում և դասավորվա-
ծություն. Փաստաթղթերի և հրապա-
րակումների արտադրության վարչու-
թյուն (SPDP), Եվրոպայի խորհուրդ

Լուսանկարները՝ © Եվրոպայի խորհուրդ

© Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2023թ.

Տպագրված է Եվրոպայի խորհրդում

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
ԳԼՈՒԽ 1-ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԼԱՆՔ	13
1.1. Ե՞րբ կարող է հիմնավորված լինել ներգաղթի ընթացքում կալանքը	13
1.2. Ո՞վ կարող է որոշում կայացնել կալանքի մասին և ի՞նչ պետք է պարունակի այս որոշումը կամ հրամանը	16
1.3. Որքա՞ն ժամանակի համար կարող է կալանքը համարվել հիմնավորված	17
1.4. Ի՞նչ լրացուցիչ երաշխիքներ պետք է լինեն խոցելի անձանց համար	17
1.5. Ընթացակարգային երաշխիքներ կալանքի դեպքում	19
ԳԼՈՒԽ 2-ԿԱԼԱՆԱԿԱՅՐ ԺԱՄԱՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ	21
2.1. Խուլպարկություններ	21
2.2. Հաշվառում	22
2.3. Ժամանման վերաբերյալ տեղեկատվություն	23
2.4. Բժշկական վնասում	23
ԳԼՈՒԽ 3-ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՎ ՀԱՐՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	27
3.1. Տեղեկատվության տրամադրում կալանավորված անձանց	27
3.2. Ինչպես ապահովել կալանավորված անձանց տեղեկացվածությունը	29
3.3. Արտաքին հաղորդակցություն և կապ	30
ԳԼՈՒԽ 4-ԿԱԼԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԿԱԼԱՆԱԿՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	37
4.1. Համապատասխան շինություններ	37
4.2. Սնունդ, խմելու ջուր, հագուստ և անկողնային պարագաներ	41
4.3. Մտքի, խղճի, կրոնի և հավատքի ապաստություն	43
4.4. Հանգիստ և ժամանց	45
4.5. Սանիտարահիգիենիկ պայմաններ	45
4.6. Հատուկ դեպքեր	47
ԳԼՈՒԽ 5-ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	55
5.1. Պատշաճ առողջապահության հասանելիություն	55
5.2. Առողջապահական ծառայություններ	56
5.3. Առողջապահական ծառայություններ մատուցողներ	58
5.4. Հատուկ իրավիճակների և կարիքների բավարարում	59
5.5. Առողջապահական գրանցումներ և գաղտնիություն	65
5.6. Վատ վերաբերմունքի ենթադրությունների, կասկածների և բժշկական ապացույցների փաստաթղթավորում և հաղորդում	67
5.7. Հանրային առողջություն	68

ԳԼՈՒԽ 6-ԱՆՁՆԱԿԱԶՄ	71
6.1. Անձնակազմ և վերապատրաստում	71
6.2. Արտակարգ իրավիճակների կառավարում	75
ԳԼՈՒԽ 7-ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ	77
7.1. Անվտանգություն, կարգապահություն, մեկուսացում և խափանման միջոցներ	77
7.2. Խուլարկություններ	80
ԳԼՈՒԽ 8-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	83
8.1. Բողոքների ներկայացման մեխանիզմներ	83
8.2. Անկախ մշտադիտարկում	84
ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՍՏՈՒԳԱԹԵՐԹ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	89
1. Կստահորդի հետ շփումը	89
2. Խոցելիություններ	90
3. Կալանքի ընդհանուր պայմաններ	93
ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՍՏՈՒԳԱԹԵՐԹ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ	97
1. Անձի կալանավայր ժամանելու պահին	97
2. Անձի կալանավայրից հեռանալու պահին	98
3. Կալանքի ողջ ընթացքում	98
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	101

ՆԱԽԱԲԱՆ

Դարեր շարունակ մեր երկրները ձևավորվել են մասնավորապես միգրացիոն հոսքերով: Միգրացիան նպաստել է մեր հասարակությունների հարուստ կառուցվածքայնությանը: Ցավոք, նորություն չէ նաև միգրանտների խարանումը պոպուլիստական հռետորաբանության մեջ, որը ներկայումս ակներև է մեր երկրներից շատերում: Նման խոսույթը հանգեցնում է միգրանտների և ապաստան հայցողների վարչական կալանքի ընկալման ձևի փոփոխության ռիսկի՝ ժամանակավոր իրավիճակից, երբ քննվում է նրանց մնալու իրավունքը, մինչև պատիժ:

Ոչ մի դեպքում չպետք է անտեսվի այն փաստը, որ բոլոր միգրանտները և ապաստան հայցողներն իրենց ծագման երկրները թողել և հայրենիքը լքել են տարբեր պատճառներով՝ հակամարտությունից մինչև հետապնդում և աղքատություն: Միգրանտներն ու ապաստան հայցողները բոլորն էլ գալիս են իրենց կյանքի պատմություններով: Այնուամենայնիվ, նրանց ընդհանրությունը ավելի պայծառ ապագայի իրենց հույսն է, ձգտումը, որը ընդհանուր է բոլոր մարդկանց համար: Իրենց երկրները լքելով՝ նրանք թողնում են իրենց սիրելիներին, երբեմն՝ ամբողջ ունեցվածքը, և ճամփորդում են մեծ ռիսկով՝ հաճախ դառնալով թրաֆիքինգի և մաքսանենգների զոհը: Այդ տեղափոխությունները հաճախ խորապես տրավմատիկ փորձառություն են: Նրանցից շատերը դեռ երեխաներ են, ինչն էլ ավելի ցավագին է դարձնում իրավիճակը:

Միգրանտները և ապաստան հայցողները մարդու իրավունքների կրողներ են, ինչպես և մենք բոլորս: Այս հիմնական նախադրյալը պետք է կանխորոշի, թե ինչպես են նրանց հետ վարվում այն երկրները, որտեղ նրանք ժամանում են: Սույն ուղեցույցը մշակվել է՝ հիմնական նպատակ ունենալով համախմբելու վարչական կալանքը կարգավորող գոյություն ունեցող չափանիշները, որպեսզի երաշխավորվի ներգաղթյալների և ապաստան հայցողների նկատմամբ մարդկային և արժանապատիվ վերաբերմունքը: Այն հիմնված է հիմնականում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վրա, ինչպես մեկնաբանվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, ինչպես նաև համապատասխան այլ իրավական աղբյուրների վրա: Այլ կերպ ասած, այս ուղեցույցում փորձ չի կատարվում ստեղծել նոր չափորոշիչներ, այլ պարզապես ընդգծել նրանք, որոնք պետք է պահպանվեն, և դրանք ներկայացնել այնպես, որ գործնականում հեշտությամբ օգտագործվեն մասնագետների կողմից: Ի վերջո, այն, թե ինչպես են մեր երկրները վերաբերվում վարչական կալանքի տակ գտնվող միգրանտներին և ապաստան հայցողներին, շատ բան է ասում մեր ժողովրդավարական հասարակությունների ճկունության մասին:

Քրիստոս Զակումոպուլոս

*Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության
գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միգրացիոն տեղաշարժերի կառավարումը անդամ պետությունների իրավասությունն է, որը պետք է իրականացնել՝ միաժամանակ լիովին հարգելով ապաստան հայցողների և ներգաղթյալների մարդու իրավունքները և որը շարունակում է զգալի մարտահրավեր լինել անդամ երկրների համար²: Այս համատեքստում ներգաղթի ընթացքում կալանքը մնում է ամենահրատապ խնդիրներից մեկը եվրոպայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ «Դատարան») համար:

Եվրոպայի խորհուրդը շարունակում է հետագա իրավական ուղղորդում և աջակցություն տրամադրել անդամ պետություններին՝ այս հարցերը կարգավորելու համար:³ Ներգաղթի անընդհատ փոփոխվող լանդշաֆտի պայմաններում, ներգաղթի ընթացքում կալանքի պայմանների վերաբերյալ գոյություն ունեցող նվազագույն չափանիշները և ուղենիշերը համախմբելու զգալի անհրաժեշտություն կա:⁴

Սույն ուղեցույցը ստեղծվել է այդ նպատակի իրականացման համար: Այն ծառայում է անդամ երկրներին աջակցելու՝ իրականացնելու իրենց պարտականություններն ու պարտավորությունները ապաստան հայցողների և միգրանտների նկատմամբ այս համատեքստում՝ որպես հղման կետ ծառայելով ներգաղթի ընթացքում կալանավորման ոլորտում գործող մասնագետների լայն շրջանակի համար:

Այս ուղեցույցի մեկնարկային կետը այն է, որ պետք է հիշել, որ ներգաղթի համատեքստում ազատությունից զրկելը նույնը չէ, ինչ քրեական գործերով կալանավորումը կամ բանտարկությունը: Այն կարող է կիրառվել միայն որպես վարչական միջոց՝ երկրից հեռացմանը սպասելիս և պետք է կիրառվի միայն ծայրահեղ դեպքերում՝ այլընտրանքի բացակայության պարագայում. այն պետք է լինի դատական կարգով լիազորված/վերանայված, անհրաժեշտ լինի օրինական նպատակների համար և գործի հնարավորինս կարճ ժամանակում:⁵

Կարևոր է հիշել նաև, որ կան իրավիճակներ, երբ մարդը չի կարող ենթարկվել ներգաղթային կալանքի, հատուկ խոցելիության պատճառով (օրինակ, եթե հղի է, երեխա է, խոշտանգման կամ մարդկանց թրաֆիքինգի զոհ է կամ ունի մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիրներ):⁶ Բոլոր կալանավորված անձանց պետք է վերաբերվել նրանց արժանապատվության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքով, և իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն խուսափելու նրանց նկատմամբ խտրականության որևէ դրսևորումից: ⁷ Անդամ պետություններն այս առումով զգալի բեռ ունեն:

Ուղեցույցի նպատակը

Սույն ուղեցույցը՝ մշակվել է Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեի (CDCJ) կողմից միգրացիայի ոլորտում աշխատող մասնագետների համար՝ որպես գործնականում կիրառվող գործիք, որը կնպաստի նրանց կարողությունների բարելավմանը՝ արդյունավետ և համապատասխանաբար կանխելու ցանկացած ռիսկ և չարաշահման ձև կամ ազատազրկված անձանց իրավունքների խախտումներ, ինչպես նաև ամրապնդելու նրանց արժանապատվության և հիմնարար իրավունքների հարգանքը՝ գործող միջազգային և եվրոպական չափանիշներին համապատասխան:

Ու՞մ համար է նախատեսված սույն ուղեցույցը

Այս գործնական ուղեցույցը նախատեսված է օգնելու և աջակցելու միգրացիայի ոլորտում աշխատող մասնագետներին և այլ շահագրգիռ կողմերի լայն շրջանակին: Այն, ի թիվս այլոց, ուղղված է.

- ▶ կալանքի նախնական որոշումներ կայացնելու և կալանքը պահպանելու կամ ազատ արձակելու որոշումներ կայացնելու համար պատասխանատու անձնակազմին,
- ▶ սահմանապահներին,
- ▶ առողջապահության ոլորտի մասնագետներին,
- ▶ կալանավայրերի անձնակազմին,
- ▶ թարգմանիչներին,
- ▶ իրավաբաններին,
- ▶ հասարակական կազմակերպություններին (ՀԿ) և այլ կամավորներին, որոնք օգնում են կալանավորված անձանց կամ համագործակցում ներգաղթի ընթացքում կալանքին առնչվող մարմինների հետ:

Ուղեցույցի շրջանակը

Ուղեցույցը ներառում է բոլոր այն իրավիճակները, երբ անձինք զրկվում են ազատությունից՝ միգրացիայի և ապաստանի հետ կապված օրենքների կիրառությամբ. մասնավորապես՝ ոչ քաղաքացիների մուտքի, կացության, կարգավիճակի և հեռացման, ինչպես նաև փախստականների, ապաստանի և միջազգային պաշտպանության այլ ձևերի վերաբերյալ օրենսդրության կարգավորում: Այս ուղեցույցը չի վերաբերում այն անձանց, ովքեր կալանքի են առնվել քրեական վարույթի սպասումով կամ պատիժ են կրում մեղադրական դատավճիռից հետո:

Ուղեցույցը նախատեսված է ցանկացած տեսակի կալանավայրերում կիրառության համար, որտեղ անձը զրկված է ազատությունից՝ կամ իրավասու մարմնի կողմից ընդունված պաշտոնական որոշման հիման վրա, կամ դե ֆակտո ազատությունից զրկելու իրավիճակի հետևանքով:

Տարբերական չափանիշներ ազատ տեղաշարժի սահմանափակման և ազատությունից զրկելու վերաբերյալ

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի («Կոնվենցիա») 5-րդ հոդվածի իմաստով՝ որոշելու համար, թե արդյոք որևէ մեկը «զրկվել է իր ազատ տեղաշարժից», ելակետը պետք է լինի այն կոնկրետ իրավիճակը, որտեղ նա հայտնվել է: Բացի այդ, պետք է հաշվի առնել մի շարք չափանիշներ, ինչպիսիք են.⁹

- ▶ տեսակը,
- ▶ տևողությունը,
- ▶ ազդեցությունները,
- ▶ տվյալ միջոցառման իրականացման ձևը:¹⁰

Օղանավակայանի տարանցիկ գոտիներում և անձանց նույնականացման և գրանցման համար նախատեսված ընդունարաններում ազատ տեղաշարժի սահմանափակման և ազատությունից զրկման միջև տարբերությունը որոշելիս Դատարանի կողմից հաշվի առնված գործոնները կարող են ամփոփվել հետևյալ կերպ.

- ▶ տվյալ անձանց իրավիճակը և ընտրությունները,
- ▶ համապատասխան երկրի գործող իրավական ռեժիմը,
- ▶ միջոցառումների համապատասխան տևողությունը, նպատակը և ընթացակարգային պաշտպանությունը, որից օգտվում են շահագրգիռ անձինք, և
- ▶ տվյալ անձանց նկատմամբ կիրառվող փաստացի սահմանափակումների բնույթն ու աստիճանը:

Ինչպես կիրառել ուղեցույցը

Ուղեցույցը մշակվել է այնպես, որ մասնագետներին հնարավորություն է ընձեռվում առանձին անդրադառնալ ութ գլուխներից յուրաքանչյուրին՝ որպես առանձին գլուխ, որն ընդգրկում է ներգաղթի կալանքի որոշակի առանձնահատկությունը: Ուղեցույցն օգտագործողները յուրաքանչյուր գլխի վերջում կգտնեն օգտակար գործիքներ, ներառյալ ամփոփ ուղեցույցը և գործիքակազմը, որտեղ հղումներ են արվում լրացուցիչ ընթերցանության նյութերի և փաստաթղթերի: Ուղեցույցի վերջում օգտվողները կգտնեն ստուգաթերթեր բուժաշխատողների և իրավաբանների համար:

Սույն ուղեցույցը հիմնված է միջազգային և եվրոպական իրավական չափանիշների վրա, ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպական միության Արդարադատության դատարանի (CJEU) նախադեպային իրավունքի վրա:¹¹ Հետևաբար, ներգաղթի ընթացում կալանքի հետ կապված միջազգային և ներքին զարգացումները պետք է կանոնավոր կերպով հաշվի առնվեն ուղեցույցի մեկնաբանության և կիրառության ընթացքում:

Կիրառվող եզրութաբանությունը և սահմանումները¹²

Ուղեցույցի բովանդակության շրջականում առավել հաճախ օգտագործվող եզրույթները պետք է հասկանալ հետևյալ կերպ.

Ներգաղթյալների վարչական կալանքը կամ **ներգաղթի ընթացքում կալանավորումը** բոլոր այն իրավիճակներն են, երբ անձը զրկված է ազատությունից կամ պահվում է այն իրավիճակներում, որոնք դե ֆակտո համահավասար են ազատությունից զրկմանը, իրավասու մարմնի պաշտոնական որոշմամբ կամ առանց դրա՝ ներգաղթին և ապաստանին առնչվող օրենքների կիրառությամբ:¹³

Կալանավորված անձը ցանկացած միգրանտ է, ապաստան հայցող, փախստական կամ օտարերկրյա քաղաքացի, որը կալանավորվել է ներգաղթին և ապաստանին վերաբերվող օրենքների կիրառությամբ:

Կալանավայրը այն վայրն է, որտեղ պահվում է անձը ներգաղթին և ապաստանին առնչվող օրենքների կիրառությամբ, ինչպես կալանքի կենտրոններ, ընդունման կենտրոններ, օդանավակայանների միջազգային գոտիներ, տարանցիկ գոտիներ և այլն:

Իրավասու մարմինը ցանկացած մարմին է՝ լինի դա դատական կամ վարչական, որը լիազորված է ներպետական օրենսդրությամբ՝ կարգադրելու կամ որոշում կայացնելու մի իրավիճակի մասին, որը հավասարեցվում է անձին ազատությունից զրկելուն՝ կիրառելով միգրացիայի և ապաստանի մասին օրենքները: Այն ներառում է նաև մասնավոր կազմակերպություններ, որոնց հետ պայմանագրային հիմունքներով կազմակերպում են այդպիսի անձանց տեղավորումը և կալանավայրերի կառավարումը:

Երեխան 18 տարեկանից ցածր ցանկացած անձն է:¹⁴

Առանց ուղեկցության երեխան երեխա է, ով անջատվել է և ծնողներից, և այլ հարազատներից, և չի գտնվում չափաիասի խնամքի տակ, ով համաձայն օրենքի կամ սովորության պատասխանատու է նրա համար:

Ընտանիքից անջատված երեխան երեխա է, ով անջատվել է երկու ծնողից կամ նախնիներից օրինական կամ հիմնական խնամողից, սակայն պարտադիր չէ, որ անջատված լինի այլ հարազատներից: Հետևաբար, այս եզրույթը կարող է ներառել երեխաներին, որոնց ուղեկցում են ընտանիքի այլ չափաիաս անդամները:

Անձնակազմը կալանավայրում աշխատող կամ հանձնարարություն կատարող այն անձինք են, ովքեր կատարում են կալանքի պայմանների կամ ներգաղթի ընթացքում կալանքի տակ գտնվող անձի բարեկեցության հետ կապված պարտականություններ: Սա ներառում է, ի թիվս այլ բաների, անձնակազմի անդամներին, ովքեր ունեն մի շարք դերակատարումներ, այդ թվում՝ անվտանգության, կալանավորման, ինչպես նաև վերահսկիչների ու կառավարիչների, անկախ նրանից՝ նրանք ուղղակիորեն պետական

աշխատողներ են, թե արդյոք նրանց ծառայությունները ձեռք են բերվել արտապատվիրական միջոցով:

Բուժաշխատողները բժիշկներ, ատամնաբույժներ, հոգեբաններ, հոգեբույժներ, համապատասխան պատրաստվածություն ունեցող բուժաշխատողներ կամ բուժքույրական անձնակազմ են, որոնք ընդունվել են աշխատանքի համաձայն ներմասնագիտական չափանիշների:

Խոցելի անձը անձն է, ով հայտնաբերվում է հատուկ կարիքներ ունեցող իր իրավիճակի անհատական գնահատումից հետո և ով իրավունք ունի դիմելու պետության պարտավորությանը հատուկ պաշտպանություն և օգնություն ստանալու համար միգրացիայի և ապաստանի համատեքստում:¹⁵

Հեռացումն ընդունող պետությունից անձի կամավոր վերադարձն է կամ հարկադիր հեռացումը, այդ թվում՝ արտաքսումը:

Հասարակական կազմակերպությունները տեղական, տարածաշրջանային, ազգային կամ միջազգային ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք իրավասու են ոլորտում, անկախ են կառավարությունից և հավատարմագրված կամ ճանաչված են ընդունող պետությունների կողմից:

Հապավումներ

Ուղեցույցի և դրա վերջում զետեղված նշումների նպատակների համար առավել հաճախ օգտագործվող հապավումները հետևյալն են.

ԽԿԱ (APT)	Խոշտանգումների կանխարգելման ասցիացիա
ԵԽՄԻՂԿ (CDDH)	Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների ղեկավար կոմիտե
ԵՄԱԴ (CJEU)	Եվրոպական միությանն արդարադատության դատարան
ԽԿԿ (CPT)	Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե
ՀԻԳ (FRA)	Հիմնարար իրավունքների եվրոպական միության գործակալություն
ՄՊ (GC)	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեծ պալատ
ՔՔԻՄԴ (ICCPR)	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՄԿԿ (IDC)	Միջազգային կալանքի կոալիցիան
ՄՄԿ (IOM)	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՀԿ (NGO)	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ ՄԻԳՀԳ (OHCHR)	ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ
ՄԱԿ ՓՀԳՀ (UNHCR)	ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար

Ելնելով Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունից, ներգաղթյալների նկատմամբ կալանքը պետք է համապատասխանի մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և մարդու իրավունքների այլ վերաբերելի կոնվենցիաներին,¹⁶ Դատարանի նախադեպային իրավունքին և մշտադիտարկման այնպիսի մարմինների կողմից մշակված չափանիշներին, ինչպիսին է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ): Համապատասխանաբար.

- ▶ նախ և առաջ ցանկացած վարչական կալանք, որպես այդպիսին, պետք է թույլատրելի լինի. այն է՝ կալանքի մասին որոշումը պետք է համապատասխանի ազատության և անվտանգության իրավունքին՝ համաձայն Կոնվենցիայի 5.1 հոդվածի և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 9.1 հոդվածի: Այս հանգամանքն ավելի մանրամասն է նկարագրվում այս գլխում, որը հիշեցնում է այն հիմնարար սկզբունքները, որոնք պետք է նկատի ունենալ՝ նախքան անձին ներգաղթի կալանքի ենթարկելը,
- ▶ երկրորդ՝ կալանքը համապատասխանում է մարդու իրավունքներին միայն այն դեպքում, երբ կալանքի օրինականությունը և դրա պայմանները համապատասխանում են մարդու իրավունքների չափանիշներին: «Պայմանների» այս երկրորդ հասկացությունը մանրամասն կներկայացվի հաջորդ գլուխներում:

1.1. Երբ կարող է հիմնավորված լինել ներգաղթի ընթացքում կալանքը

Կոնվենցիայի 5.1.գ հոդվածի համաձայն՝ երկրի իշխանությունները կարող են անձին ազատությունից զրկել ներգաղթի համատեքստում միայն հետևյալ նպատակներով.

- ▶ կանխելու չարտոնված մուտքը երկիր,
- ▶ սպասվում է անձի հեռացումը կամ արտահանձնումը:

Ցանկացած ազատագրկում, որը չի հետապնդում այդ նպատակները, կհամարվի Կոնվենցիայի 5.1.գ հոդվածի խախտում: Օրինակ՝ անձը չպետք է կալանավորվի բացառապես միջազգային պաշտպանության համար դիմում ներկայացնելու պատճառով:¹⁷

Ապաստան հայցողների համար կիրառվում են ավելի սահմանափակող չափանիշներ, իսկ վարչական կալանքը կարող է կիրառվել միայն առավել սահմանափակ հանգամանքներում:¹⁸

ԵՄ օրենսդրությունը թույլատրում է ներգաղթի ընթացքում կալանքը, ի թիվս այլոց, հետևյալ դեպքերում.¹⁹

- ▶ որոշել և հաստատել դիմողի ինքնությունը կամ քաղաքացիությունը,
- ▶ ուսումնասիրել ապաստանի համար դիմումի այն տարրերը, որոնք հնարավոր չէ որոշել կալանքի բացակայության դեպքում, մասնավորապես, երբ առկա է փախուստի վտանգ,
- ▶ որոշել դիմողի տարածք մուտք գործելու իրավունքը,
- ▶ ի պատասխան դիմողի՝ նրանց հեռացման հարցում համագործակցելու մերժմանը,
- ▶ երբ դա պահանջում է ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պաշտպանությունը,
- ▶ ապահովել փոխանցման ընթացակարգերը Դուբլինի կանոնակարգով:
- ▶ Բացի այդ, Կոնվենցիայի 5.1.գ հոդվածում ամրագրված ընդհանուր նպատակի և պահանջի հետ համատեղելի լինելու համար անձի կալանավորման հետ կապված բոլոր ընթացակարգերը պետք է.
- ▶ կամայական չլինեն
- ▶ նախատեսված լինեն օրենքով,
- ▶ լինեն անհրաժեշտ և օրինական նպատակին համաչափ:

i. «Կամայական կալանավորում»

Կալանավորման վերաբերյալ որոշումները կամ հրամանները պետք է ընդունվեն իրավասու մարմինների կողմից և միայն անհատական հիմունքներով՝ օրենքին համապատասխան, և տվյալ անձին վերաբերող բոլոր համապատասխան փաստերը դիտարկելուց հետո:²⁰ Որոշելու համար, թե արդյոք կալանավորման մասին որոշումը կայացվել է կամայական եղանակով թե ոչ, Դատարանը հաշվի է առնում հետևյալ կարևոր գործոնները.²¹

- ▶ արդյոք կալանավորումն իրականացվում է բարեխղճորեն և հիմնված է օրինական հիմքերի վրա,²²
- ▶ արդյոք դա սերտորեն կապված է անձի չարտոնված մուտքը երկիր կանխելու, կամ երկրից հեռացման նպատակով,
- ▶ արդյոք կալանավայրը և պահման պայմանները եղել են համապատասխան,²³
- ▶ արդյոք կալանքի ժամկետը գերազանցում է նպատակի համար ողջամտորեն պահանջվող ժամկետը:

ii. «Օրինական կալանք»

Ներգաղթի ընթացքում կալանքի հետ կապված բոլոր ընթացակարգերը պետք է սահմանվեն ազգային օրենսդրությամբ: Այս պահանջի նպատակն է խուսափել իշխանությունների կողմից կամայականության ցանկացած ռիսկից:

Այս պահանջը նվազագույնը նշանակում է, որ իրավական հիմքը (ազգային օրենսդրությունը) հասանելի է հանրությանը:

Դատարանի համապատասխան նախադեպային իրավունք

«Ամուսինն ընդդեմ Ֆրանսիայի» գործով, օրինակ, դիմումատուի կալանավորումը Փարիզ-Օրլի օդանավակայանի տարանցիկ գոտում հիմնված էր երկու ակտերի վրա, որոնք չեն հրապարակվել: Դատարանը գտավ, որ այս տեքստերից և ոչ մեկը չի հանդիսանում «բավարար որակի «օրենք», որը ներպետական օրենսդրության մեջ համապատասխան իրավական պաշտպանություն կառաջարկի պետական մարմինների կամայական միջամտություններից: ²⁴

«Մաթյուն ընդդեմ Հունաստանի» գործով Դատարանը նաև ընդգծել է, որ ներպետական օրենսդրությունը Կոնվենցիային համապատասխանելու համար կալանքի ժամկետը միշտ պետք է ողջամտորեն համապատասխանի ազատությունից զրկելու միջոցին:²⁵

«Սուտ Մուսան ընդդեմ Մալթայի» գործով իշխանությունները օրենքով թույլատրել են միգրանտների մուտքը կամ կացությունը միևնույն ապաստանի դիմումը: Դիմումատուի հետագա կալանավորումը՝ չարտոնված մուտքը կանխելու նպատակով, բարձրացրել է կալանավորման օրինականության հարցը:²⁶

Նաբիլն ու մյուսներն ընդդեմ Հունգարիայի գործով Դատարանը շեշտեց, որ երբ իշխանությունները որոշում են երկարաձգել նախնական կալանքի ժամկետը, նրանք չպետք է պարզապես կրկնեն այն փաստարկները, որոնց հիման վրա որոշվել է ապաստան հայցողի նախնական կալանքի ժամկետը:²⁷

iii. «Կալանքի անհրաժեշտություն և օրինական նպատակին համաչափություն»

Կալանքը, մեծամասամբ իր ոտնձգողական բնույթով, պետք է կիրառել միայն որպես վերջին միջոց, երբ խիստ անհրաժեշտ է և հնարավորինս կարճ ժամանակով, և այն բանից հետո, երբ լիարժեք և մանրամասն ուսումնասիրությամբ հաստատվի, որ ավելի քիչ հարկադրական այլընտրանքային միջոցներն անարդյունավետ կլինեն կոնկրետ դեպքում:

Կալանավորման ամենահարմար այլընտրանքը կլինի այն միջոցը, որը տվյալ անձի դեպքում կոնկրետ հանգամանքներում կարող է արդյունավետորեն կիրառվել, և ապահովելու է այդ անձի համար ազատության նվազագույն սահմանափակում և նրա իրավունքների և շահերի պաշտպանության ամենաբարձր մակարդակը:

Կալանավորման այլընտրանքները կարող են լինել, սակայն չսահմանափակվել հետևյալով:²⁸

- ▶ պարբերաբար զեկուցել ոստիկանությանը կամ ներգաղթով զբաղվող մարմիններին,

- ▶ անձնագրի կամ ճամփորդական փաստաթղթի հանձնումը,
- ▶ տարածքում գտնվելու ժամանակավոր թույլտվություն,
- ▶ ընտանեկան խնամք առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար,²⁹
- ▶ լիազոր մարմնի կողմից տրամադրվող բնակելի օբյեկտներ,
- ▶ բաց կամ կիսաբաց կենտրոններ միգրանտների և ապաստան հայցողների համար,
- ▶ նշանակված բնակության վայրը տվյալ ժամանակահատվածում,
- ▶ գրավ՝ երաշխիքներով կամ առանց դրա,
- ▶ երաշխավորի պահանջներ,
- ▶ գործերի կառավարում կամ գործով զբաղվող աշխատակցին աջակցություն,
- ▶ էլեկտրոնային մշտադիտարկում, օրինակ՝ նշումավորում³⁰

Հիշեք.

Անձին ցանկացած պահի ազատությունից զրկելիս՝ լինի դա նրա ժամանումից հետո, թե հեռացմանը սպասելիս, երկրի իշխանությունները պետք է նկատի ունենան հետևյալը.

ազատությունից ցանկացած զրկում արդարացված կլինի միայն այնքան ժամանակ, քանի դեռ ընթացքի մեջ է կալանքից ազատման վարույթը: Եթե նման վարույթը պատշաճ ջանասիրությամբ չի վարվում, ապա կալանքը կդադարի թույլատրելի լինել Կոնվենցիայի 5.1.գ հոդվածի համաձայն,

հեռացման նպատակով կալանավորումը չպետք է պատժիչ բնույթ կրի և պետք է ուղեկցվի համապատասխան երաշխիքներով,

պետք է հաշվի առնել՝ արդյոք հեռացումը իրատեսական և հեռանկար է, և արդյոք հեռացման նպատակով կալանավորումն ի սկզբանե արդարացված է, կամ՝ շարունակում է արդարացված լինել,

պետք է լինեն ընթացակարգային երաշխիքներ, որոնք կարող են կանխել կամայական կալանքի վտանգը մինչև արտաքսումը: Նման երաշխիքները կարող են ներառել կալանավորման ողջամիտ ժամկետներ, իրավական խորհրդատվություն, դատական վերանայման առկայություն և այլն:

1.2. Ո՞վ կարող է որոշում կայացնել կալանքի մասին, և ի՞նչ պետք է պարունակի այդ որոշումը կամ հրամանը

Կալանավորման վերաբերյալ որոշումները կամ հրամանները պետք է կայացվեն դատական կամ համապատասխան վարչական մարմինների կողմից: Ըստ

այդն անհրաժեշտ է, որ ազգային օրենսդրությունը այդ նպատակով նշանակի իրավասու մարմիններ և սահմանի այն ընթացակարգը, որին պետք է հետևել:

1.3. Որքան ժամանակի համար կարող է կալանքը համարվել հիմնավորված

Կալանավորումը պետք է սահմանել հնարավորինս կարճ ժամանակով,³¹ և ներգաղթի ընթացքում ոչ մի դեպքում չպետք է կալանքը լինի անսահմանափակ ժամկետով: Ինչպես ընդգծել է Դատարանը, ներգաղթային կալանքը թույլատրելի է միայն այնքան ժամանակ, քանի դեռ կալանքը հիմնավորող ընթացակարգերն իրականացվում են պատշաճ հետևողականությամբ:³² Կալանավորված անձինք պետք է ազատ արձակվեն, այն պահից սկսած, երբ կդադարեն գործել իրենց կալանավորման պատճառները:

Ի հավելումն օրինական նպատակի՝ կալանքի տևողությունը մանրակրկիտ ուսումնասիրվում է Դատարանի կողմից՝ հաշվի առնելով կալանավորված անձի առանձնահատուկ հանգամանքներն ու խոցելիությունները³³ և նրա կալանքի պայմանները:³⁴ Կախված հանգամանքներից՝ նույնիսկ երկու ժամ կալանքի տակ մնալը որոշ դեպքերում կարող է դիտվել որպես ազատությունից զրկում Կոնվենցիայի 5.1 հոդվածի իմաստով:³⁵

Դատարանի համապատասխան նախադեպային իրավունք

«Լույեդ Մասուդն ընդդեմ Մալթայի» գործով դիմումատուն ավելի քան 18 ամիս մնացել է կալանավայրում՝ արտաքսման նպատակով: Նրա ապաստանի հայցը մերժելուց հետո նրա արտաքսման իրատեսական հեռանկարի հավանական բացակայությունն այդքան երկար ժամանակով դիմողի կալանավորումն անօրինական դարձրեց:³⁶

1.4. Ինչ լրացուցիչ երաշխիքներ պետք է լինեն խոցելի անձանց համար

Բազմիցս հաստատվել է, որ խոցելիությունը ներհատուկ է միգրանտների իրավիճակին:³⁷ Նախքան կալանավորելու որոշում կայացնելը կամ իրաման արձակելը, անձի կոնկրետ իրավիճակը կամ առողջական վիճակը պետք է ստուգել՝ գնահատելու համար, թե արդյոք կալանքի տակ պահելը նրանց կոնկրետ խոցելիության կամ ռիսկային իրավիճակում, և արդյոք նրան անհրաժեշտ է հատուկ խնամք, ուշադրություն կամ օգնություն:³⁸

Խոցելի անձի կալանավորումը չի համապատասխանի Կոնվենցիայի 5.1.գ հոդվածին, եթե կալանքով պայմանավորված նպատակին հնարավոր է հասնել այլ՝ ոչ այնքան հարկադրական միջոցներով: Սա պահանջում է, որ իրավասու մարմինները դիտարկեն կալանքի այլընտրանքները՝ հաշվի առնելով անձի գործի կոնկրետ հանգամանքները: Ակտիվ քայլերի բացակայությունը և այս խոցելիության գնահատումն իրականացնելու ձգձգումները

կարող են լուրջ կասկածներ հարուցել իշխանությունների բարեխղճության վերաբերյալ:³⁹ Ի հավելումս Կոնվենցիայի 5.1.գ հոդվածի, խոցելի անձանց ներգաղթի ընթացքում կալանավորումը կարող է խնդիրներ առաջացնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ ուշադրություն դարձնելով կալանքի պայմաններին, դրա տևողությանը, անձի առանձնահատուկ խոցելիությանը և նրանց վրա կալանքի ազդեցությանը:

Խոցելիությունը կարող է առաջանալ անձի ֆիզիկական վիճակի, առողջական վիճակի կամ անցյալի փորձի պատճառով. հետևաբար, խոցելիության դրսևորումները և դրանց լուծման պարտավորությունները կարող են զգալիորեն տարբերվել: Դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա կարելի է նշել հետևյալ օրինակները:⁴⁰

- ▶ Երեխաներ,⁴¹
- ▶ Առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներ,⁴²
- ▶ Հղի կանայք և կերակրող մայրեր,⁴³
- ▶ Տարեց անձինք,
- ▶ Միայնակ ծնողներ՝ երեխաներով,⁴⁴
- ▶ Հաշմանդամություն ունեցող կամ ծանր հիվանդություններ ունեցող անձինք,⁴⁵
- ▶ ԼԳԲՏԻ անձինք,⁴⁶
- ▶ Մարդկանց թափաքինգի զոհեր,⁴⁷
- ▶ Ֆիզիկական կամ հոգեբանական բնույթի խոշտանգումների, վատ վերաբերմունքի, սեռական և գենդերային բռնության կամ ընտանեկան բռնության զոհեր:⁴⁸

Դատարանի համապատասխան նախադեպային իրավունքը

«Ռահիմին ընդդեմ Հունաստանի» գործով, առանց ուղեկցողի երեխայի կալանավայրում պահելու պայմանները, հատկապես կացարանի, հիգիենայի և ենթակառուցվածքների հետ կապված, այնքան վատ էին, որ խարխուլեցին մարդկային արժանապատվության բուն իմաստը: Ավելին, դիմումատուն, հաշվի առնելով իր տարիքը և անձնական հանգամանքները, գտնվել է ծայրահեղ խոցելի վիճակում, և իշխանությունները նրան կալանքի տակ դնելիս հաշվի չեն առել նրա անհատական հանգամանքները: Ըստ այդմ, նույնիսկ հաշվի առնելով այն փաստը, որ կալանքը տևել է ընդամենը երկու օր, դիմումատուի կալանքի պայմաններն ինքնին հավասարազոր են եղել նվաստացուցիչ վերաբերմունքի՝ խախտելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Երիտասարդ տարիքի պատճառով նրա վարչական իրավիճակի անկանոնությունը մի երկրում, որին նա ծանոթ չէր, և այն փաստը, որ նա առանց ուղեկցության էր և, հետևաբար, թողնված էր իր հոգածության վրա, ակնհայտորեն դարձնում էր նրան խիստ խոցելի անձ: Արդյունքում, Դատարանը հիշեցրեց, որ Հունաստանի իշխանությունները պարտավոր էին պաշտպանել նրան և հոգ տանել նրա մասին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իրենց դրական պարտավորությունների լույսի ներքո: ⁴⁹

1.5. Ընթացակարգային երաշխիքներ կալանքի դեպքում

Կալանավորվելիս անձինք շարունակում են օգտվել իրենց կալանավորման հետ կապված մի շարք դատավարական իրավունքներից: Կոնվենցիայի 5.2-րդ հոդվածի համաձայն՝ նրանք իրավունք ունեն իրենց հասկանալի լեզվով⁵⁰ տեղեկացվելու իրենց ազատությունից զրկվելու պատճառների մասին⁵¹: Դա նրանց թույլ կտա դատարանում վիճարկել դատավարական և էական պայմանները, որոնք զգալի նշանակություն ունեն իրենց ազատությունից զրկվելու «օրինականության» համար՝ Կոնվենցիայի 5.1 հոդվածին համապատասխանելու համար: Ներպետական դատարանները պետք է «արագ» քննեն և որոշեն անձանց կալանավորման օրինականությունը և հրամայեն նրանց ազատ արձակել, եթե կալանավորումը օրինական չէ:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորված անձինք իրավունք ունեն նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի՝ կապված իրենց կալանքի պայմաններին առնչվող բողոքների հետ:⁵² Արդյունավետ համարվելու համար նման միջոցները պետք է ընձեռեն կալանավորման նյութական պայմանների բարելավման հնարավորություն և նման պայմանների պատճառով արդեն իսկ տեղի ունեցած խախտման համար հարկադիր փոխհատուցման իրավունք:⁵³

Հիշեք.

Կալանավորման որոշում կայացնելու հարցը քննարկելիս իրավասու մարմինները պետք է նկատի ունենան հետևյալը.

- ▶ Արդյո՞ք կալանավորումը իրավական հիմք ունի ազգային օրենսդրության մեջ, և արդյո՞ք վերջինս բոլորի համար բավականաչափ պարզ և կանխատեսելի է:
- ▶ Արդյո՞ք որոշումը կայացվում է ազգային օրենսդրության համաձայն կալանքի միջոց կիրառելու իրավասու մարմնի կողմից:
- ▶ Արդյո՞ք կալանքն անհրաժեշտ է և համաչափ՝ հետապնդվող նպատակին:
- ▶ Արդյո՞ք անձը գտնվում է խոցելի վիճակում:
- ▶ Կա՞ն արդյոք կալանավորման այլընտրանքներ՝ վերը նկարագրված նույն նպատակային արդյունքներին հասնելու համար: Արդյո՞ք ողջամիտ է բացառել այս այլընտրանքները:
- ▶ Կալանքի որոշման իրավական հիմքերն ու պատճառները պատշաճ կերպով բացատրվել են տվյալ անձին՝ վերջինիս կողմից ընկալելի ձևով և լեզվով:
- ▶ Արդյո՞ք համապատասխան անձը տեղեկացվել է կալանքի հնարավոր տևողության մասին:
- ▶ Արդյո՞ք անձը տեղեկացված է իր կալանքը վիճարկելու ընթացակարգերի և կալանավայրում նրա հանդեպ վերաբերմունքի մասին:
- ▶ Արդյո՞ք անձը հասանելիության հնարավորություն ունի հետամուտ լինելու և լիարժեք օգտվելու նման միջոցներից:

Գործիքակազմ/հետագա ընթերցում

- ▶ HELP առցանց դասընթացներ՝ Ապաստան և մարդու իրավունքներ
- ▶ HELP առցանց դասընթացներ, Ներգաղթի կալանքի այլընտրանքներ
- ▶ Մարդու իրավունքների ղեկավար կոմիտե (CDDH), Ներգաղթի կալանքի այլընտրանքներ. արդյունավետ արդյունքների խթանում, Գործնական ուղեցույց, հունիս 2019թ.
- ▶ ԽԿԿ (CPT) այցերի հաշվետվությունների, հրապարակային հայտարարությունների և չափորոշիչների հավաքածու
- ▶ ՄԱԿ-ի ՓՀԳՀ (UNHCR) ուղեցույցներ ապաստան հայցողների և կալանքի այլընտրանքների վերաբերյալ կիրառելի չափորոշիչների և չափանիշների վերաբերյալ, 2012թ.

Գլուխ 2

ԿԱԼԱՆԱՎԱՅՐ ԺԱՄԱՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Ժամանում հասկացությունը վերաբերում է կալանավայր ժամանելու պահին: Հաստատություն նոր մուտք գործող անձանց թվում նրանք են, ովքեր առաջին անգամ են ժամանել հաստատություն և նրանք, ովքեր տեղափոխվել են մեկ հաստատությունից մյուսը: Ներգաղթային կալանքի տակ գտնվող յուրաքանչյուր անձ պետք է խուզարկվի և գրանցվի կալանավայր ժամանելուն պես և տեղեկացված լինի հաստատության ներքին կանոնների և կալանավորման ընթացքում իր իրավունքների ու պարտականությունների մասին: Ավելին, վարչական կալանավայր մուտք գործող բոլոր նոր ժամանած կալանավորված անձանց բժշկական զննում պետք է առաջարկվի որքան հնարավոր է շուտ, իդեալական տարբերակում՝ նրանց ժամանումից հետո 24 ժամվա ընթացքում:⁵⁴

Այն դեպքերում, երբ ժամանման ընթացակարգերը չեն պահպանվում իրավասու մարմինների կողմից, վերջիններս կրում են կալանավորված անձի իրավունքները հարգելու ապացույցների բեռը:⁵⁵

2.1. Խուզարկություններ

Կալանավայրերի շահագործման և կառավարման համար պատասխանատու մարմինները պետք է ապահովեն, որ առողջության և անվտանգության բոլոր ռիսկերը, ներառյալ կյանքին սպառնացող վտանգները, մեղմացվեն:⁵⁶ Սա համահունչ է Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված մարմնի պարտավորությանը՝ պաշտպանելու և խթանելու կալանավորված անձանց և անձնակազմի առողջությունն ու բարեկեցությունը, հատկապես այն դեպքերում, երբ վտանգը կանխատեսելի է:⁵⁷

Սա պահանջում է, որ լիազոր մարմինները ձեռնարկեն հիմնական և անհրաժեշտ նախազգուշական միջոցներ՝ անդրադառնալու առողջության և անվտանգության հայտնաբերված ռիսկերին և կանխելու կյանքի կամ առողջության համար վտանգավոր իրավիճակները:⁵⁸

Կարևոր է, որ իրավասու մարմինները կալանավայրեր ժամանելուն պես, անձանց ի սկզբանե խուզարկեն անձի արժանապատվության ու մասնավոր կյանքի անձեռնմխելիության նկատմամբ հարգանքի և խրախուսման պայմաններում, որպեսզի օրենքով արգելված ցանկացած իր, օրինակ՝ ապօրինի զենքը, բացահայտվի և առգրավվի:

2.2. Հաշվառում

Դատարանը բազմիցս ընդգծել է ազատությունից զրկված անձանց վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության գրանցման կարևորությունը, որպեսզի կալանքը օրինական լինի Կոնվենցիայի 5.1-րդ հոդվածի համաձայն և հարգի անձի իրավունքը՝ վերանայելու կալանքի օրինականությունը Կոնվենցիայի 5.4-րդ հոդվածով:⁵⁹ Հետևաբար, ճշգրիտ գրանցումը կարևոր երաշխիք է կամայական կալանքից և առանց հաղորդակցության միջոցների կալանքից:⁶⁰

Հաշվառումը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները, սակայն չպետք է սահմանափակվի դրանցով.

- ▶ անձի ինքնությունը (անուն, ազգանունը, սեռը, ծննդյան ամսաթիվը և փաստաթղթերից կամ համաձայն անձի հայտարարագրում նշված տեղեկությունների՝ անձի ազգությունը կամ ծագման երկիրը կամ քաղաքացիություն չունենալու կարգավիճակը) և առնչվող այլ տեղեկություններ (լեզու, հավատք, սննդակարգի վերաբերյալ տեղեկատվություն, և այլն),
- ▶ արդյոք անձը դիմել է միջազգային պաշտպանության/ապաստանի համար,
- ▶ ամսաթիվը, ժամը և վայրը, որտեղ անձը զրկվել է ազատությունից, և պատասխանատու մարմնի ինքնությունը,
- ▶ կալանավորումը պատվիրած մարմինը (վարչական կամ դատական ազգային մարմինը, որը կայացրել է կալանքի որոշումը),
- ▶ կալանավորման վայրը, հաստատություն ընդունվելու ամսաթիվը և ժամը և կալանավայրի պատասխանատու մարմինը,
- ▶ հնարավոր տարրեր, որոնք վերաբերում են տվյալ անձի առողջական վիճակին, և արդյոք անձն ունի հատուկ կարիքներ,
- ▶ անձին պատկանող իրերի գույքագրում (անձի ունեցած իրերը կալանավայր մուտք գործելիս, մասնավորապես ցանկացած թանկարժեք իրեր, էլեկտրոնային սարքեր, ուղեբեռի իրեր, դեղորայք կամ կանխիկ գումար), և արդյոք այդ իրերը մնացել են տվյալ անձի մոտ կամ պահպանության են հանձնվել լիազոր մարմինների կողմից);⁶¹
- ▶ անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխումը մեկ այլ հաստատություն կամ այնտեղից (ներառյալ կալանքի սկզբնական վայրը և տեղափոխման համար պատասխանատու մարմինը),
- ▶ անհրաժեշտության դեպքում՝ տեղեկատվություն տվյալ անձի հարազատների կամ երեխաների մասին, հատկապես, եթե կալանավորված է ընտանեկան խմբի մեկից ավելի անդամ:⁶²

Անհրաժեշտության դեպքում պետք է առաջարկել թարգմանչի օգնությունը, ով կարող է հաղորդակցվել կալանավորված անձի համար հասկանալի լեզվով/բարբառով, անհրաժեշտության դեպքում հաշվառումը իրականացնելու համար: Այս ծառայությունը կարող է տրամադրվել անձամբ կամ հեռակա կարգով՝ հեռախոսով և կիրառելի է այլ իրավիճակներում, երբ թարգմանչի կարիք կա, օրինակ՝ առողջապահական կամ իրավաբանական խորհրդատվության պարագայում:

Հաշվառման փաստաթուղթը պետք է հասանելի լինի տվյալ անձի համար:⁶³ Հասանելիությունը կարող է ապահովվել՝ անձին տրամադրելով արձանագրության կրկնօրինակը կամ նրա խնդրանքի դեպքում՝ նրա համար հասանելի դարձնելով արձանագրությունը:

Ազգային օրենսդրությամբ սահմանված օրինական շահեր ունեցող երրորդ անձանց, ինչպիսիք են կալանավորված անձանց հարազատները, նրանց ներկայացուցիչները, իրավաբանները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, հաշվառման փաստաթղթի հասանելիությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է երաշխավորված լինի տվյալ անձի անձնական կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի պաշտպանության ներքո:

2.3. Ժամանման վերաբերյալ տեղեկատվություն

Կալանքի տակ գտնվողների պահման վայրի ներքին կանոնների և տվյալ անձի իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվությունը պետք է տրամադրել անհապաղ կալանավայր ժամանելուց հետո, այսինքն՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածում:

2.4. Բժշկական զննում

Մարդկանց կալանքի տակ վերցնելու պահից իրավասու մարմինները պատասխանատվություն են կրում ցանկացած վատ վերաբերմունքի համար, որին վերոնշյալ անձինք կարող են ենթարկվել:⁶⁴ Հետևաբար, նրանք պետք է կալանավորված անձանց կալանավայր ժամանելուց հետո որքան հնարավոր է արագ առաջարկեն ֆիզիկական և հոգեկան առողջության անհատական բժշկական զննում:⁶⁵

Բժշկական զննումը ունի հետևյալ նպատակները.

- ▶ ստուգել տվյալ անձին՝ հայտնաբերելու ցանկացած վարակիչ հիվանդություն՝ պաշտպանելու համար հանրային առողջությունը (օրինակ՝ Քովիդ-19) և, մասնավորապես, այլ կալանավորված անձանց, նրանց հետ շփվող անձնակազմի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առողջությունը:
- ▶ բացահայտել բժշկական կարիքները և խոցելիությունը, որոնք պահանջում են հատուկ բժշկական օգնություն և ուշադրություն, մասնավորապես՝ խանգարումներ, հաշմանդամություն, հղիություն կամ վերարտադրողական առողջության, թմրամոլության, տարիքի, վնասվածքի կամ ինքնավնասման ռիսկի հետ կապված այլ խնդիրներ:⁶⁶
- ▶ գնահատել և խորհրդատվություն տալ այն մասին, թե արդյոք կալանավորումը տեղին է կամ շարունակում է այդպիսին լինել բժշկական տեսանկյունից:⁶⁷

Բժշկական այս զննումը պետք է իրականացնել բժշկի կամ լիարժեք որակավորված բուժքրոջ կողմից, որը հնարավորինս շուտ զեկուցում է բժշկին ընդունումից հետո: Բժշկական զննումը չպետք է անհիմն միջամտի տվյալ անձի հիմնարար իրավունքներին:

Բժշկական զննման արդյունքները պետք է ամբողջությամբ գրանցվեն: Բժշկական հաշվառումը պետք է առնվազն պարունակի տեղեկատվություն տեսանելի վնասվածքների կամ նախկինում վատ վերաբերմունքի մասին, սեռական բռնության կամ բռնության այլ ձևերի մասին, ներառյալ գենդերային հենքով բռնությունը, որը տեղի է ունեցել մինչև ընդունումը, փոխանցվող հիվանդությունները, ինչպիսիք են Քովիդ-19-ը, տուբերկուլյոզը, քոսը, կարմրուկը, հեպատիտը կամ ՄԻԱՎ-ը, քրոնիկ հիվանդությունները, ինչպիսիք են շաքարային դիաբետը կամ էպիլեպսիան, կամ կալանավորված անձի կողմից կամավոր տրամադրված ցանկացած այլ տեղեկություն:⁶⁸ Լիազոր մարմինները պետք է հաշվի առնեն, որ բժշկական զննման ժամանակ առաջին շփման ընթացքում մարդիկ հնարավոր է չցանկանան հաղորդակից դարձնել իրենց տրավմատիկ փորձառությամբ: Հետագա առողջապահական խնամքը պետք է հասանելի լինի և տրամադրվի զննման միջոցով բացահայտված խնդիրների դեպքում:

Վնասվածքների և մեղադրանքների մասին տեղեկությունները, որոնք համապատասխանում են նման վնասվածքներին, որոնք վկայում են վատ վերաբերմունքի, սեռական բռնության կամ այլ բռնության մասին, պետք է անհապաղ և համակարգված կերպով ներկայացվեն համապատասխան ազգային մարմինների ուշադրությանը՝ անկախ տվյալ անձի ցանկությունից:⁶⁹

Հիշեք.

Կարևոր է հարգել բոլոր կալանավորված անձանց բարեկեցությունն ու անվտանգությունը կալանավայր ժամանելու պահից՝ հավաքելով և գրանցելով համապատասխան տեղեկատվություն և անցնելով անհրաժեշտ ընթացակարգեր, ինչպիսիք են.

- ▶ անձի օրինական խուզարկություն՝ ապօրինի իրերը հայտնաբերելու նպատակով,
- ▶ բացատրել իրենց իրավունքները իրենց համար հասկանալի լեզվով,
- ▶ բացատրել կալանավայրի կանոններն ու ընթացակարգերը իրենց հասկանալի լեզվով,
- ▶ հիմնական տեղեկությունների գրանցում, ինչպիսիք են անձանց ինքնությունը, առողջական կարիքները, կրոնական կարիքները և անհատական դեպքերի մանրամասները,
- ▶ ժամանումից հետո 24 ժամվա ընթացքում համալիր բժշկական զննում իրականացնել՝ վիճակը գնահատելով մշակութային առանձնահատկությունների նկատմամբ զգայուն կերպով և խոշտանգումների կամ տրավմայի հնարավորությունը հաշվի առնելով:

Գործիքակազմ/հետազա ընթերցում

- ▶ ԽԿԿ (CPT) այցի հաշվետվությունների, հրապարակային հայտարարությունների և չափանիշների հավաքագրում
- ▶ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար ՄԱԿ ՓՀԳՀ (UNHCR), Ապաստան հայցողների և կալանավորման այլընտրանքների վերաբերյալ կիրառելի չափորոշիչների և չափանիշների վերաբերյալ ուղեցույցներ, 2012թ.
- ▶ ՄԱԿ ՓՀԳՀ (UNHCR), Միջազգային կալանավորման կոալիցիա. Խոցելիության զննման գործիք, որը կիրառվում է ապաստանում և միգրացիոն համակարգերում, 2016թ.
- ▶ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն. Միգրացիոն կալանքի տակ գտնվող անձանց առողջապահական մարտահրավերներին անդրադառնալը և կալանավորման այլընտրանքները. երկրում իրականացման ուղեցույց, 2022թ.

Գլուխ 3

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցության հասանելիությունը մարդու իրավունքների չափանիշներց է, որը կիրառելի է ազատությունից զրկելու ցանկացած իրավիճակի համար և ներգաղթի կալանքի պայմանները գնահատելիս պետք է դիտարկվի որպես որոշիչ տարր:⁷⁰

3.1. Տեղեկատվության տրամադրում կալանավորված անձանց

Կալանավորված անձինք պետք է տեղյակ լինեն իրենց իրավական կարգավիճակի և կալանքի պայմանների մասին, ներառյալ այն սուբյեկտիվ իրավունքները, որոնցից նրանք օգտվում են կալանքի տակ գտնվելու ժամանակ:⁷¹

i. Տեղեկություններ, որոնք տրամադրվում են ազատությունից զրկելուց հետո

Անձին ազատությունից զրկելու մասին որոշում կայացնելու առաջին իսկ պահից երկրի իշխանությունները պետք է տվյալ անձին, իրեն հասկանալի լեզվով, տեղեկացնեն նրա ձերբակալման պատճառների և համապատասխան իրավական հիմքերի մասին:

Անձի կալանավորման հիմքերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հնարավորինս մանրամասն լինի:⁷² Հետևաբար, տեղեկատվությունը պետք է վերաբերի տվյալ անձի կոնկրետ անհատական իրավիճակին և առնվազն պետք է ներառի հետևյալը.

- ▶ Ինչու է նա ձերբակալվում կամ կալանավորվում,
- ▶ Ինչ հիմքերով է նա կալանավորվում,
- ▶ Ով է որոշում կայացրել նրա կալանավորման մասին,
- ▶ Նրա կալանավորման հնարավոր տևողությունը,
- ▶ Կալանքի վայրը:

Ի հավելումն կալանքի հիմքերին, կալանավորված անձին պետք է տեղեկացնել իր դատավարական իրավունքների մասին, մասնավորապես.

- ▶ իրավաբանական օգնության և ներկայացուցչության իրավունք,
- ▶ ապաստան կամ միջազգային կամ ազգային պաշտպանության
- ▶ այլ ձևեր և հեռացումից պաշտպանություն խնդրելու իրավունք,
- ▶ հյուպատոսական մարմինների և (կամ) իր ընտրած անձի հետ կապվելու իրավունք,
- ▶ թարգմանչին հասանելիության իրավունք,
- ▶ լսվելու և կալանավորման որոշումը կամ հրամանը արդյունավետորեն վիճարկելու իրավունք անկախ մարմնում կամ դատարանում:

ii. Տեղեկություններ կալանավայր ժամանելու վերաբերյալ

Ներքին կանոնների մասին կալանավորված անձինք պետք է տեղեկացվեն ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով: Ներքին կանոնները պետք է հիմնականում տեղեկատվական բնույթ կրեն և անդրադառնան կալանքի առօրյային առնչվող հարցերի, իրավունքների և պարտականությունների ամենալայն շրջանակին: ⁷³

Ներքին կանոնների վերաբերյալ տրամադրվող տեղեկատվությունը պետք է ներառի, սակայն չսահմանափակվի հետևյալով.

- ▶ հանրային օբյեկտների օգտագործում, ինչպիսիք են հանգստի սենյակները, գրադարանները, բացօթյա տարածքները, ծխելու վայրերը, ճաշարանները, խոհանոցները և սանհանգույցները,
- ▶ սննդի տրամադրման ժամանակացույց,
- ▶ անձնական իրեր, որոնք կարող են վերցվել և պահվել ադմինիստրացիայի կողմից անվտանգության նկատառումներով,
- ▶ կարգապահական ընթացակարգեր և արտակարգ իրավիճակի միջոցառումներ,
- ▶ անձնակազմի անդամների դերը (ժամանց, մաքրում, կառավարում, և այլն),
- ▶ արտաքին տեսակցությունների ռեժիմ:

Կալանավորված անձինք պետք է տեղյակ լինեն կալանավայրում գտնվող իրենց իրավունքների և պարտականությունների մասին, մասնավորապես.

- ▶ տեղեկատվություն ստանալու և արտաքին աշխարհի հետ շփվելու իրավունք, օրինակ՝ իրենց հարազատների, ներկայացուցիչների և փաստաբանների հետ,
- ▶ տեսակցություններ ստանալու իրավունք,
- ▶ համապատասխան առողջապահական խնամքի, ներառյալ հոգեբանական կամ հոգեբուժական խնամքի հասանելիության իրավունք,

- ▶ վատ վերաբերմունքի կամ իրենց կալանքի պայմանների հետ կապված որևէ հարցի, ներառյալ գենդերային բռնության և խտրականության հատուկ ձևերի մասին բողոքելու իրավունք,
- ▶ ներքին կանոնները հարգելու պարտականություն,
- ▶ այլ կալանավորված անձանց, անձնակազմի կամ երրորդ անձանց նկատմամբ բռնության ցանկացած ձևից զերծ մնալու պարտականություն,
- ▶ այլ կալանավորված անձանց անձնական տարածքը հարգելու պարտականություն:

Կալանավորված անձանց պետք է տրամադրվեն համապատասխան միջոցների և առկա ծառայությունների վերաբերյալ կոնտակտային տվյալները:

iii. Կալանքի ընթացքում տրամադրվող տեղեկատվություն

Կալանավորման ընթացքում կալանավորված անձինք պետք է պատշաճ կերպով տեղեկացված լինեն ընթացակարգի առաջընթացի մասին, մասնավորապես.

- ▶ կալանքի օրինականության և (կամ) պայմանների վերանայում,
- ▶ նրանց ապաստանի կամ միջազգային պաշտպանության դիմումի առաջխաղացում,
- ▶ ցանկացած հեռացման և դրա մանրամասների օրինականության վերանայում,
- ▶ հեռացման ցանկացած ընթացակարգի հետագա զարգացում,
- ▶ նրանց հնարավոր վերամիավորումը ընտանիքի այլ անդամների հետ:

iv. Տեղեկատվություն ազատ արձակելիս

Ազատ արձակվելուց հետո իշխանություններին խրախուսվում է մարդկանց տրամադրել ընդունող երկրի մասին գործնական տեղեկատվական թերթիկներ (օրինակ՝ շտապ օգնության, ապաստարանների և համապատասխան ՀԿ-ների, ներկայացուցիչների, իրավաբանների և այլնի հեռախոսահամարներ և կոնտակտային տվյալներ):

3.2. Ինչպես ապահովել կալանավորված անձանց տեղեկացվածությունը

Կալանավորված անձինք կարող են տեղեկացված լինել տեղեկատվության տրամադրման ընդհանուր միջոցներով և տեղեկատվության տրամադրման անհատական միջոցներով: Այս երկու միջոցների արդյունավետ օգտագործումը թույլ կտա կալանավորված անձին հասկանալու իր իրավիճակը:

i. Կալանավայրում տեղեկատվության տրամադրման ընդհանուր միջոցներ

Ընդհանուր միջոցներով տեղեկատվության տրամադրումը կարող է իրականացվել կալանավորվածների կալանավայր ժամանելու պահին՝ բոլոր կալանավորված անձանց տեղեկատվական թերթիկներ բաժանելու և կալանավայրում տեղեկատվությունը մշտապես հրապարակայնորեն ցուցադրելու միջոցով:

Ընդհանուր միջոցներով տրամադրվող տեղեկատվությունը պետք է հասանելի լինի լայնորեն խոսվող լեզուներով, օրինակ՝ անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, ռուսերեն, չինարեն, իսպաներեն, ուրդուերեն կամ պարսկերեն: Այդուհանդերձ, իրավասու մարմիններն ավելի մեծ ճկունություն ունեն որոշելու՝ արդյոք օգտագործել այլ լեզուներ տվյալ կալանավայրում ընդհանուր տեղեկատվության տրամադրման համար:

ii. Տեղեկատվության տրամադրման անհատական միջոցներ

Ի լրումն վերը նկարագրված տեղեկատվության տրամադրման ընդհանուր միջոցների, իրավասու մարմինները պետք է անհատական տեղեկատվություն տրամադրեն բոլոր կալանավորված անձանց: Այս պարտավորությունը հատկապես կարևոր է, երբ տվյալ անձը ունի կարդալու, լեզվական կամ հասկանալու դժվարություններ, բռնության կամ թրաֆիքինգի զոհ է կամ խոցելի է կամ ունի մտավոր հաշմանդամություն: Երեխաների դեպքում տեղեկատվությունը պետք է փոխանցել նրանց տարիքին և հասունությանը հարմարեցված ձևով, նրանց հասկանալի լեզվով, և որը գենդերային և մշակութային առումով զգայուն է:⁷⁴ Համապատասխան տեղեկատվությունը տրամադրելիս պետք է ապահովվել համապատասխան մեկնաբանություն:

Բոլոր որոշումները (այդ թվում՝ միջանկյալ)՝ կապված կալանավորման կամ ազատ արձակման, կալանքի պայմանների, ապաստանի դիմումի և այլ վարույթների հետ, ինչպես նաև այդօրինակ որոշումների իրագործման եղանակները պետք է անձնապես հաղորդվեն խնդրո առարկա անձին՝ անկախ այն բանից, թե արդյոք տվյալ վարույթը անձը նախաձեռնել է ինքն իր կողմից, թե իր պատասխանատվության տակ գտնվող անձանց անունից:⁷⁵

3.3. Արտաքին հաղորդակցություն և կապ

Կալանավորված անձանց արտաքին աշխարհի հետ շփվելու ունակությունը կարևոր է: Իրավասու մարմինները պետք է ամեն ինչ անեն նման հաղորդակցությունը հեշտացնելու համար՝ գործադրելով բոլոր գործնական միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ նպատակին հասնելու համար: Նման հաղորդակցությունը կսահմանափակի կալանավորման արդյունքում առաջացած որոշ բացասական ազդեցությունները:

Ո՞րն հետ կարող են շփվել կալանավորված անձինք:

Կալանքի տակ գտնվող անձանց պետք է թույլ տալ կանոնավոր կերպով շփվել հաստատությունից դուրս ցանկացած անձի հետ:

Ինչպե՞ս պետք է նրանք կարողանան շփվել:

Համապատասխան պետական մարմիններն իրավասու են՝ որոշելու ամենաարդյունավետ միջոցները՝ երաշխավորելու, որ կալանավորները կապ են պահպանում արտաքին աշխարհի հետ:

Դրանք կարող են ներառել.

- ▶ հասանելիություն հեռախոսային խցիկներին (հեռախոսային քարտեր ձեռք բերելու հնարավորությամբ),
- ▶ հասանելիություն ֆիքսված հեռախոսներին (համապատասխան սենյակներում);
- ▶ բջջային հեռախոսների օգտագործում⁷⁶ (ներառյալ ինտերնետային զանգերը), ⁷⁷
- ▶ ինտերնետ կապի հասանելիություն (wi-fi) կամ հասանելիություն համակարգչային սենյակին,
- ▶ նամակների առանց ուշացման առաքում, ինչպես նաև թղթի և մատիտի տրամադրում:

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը չպետք է վերահսկվի կամ փոփոխվի որևէ կերպ կամ ձևով (գրաքննությամբ)՝ հարգելով կալանավորված անձանց անձնական կյանքի անձեռնմխելիությունը (օրինակ՝ տեսակցությունների կամ հեռախոսազանգերի ձայնագրման անթույլատրելիություն, էլեկտրոնային նամակների կամ նամակների կարդալու բացարձակ արգելք և այլ միջոցառումներ): Այնուամենայնիվ, իրավասու մարմինները կարող են սահմանափակել կալանավորված անձանց շփվելու հնարավորությունը, երբ կան անվտանգության և կարգուկանոնին առնչվող հիմնավոր պատճառներ: Նման սահմանափակումները կարող են ներառել յուրաքանչյուր անձի համար համացանցից կամ համակարգչից օգտվելու համար սահմանված առավելագույն ժամանակ՝ բոլոր կալանավորված անձանց համար հաղորդակցության նման տեսակների հավասար հասանելիություն, արգելված իրերի (թմրամիջոցներ, ատրճանակներ և այլն) հետ կապի ստուգում ապահովելու համար) կամ արգելափակել մուտքը դեպի արգելված կայքեր: Ամեն դեպքում, սահմանափակումները չպետք է կիրառվեն որպես կարգապահական միջոց կամ այնպիսի ձևով, որը խաթարում կամ անարդյունավետ է դարձնում հաղորդակցվելու իրավունքից օգտվելը:

i. Տեսակցություններ

Կալանավորված անձանց պետք է թույլ տալ տեսակցություններ ունենալ իրենց ընտրությամբ ցանկացած անձի հետ: Կալանավայրը պետք է

ողջամտորեն հասանելի լինի՝ թույլ տալու ընտանիքի անդամների կանոնավոր տեսակցությունները (ամուսնական, արտամուսնական կամ դե ֆակտո հարաբերություններ),⁷⁸ ընկերների, համայնքային աջակցության խմբերի և փաստաբանների համար:⁷⁹ Անձանց պետք է առաջարկել շաբաթական մի քանի անգամ տեսակցություններ ստանալու հնարավորություն:

Անձինք պետք է տեղեկացվեն, որ նրանք ազատ են հրաժարվել տեսակցություններից: Այցելուներին, հատկապես ընտանիքի անդամներին, չպետք է ինքնաբերաբար թույլատրել այցելել առանց կալանավորված անձի նախնական համաձայնության: Սա հատկապես կարևոր է այն մարդկանց նկատմամբ, ովքեր ենթարկվել են գենդերային կամ ընտանեկան բռնության:⁸⁰

Տեսակցության պայմանները պետք է հարգեն գաղտնիությունը և տեղի ունենան բաց պայմաններում (օրինակ՝ չպետք է օգտագործվեն ապակե միջնապատեր և էկրաններ):⁸¹ Տեսակցությունների կազմակերպումը և ընթացակարգերը պետք է խրախուսեն այցելության բարենպաստ միջավայրը (օրինակ՝ կլոր սեղանի օգտագործումը անձեռնմխելիությունը հարգելու համար): Նման միջոցները պետք է հաշվի առնեն ցանկացած երեխայի լավագույն շահերը և համապատասխանաբար հարմարեցվեն⁸², օրինակ, տեսակցությունների սենյակները կարող են ներառել երեխաների համար նախատեսված խաղահրապարակ:

Սահմանափակումները կարող են անհրաժեշտ լինել անվտանգության և կարգուկանոնի նկատառումներով: Օրինակ, տեսակցությունների կամ տեսակցողների թիվը կարող է սահմանափակ լինել, կամ տեսակցությունները թույլատրվել միայն որոշակի ժամերի: Սահմանափակումները կարող են կիրառվել նաև հանրային առողջության նկատառումներից ելնելով (օրինակ՝ Բուլիդ-19-ի կանխարգելման միջոցառումները) կամ հասարակական կարգի պահպանման անհրաժեշտության համար: Տեսակցությունները կարող են սահմանվել համաձայն թույլտվության: Որոշակի անձի տեսակցության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է լինի բացառիկ, եթե դա անհրաժեշտ է, և որոշվի անհատական գնահատման հիման վրա:⁸³ Նման սահմանափակումները չպետք է կիրառվեն որպես կարգապահական միջոցներ կամ այնպիսի ձևով, որը խաթարում է տեսակցվելու իրավունքի էությունը:

ii. Երրորդ կողմի հետ կապ հաստատելը

Կալանավորված անձինք իրավունք ունեն շփվելու առանց անհարկի սահմանափակումների.

- ▶ իրենց փաստաբանի կամ համապատասխանաբար որակավորված այլ անձի հետ,
- ▶ հյուպատոսական աջակցության իրենց ազգային մարմինների հետ (ըստ պահանջի),
- ▶ երկրում գործող կազմակերպությունների և մարմինների հետ (մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատություններ, օմբուդսմեններ, հանձնակատարներ),

- ▶ մշտադիտարկում իրականացնող մարմինների հետ (օրինակ՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ) կամ ազգային կանխարգելիչ մեխանիզմներ),
- ▶ միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) կամ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓՀԳՀ) ներկայացուցիչները, ներառյալ կազմակերպությունները, որոնք ՄԱԿ ՓՀԳՀ-ի կողմից լիազորված են համաձայնագրի համաձայն և աշխատում են այդ պետության տարածքում ՄԱԿ ՓՀԳՀ-ի անունից,
- ▶ ոլորտում իրավասու և ընդունող պետության կողմից հավատարմագրված համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

Նման հասանելիությունը ներառում է անվճար հաղորդակցություն և այցելություններ այդ մարմիններից և կազմակերպություններից:

Ավելին, յուրաքանչյուր կալանավորված անձ իրավունք ունի անհատական դիմում ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ ներառյալ միջանկյալ միջոցներ հայցելը: Դիմում ներկայացնելու այս իրավունքը չպետք է որևէ կերպ սահմանափակվի կամ խոչընդոտվի: Հաղորդակցման ցանկացած խոչընդոտ կամ անձի բողոքը հետ կանչելու կամ փոփոխելու ցանկացած ճնշում խախտում է դիմում ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրականացման իրավունքը:⁸⁴

Իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ հայտ ներկայացնելու միջոցների հասանելիությունն արդյունավետ լինի, օրինակ՝

- ▶ բոլոր նամակները պետք է անհապաղ փոխանցվեն առանց դրանք բացելու, 85
- ▶ աջակցություն պետք է առաջարկել՝ հասանելիություն և համապատասխան փաստաթղթերի պատճեններ ստանալու համար, 86
- ▶ պետք է դյուրացվեն բոլոր անհրաժեշտ բժշկական հետազոտությունները: 87

Միգրանտներին կալանավորելու համատեքստում ժամանակավոր միջոցների հրատապ պահանջ ներկայացնելը հատկապես կարևոր է, երբ անձի հեռացումն առկա է (պլանավորված կամ նախատեսված): Այս իրավիճակներում դիմումատուն հաճախ բախվում է լուրջ, անդառնալի վնասի իրական ռիսկի, եթե միջանկյալ միջոցների վերաբերյալ որոշում չկայացվի և դրանք չպահպանվեն:

Հիշեք.

Ապահովելու համար, որ կալանավորված անձինք լիովին տեղյակ լինեն իրենց իրավական իրավիճակի և իրավունքների մասին, կարևոր է նրանց տրամադրել հիմնական տեղեկատվություն այս հարցերի վերաբերյալ ինչպես կալանքի վայր ժամանելուն պես, այնպես էլ դրանից հետո, երբ կիրառելի է կամ ըստ պահանջի, ինչպիսիք են.

- ▶ հասանելիություն իրավաբանին,
- ▶ իրավական ներկայացուցչության իրավունք,
- ▶ ազատ հասանելիություն թարգմանչին,
- ▶ կալանքի և ներգաղթի գրավի մերժման պատճառներ,
- ▶ կալանավորման կամ կալանքը պահպանելու որոշումը վիճարկելու իրավունք,
- ▶ իրենց ներգաղթի գործի վերաբերյալ ընթացիկ զարգացումներ,
- ▶ հյուպատոսական մարմինների հետ ազատ կապի իրավունք,
- ▶ արտաքին աշխարհի հետ շփվելու և հեռախոսային սարքերի
- ▶ վերաբերյալ տեղեկատվության իրավունք,
- ▶ առողջության և անվտանգության ընթացակարգեր,
- ▶ կալանքի վայրի կանոններ,
- ▶ կարգապահական և արտակարգ միջոցներ,
- ▶ անձնակազմի և անկախ մշտադիտարկում իրականացնող
- ▶ մարմինների դերը,
- ▶ տեսակցությունների ռեժիմ,
- ▶ բողոքների ներկայացման մեխանիզմներ,
- ▶ սննդի ժամանակացույց,
- ▶ բացօթյա տարածքների, գրադարանների, ծխելու վայրերի
- ▶ և խոհանոցների օգտագործում,
- ▶ մատչելի կրթական և ժամանցային գործունեություն,
- ▶ սանհանգույցների օգտագործում:

Կալանավորված անձանց արտաքին կապի արդյունավետ հասանելիությունն ապահովելու համար իրավասու մարմիններին խրախուսվում է.

- ▶ դյուրացնել անվճար Wi-Fi կապի հասանելիությունը առնվազն կալանավայրերի ընդհանուր տարածքներում,
- ▶ կալանավորված անձանց համար ապահովել բջջային հեռախոսի քարտեր առանց սահմանափակումների գնելու հնարավորություն,
- ▶ հստակ և տեսանելի ձևով նշել կալանավայրի փոստային հասցեն, որտեղ կարող են դիմել փոստային ծառայությունների համար:
- ▶ հստակ և տեսանելի ձևով նշել իրավասու իրավաբանական ծառայությունների, ներառյալ փաստաբանների ասոցիացիաների, կալանավորված անձանց սոցիալական, հոգեբանական և իրավական աջակցություն տրամադրող համապատասխան ՀԿ-ների և տվյալ անձանց ծագման երկրի հյուպատոսական ծառայությունների կոնտակտային տվյալները (հասցե, էլ. փոստ, հեռախոսահամար).
- ▶ ապահովել նամակների բաշխումը կալանավայրում ամենաարդյունավետ ձևով,
- ▶ համոզվել, որ թարգմանիչները հասանելի են,
- ▶ տարածել և ցուցադրել ներքին կանոնների թարգմանությունները և այլն,
- ▶ տրամադրել թուղթ և մատիտներ:

Գործիքակազմ/հետագա ընթերցում

- ▶ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե, *Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուղեցույցները երեխաների համար բարենպաստ արդարադատության վերաբերյալ*, Նոյեմբեր 2010թ.
- ▶ ԽԿԿ (CPT) այցերի հաշվետվությունների, հրապարակային հայտարարությունների և չափորոշիչների հավաքածու
- ▶ Եվրոպայի խորհուրդ, *Ինչպես փոխանցել երեխաներին հարմար տեղեկատվություն միգրացիայի մեջ գտնվող երեխաներին. ձեռնարկ առաջին գծի մասնագետների համար*, 2018թ.
- ▶ HELP առցանց դասընթաց փախստական և միգրանտ երեխաների վերաբերյալ

Գլուխ 4

ԿԱԼԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային իրավունքում հաստատել է, որ վարչական կալանքի պայմանները չպետք է խախտեն Կոնվենցիայի Հոդված 3-ը:⁸⁸ Սա նախատեսում է, որ պետությունները ոչ մի դեպքում չպետք է որևէ անձի ենթարկեն խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, և պետք է պաշտպանեն կալանավորված անձանց ֆիզիկական և մտավոր բարեկեցությունը:⁸⁹ Կոնվենցիայից բխող անդամ պետությունների պարտավորություններին համապատասխանելու համար իրավասու մարմինների համար կարևոր է ապահովել, որ ներգաղթի կալանքի պայմանները համապատասխանեն նվազագույն չափանիշներին:⁹⁰ Ինչպես արդեն նշվել է, կալանքի պայմանները կարող են չհիմնավորված համարել կալանքը Կոնվենցիայի 5.1-րդ հոդվածի համաձայն:

Կալանավորման պայմանները վերաբերում են մի շարք հարցերի, ներառյալ առողջապահական, սանիտարահիգիենիկ, սննդի և խմելու ջրի, հագուստի և անկողնային պարագաների, ազատ ժամանակի և ժամանցի:

Քանի որ ներգաղթի կալանքը նույն նպատակը չունի, ինչ քրեական արդարադատությամբ ազատազրկումը, կալանավորված անձինք պետք է կալանավայրում բաց ռեժիմով օգտվեն ազատության որոշակի ձևից: Սա ենթադրում է, որ կալանավայրերը պետք է ունենան բավարար տարածք, որպեսզի մարդիկ կարողանան ազատ և անվտանգ տեղաշարժվել, միևնույն ժամանակ անհրաժեշտ է խուսափել նրանց տեղաշարժի սահմանափակումների կիրառումից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արդարացված է կարգուկանոնի և անվտանգության նկատառումներից և հիմնված է ազգային և միջազգային իրավունքի համաձայն նախաձեռնած ռիսկի արդարացի գնահատման վրա:⁹¹

4.1. Համապատասխան շինություններ

i. Կալանքի կենտրոններ

Կալանավայրերը պետք է լինեն ապահով և հիգիենիկ⁹² և պետք է պաշտպանեն կալանավորված անձանց ոչ արժանապատիվ և անմարդկային

վերաբերմունքից: Այս չափանիշները խթանելու և պահպանելու համար պետք է երաշխավորվել հետևյալը.

- ▶ անվտանգ և հարմար կառույց, որը չունի պատժախցի կամ բանտի տեսք⁹³ (օրինակ՝ սենյակները չպետք է լինեն խցի նման՝ ծանր դռներով, անձնակազմը չպետք է կրի ֆիզիկական զսպման գործիքներ, սնունդը չպետք է բաշխել «սննդի պատուհանիկից», պետք է խուսափել բարձր պատերից և այլն),
- ▶ բաց ռեժիմ⁹⁴ և տեղաշարժի սահմանափակումներից խուսափում, եթե այն հիմնավորված չէ կարգուկանոնի և անվտանգության պահպանման անհրաժեշտությամբ,
- ▶ խուսափել գերբնակեցումից՝ ունենալով և պահպանելով միաժամանակ կալանավայր ընդունվող անձանց թվաքանակի սահմանափակում,⁹⁵
- ▶ գիշերվա ընթացքում արհեստական լույսն անջատելու կամ բնական լույսն արգելափակելու հնարավորություն, ինչպես նաև քնի հնարավորություն՝ առանց անհիմն աղմուկի,
- ▶ կանանց տեղավորել տղամարդկանցից առանձին՝ երաշխավորելով երկու խմբի անձնական անձեռնմխելիությունը,⁹⁶
- ▶ ապահովել հագուստ, կանխիկ դրամ և այլ անձնական իրեր պահելու համար ապահով հարմարություններ, ինչպես օրինակ՝ կողպվող անձնական տարածքներ (պահատուփեր),⁹⁷
- ▶ անձնական փաստաթղթերն ու նամակագրությունը ապահով ստանալու և պահելու հնարավորություն⁹⁸ (կարևոր է հիշել, որ կալանավորված անձինք կարող են դիմել իրավաբանական խորհրդատվության կամ անցնում են իրավական գործընթացներ: Հետևաբար, ակնկալվում է, որ նրանք նամակագրության մեջ կլինեն իրենց օրինական ներկայացուցիչների հետ: Նման նամակագրությունը, ներառյալ փաստաբաններին ուղարկված և ստացված նամակները, և փաստաթղթերը, ենթակա են օրենքով արտոնության և չեն կարող խուզարկվել կամ առգրավվել):⁹⁹
- ▶ համապատասխան կահավորում,¹⁰⁰ լուսավորություն (այդ թվում՝ բնական լույս), ջեռուցում, զովացում, մաքուր օդի շրջանառություն և օդափոխության համակարգեր,¹⁰¹
- ▶ հանգստի և բնական կարիքների անհրաժեշտության համար բավարար և համապատասխանաբար մատչելի հարմարություններ,¹⁰²
- ▶ ախտահանված բնակելի տարածքներ, որոնք գտնվում
- ▶ են բարեկարգ վիճակում, ¹⁰³
- ▶ անսարքության արագ հայտնաբերում և արձագանքում, ¹⁰⁴
- ▶ մարզվելու համար բավականաչափ տարածք, ներառյալ դրսում, ¹⁰⁵ պատշաճ կերպով կահավորված և հարմարեցված տարածքներ այդ վարժությունների համար,¹⁰⁶
- ▶ զույգերին տեղավորել այնտեղ, որտեղ երկուսն էլ համաձայն են,¹⁰⁷
- ▶ պետք է հարգել ընտանիքի միասնության սկզբունքը, բացառությամբ, երբ դա չի բխում ընտանիքի անդամի շահերից (օրինակ՝ ընտանեկան բռնության մասին պնդումների/ցուցումների դեպքերում):¹⁰⁸

Դատարանի համապատասխան նախադեպային իրավունք

«Տուրդիխոջանն ընդդեմ Ուկրաինայի»¹⁰⁹ գործով հայցվորը պնդում էր, որ իր ազատագրված պայմաններն այնպիսին էին, որ բացակայում էր օգափոխությունը և չկար անձնական տարածք: Դատարանը գտել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ հայցվորին 2 մ²-ից պակաս անձնական տարածք ունեցող խցում պահելու պատճառով:

«Դուգոզն ընդդեմ Հունաստանի»¹¹⁰ գործով Դատարանը գտավ, որ անհատի կալանավորումը գերբնակեցվածության պայմաններում, առանց քնելու հարմարանքների և աննախադեպ կալանքի տևողության պայմաններում խախտում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը:

ii. Կալանքի այլ վայրեր

Այն դեպքում, երբ անձինք կալանավորված են որևէ հաստատությունում, որը հատուկ նախատեսված չէ այդ նպատակով, իրավասու մարմինների վերահսկողությունից անկախ պատճառներով, պետք է ձեռնարկվեն բոլոր քայլերը՝ ապահովելու համար, որ կալանքի բացարձակ նվազագույն ժամկետ:

Քանի դեռ կալանքը շարունակվում է, կալանավորված անձանց պետք է տրամադրվեն.

- ▶ սնունդ և խմելու ջուր,
- ▶ համապատասխան առողջապահական խնամք,
- ▶ քնելու համար հարմար միջոցներ,
- ▶ համապատասխան սարքավորված սանիտարական և լվացքի հարմարություններ,
- ▶ հասանելիություն բացօթյա տարածքներին,
- ▶ հասանելիություն ուղեբեռնի և անձնական այլ իրերին, բացառությամբ հասարակական անվտանգության և ապահովության նկատառումներից:

Բանտեր

Բանտերը հարմար վայրեր չեն ներգաղթային կալանքի վերցված անձանց համար¹¹¹, քանի որ դրանք նախատեսված են քրեական հանցագործությունների համար մեղադրվող կամ դատապարտված անձանց համար:¹¹² Որպես այդպիսին, բանտերն ապահով, ճնշող և պատժիչ միջավայրեր են: Վարչական կալանքի տակ գտնվող անձինք կարող են պահվել տվորական բանտում միայն այն դեպքում, երբ առկա են ազգային անվտանգության, ապահովության կամ վարչական կալանքի տակ գտնվող այլ անձանց պաշտպանության համար ծանրակշիռ պատճառներ: Նման կալանքը պետք է որոշվի միայն գործի բոլոր հանգամանքների մանրակրկիտ քննությամբ: Յուրաքանչյուր ոք, ով կալանավորված է բանտում, պետք է պահվի հնարավորինս կարճ ժամկետով և բանտերի ընդհանուր բնակչությունից առանձնանալու և բանտային ընդհանուր ռեժիմից ազատման սկզբունքին համապատասխան:¹¹³

Ոստիկանական բաժանմունք

Ոստիկանական բաժանմունքները և գլխամասային գրասենյակները նույնպես պատշաճ տարածքներ չեն ներգաղթյալների կալանավորման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են հնարավորինս կարճ ժամանակով, օրինակ՝ հենց սկզբում (անձին ազատությունից զրկելուց հետո) կամ կալանքի ժամկետի վերջում (անմիջապես կալանքից ազատելուց առաջ):¹¹⁴

Տարանցիկ գոտիներ

Նմանապես, տարանցիկ գոտիները, օդանավակայանի ընդունման կենտրոնները և մուտքի կետի պահման հնարավորությունները հարմար չեն ներգաղթյալներին կալանավորելու համար, երբ դրանք օգտագործվում են առանց օրենքով թույլտվության¹¹⁵ և վերանայման¹¹⁶:

Արտակարգ իրավիճակների հաստատություններ

Սա մասնավորապես վերաբերում է այն իրավիճակներին, երբ կարճ ժամանակահատվածում տեղի է ունենում միգրացիոն հոսքերի բացառիկ կտրուկ աճ, որը կազմակերպչական, նյութատեխնիկական և կառուցվածքային դժվարություններ է ստեղծում ընդունող պետության համար:¹¹⁷ Այս բացառիկ հանգամանքները կարող են առաջանալ անկանխատեսելի գործոնների հիման վրա և հետևաբար լինել իշխանությունների վերահսկողությունից դուրս: Այսպիսով, միայն ֆինանսական ռեսուրսների բացակայությունը բավարար պատճառ չէ նման արտակարգ իրավիճակների հաստատություններում անձանց պահելու համար:

Վարչական կալանքի համար հատուկ չնախագծված վայրերի թվում կարող են լինել դպրոցական շենքերը կամ մարզարահները, ցուցասրահները, զորանոցները, հիվանդանոցները, հյուրանոցները կամ նավերը: Այնուամենայնիվ, նման վայրերը երբեք չպետք է օգտագործվեն խոցելի իրավիճակում հայտնված անձանց համար:

Փոխադրումներ

Կալանավորված անձանց մի վայրից մյուսը փոխադրելիս կամ տեղափոխելիս կարևոր է ապահովել, որ նյութական պայմաններն ապահով և անվտանգ լինեն:¹¹⁸ Դրան կարելի է հասնել հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.¹¹⁹

- ▶ ապահովել, որ ցանկացած տևողությամբ բոլոր փոխադրումները միշտ վերահսկվեն որակավորված անձնակազմի կողմից,¹²⁰
- ▶ օգտագործել տրանսպորտային միջոցներ, որոնք հարմար են նախագծված կոնկրետ փոխադրման համար¹²¹, որոնք հագեցված են անվտանգության անհրաժեշտ սարքերով, ինչպիսիք են ամրագոտիները¹²² և վթարային կոդպման մեխանիզմները,¹²³ և որոնք ունեն բավականաչափ բարձրության կուպեններ կամ խցիկներ¹²⁴ և չափեր՝ հաշվի առնելով ճանապարհի երկարությունը¹²⁵ հնարավորություն տալու բավարար անձնական տարածք ունենալու,¹²⁶
- ▶ երկար ուղևորությունների դեպքում անձանց ապահովել սանիտարա-հիգիենիկ պայմաններով,¹²⁷

- ▶ թույլ տալ մարդկանց բավարարել իրենց բնական կարիքները՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության նկատմամբ հարգանքի պայմաններում, ապահովելով նաև հիգիենան,
- ▶ տրամադրել անվճար թարմ և մաքուր խմելու ջուր՝ ըստ անհրաժեշտության և սնունդ՝ համապատասխան ընդմիջումներով երկար ուղևորությունների համար,
- ▶ հոգալ անձի ցանկացած բժշկական վիճակի և (կամ) խոցելիության հարցերը,¹²⁸
- ▶ պաշտպանել մարդկանց ցանկացած դաժան վերաբերմունքից, ներառյալ գենդերային բռնությունից, գողությունից, հարձակումներից կամ ոտնձգություններից:¹²⁹

4.2. Մնունդ, խմելու ջուր, հագուստ և անկողնային պարագաներ

i. Մնունդ և խմելու ջուր

Քանի որ կալանավորված անձինք իրենց կալանքի ողջ ընթացքում գտնվում են իշխանությունների բացառիկ հսկողության տակ, իշխանությունները պատասխանատու են նրանց հիմնական սննդային և կենսապահովման կարիքների բավարարման համար:¹³⁰ Դրան կարելի է հասնել հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով, որոնք չեն համարվում սպառնալից ցուցակ.

- ▶ Կալանավայրում ապահովել մշտական թարմ և մաքուր խմելու ջրով, ներառյալ գիշերը,¹³¹
- ▶ ապահովել օրական առնվազն երեք անվճար որակյալ սնունդով՝¹³² համապատասխան ընդմիջումներով, և բավարար չափաբաժիններով՝ առնվազն մեկ տաք մատուցվող կերակուրով,¹³³
- ▶ ճաշացանկերը պետք է վերանայվեն և հաստատվեն որակավորված սննդաբանների կողմից: Կալանավորված անձանց մատուցվող սնունդը չպետք է լինի միապաղաղ, և ճաշացանկերը պետք է փոխվեն ողջամիտ պարբերականությամբ,
- ▶ կերակուրը պատրաստել և մատուցել հիգիենիկ պայմաններում՝ ամեն օր մաքրելով խոհանոցի տարածքը և հաճախ խորը մաքրություն անելով, համաձայն ազգային չափանիշների՝ վերապատրաստել սննդի հետ աշխատող անձնակազմին սննդամթերքի հիգիենայի հիմնական միջոցների հետ կապված,
- ▶ թույլատրել կալանավորված անձանց լրացուցիչ սնունդ և խմիչք գնել մատչելի գնով, որը ոչ ավելին է, քան կալանավայրից դուրս, օրինակ՝ ապահովելով սրճարաններով, սննդամթերքով և հիմնական ոչ պարենային ապրանքներ առաջարկող խանութներով կամ վաճառող սարքերով,

- ▶ գործադրել բոլոր ջանքերը՝ կերակուր պատրաստելու և մատուցելու համար հատուկ սննդակարգի պահանջներին համապատասխան, օրինակ՝ առողջության, տարիքի,¹³⁴ կրոնի,¹³⁵ վեգանական և բուսակերական սննդակարգերի կամ այլ սննդակարգի հետ կապված պատճառներով (օրինակ՝ կերակրող մայրերը կամ դիաբետով բուժառուները կարող են տարբերվող կերակուրներ ուտելու կարիք ունենալ կամ երեխաները պետք է հնարավորություն ունենան նախուտեստներ ուտելու ճաշերի միջև ընկած ժամանակահատվածում),¹³⁶
- ▶ ապահովել սննդի համապատասխան օբյեկտներով,¹³⁷ յուրաքանչյուր անձի համար մաքուր և սեղանից օգտվելու անհատական պարագաների կանոնավոր բաշխմամբ,¹³⁸
- ▶ ապահովել կալանավորների սննդի ընդունման համար համապատասխան տարածք ¹³⁹, ինչպես նաև բավարար քանակությամբ սեղաններ և աթոռներ՝ տվյալ իրավիճակում կալանավորված անձանց թվաքանակով :¹⁴⁰

Դատարանի համապատասխան նախադեպային իրավունք

«Ռ.Ռ.-ն և մյուսներն ընդդեմ Հունգարիայի» գործը վերաբերում էր իրանական/աֆղանական ընտանիքի նկատմամբ մարդու իրավունքների մի շարք ենթադրյալ խախտումների, որոնցից մեկը վերաբերում էր սննդի տրամադրմանը: Դիմումատուներից մեկը պնդում էր, որ իրեն կերակրելու բեռը դրվել է իր վրա, ինչը նշանակում է, որ տարանցիկ գոտում կալանքի տակ գտնվելու ժամանակ նա պետք է սնունդ վերցնեի իր ընտանիքից, աղաչեր մյուսներից և աղբամաններում մնացորդներ փնտրեր գոյատևելու համար: Այս պնդումների առնչությամբ Դատարանը գտել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ տարանցիկ գոտում կալանքի տակ պահելու ժամանակ դիմումատուին սնունդ չտրամադրելու մասով և առանց նրա կարիքները գնահատելու:

ii. Հագուստ և անկողնային պարագաներ

Կալանավորված անձինք պետք է հասանելիություն ունենան կենցաղային այլ իրերի, ինչպիսիք են՝ համապատասխան հագուստը, կոշիկը և անկողնային պարագաները, որպեսզի ապահովեն իրենց արժանապատվությունն ու բարեկեցությունը:¹⁴¹ Սեփական հագուստ կրելը և ընտրելը, ներառյալ ներքնագգեստը և կոշիկները, պահպանում է նրանց անձնական ինքնավարությունն ու ինքնությունը և վանում է բանտարկված լինելու զգացողությունը: Այս պատճառով կարևոր է, որ մարդկանց թույլատրվի կրել, պահել և մաքրել իրենց հագուստն ու կոշիկները կալանքի ընթացքում՝ հիմնավորված և օրինական կարգի և անվտանգության նկատառումներից ելնելով: Այս պայմանները կարող են խրախուսվել՝ հաշվի առնելով հետևյալ նկատառումները և միջոցները.

- ▶ անհրաժեշտության դեպքում կալանավորված անձանց տրամադրել բավարար քանակի համապատասխան հագուստ և կոշիկներ՝ հաշվի

առնելով նրանց կարիքները՝ ըստ նրանց կալանքի տևողության,¹⁴² համապատասխան հագուստը պետք է օգտագործվի քնելու, մարզվելու, լսումներին մասնակցելու և կլիմայական պայմաններին համապատասխան ամենօրյա օգտագործման համար,

- ▶ կալանավորված անձանց համար ապահովվելով համապատասխան պահատեղ՝ իրենց հագուստն ու կոշիկները պահելու համար,
- ▶ հաճախակի տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ, ինչպիսիք են լվացքատունը՝ հագուստը ողջամիտ ընդմիջումներով լվանալու և չորացնելու համար, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հագուստը փոխարինելու համար,¹⁴³
- ▶ կալանքի տակ գտնվող անձանց դատարան ներկայանալու համար երկար ուղևորությունից հետո առաջարկել համապատասխան հանգստի, սննդի, լվացվելու և հագուստ փոխելու հնարավորություն:¹⁴⁴

Բացի վերը նշվածից, կարևոր է հաշվի առնել, որ որոշ կալանավորված անձինք կարող են միջոցներ չունենալ գնելու որևէ հագուստ կամ հագուստ, որը հարմար է եղանակային պայմաններին և կլիմայական պայմաններին: Նման դեպքերը կարող են բացահայտվել կալանավորված անձի ինքնահայտարարագրման միջոցով, սակայն անձնակազմը պետք է հաշվի առնի, որ կալանավորված անձը չի կարող ինքնուրույն բողոք ներկայացնել, ուստի կարևոր է, որ անձնակազմը ողջամիտ հարցումներ կատարի, եթե կասկածում է, որ կալանավորված անձը հասանելիություն չունի համապատասխան հագուստի:

Բավականաչափ ժամանակով առանց խանգարումների հանգստանալու և քնելու կարողությունը վճռորոշ է կալանավորված անձանց բարօրության և հատկապես նրանց ֆիզիկական և հոգեբանական առողջության համար: Որպեսզի նրանք ունենան համապատասխան ռեսուրսներ ամեն օր հանգստանալու և քնելու համար, կարևոր է յուրաքանչյուր կալանավորված անձի անվճար տրամադրել հետևյալը:¹⁴⁵

- ▶ բավարար տարածք քնելու և հանգստանալու համար, ներառյալ առանձին և անվտանգ քնելու վայրեր միայնակ կանանց համար՝ երեխաներով կամ առանց երեխաների,¹⁴⁶
- ▶ լավ վիճակում գտնվող առանձին մահճակալներ և ներքնակներ,
- ▶ լավ վիճակում գտնվող առանձնացված տեղ, եթե կալանքի տևողությունը մինչև 24 ժամ է
- ▶ նրանց կալանավորման ընթացքում հաճախակի և ողջամիտ պարբերականությամբ (օրինակ՝ շաբաթը մեկ անգամ) մաքրել սավանն ու սպիտակեղենը:

4.3. Մտքի, խղճի, կրոնի և հավատքի ազատություն

Յուրաքանչյուր կալանավորված անձ իրավունք ունի դավանելու իր կրոնական և ոչ կրոնական համոզմունքները¹⁴⁷ ինչպես մասնավոր, այնպես էլ

հրապարակայնորեն:¹⁴⁸ Սա ներառում է անձի անձնական և բարոյական համոզմունքները:¹⁴⁹ Այս իրավունքին անարդարացիորեն միջամտելու ռիսկերը կարող են մեղմվել՝ թույլատրելով և, անհրաժեշտության դեպքում, հեշտացնելով նրանց հավատքի դավանումը:¹⁵⁰ Ստորև բերված ցանկը տրամադրում է ոչ սպառնիչ ցուցակ, թե ինչպես կարող է անձը դավանել իր հավատքը:¹⁵¹

- ▶ հավատքի պահպանում և փոփոխություն,¹⁵²
- ▶ պաշտամունք, աղոթք կամ մեղիտացիա,¹⁵³
- ▶ սննդակարգի հատուկ պահանջների պահպանում,¹⁵⁴
- ▶ հիմնական պահքերի, տոների կամ սուրբ ժամանակաշրջանների պահպանում և տոնում:

Օգտակար է ցույց տալ, թե գործող կալանավայրերը ինչպես կարող են նպաստել մարդկանց՝ դավանելու իրենց համոզմունքները՝ որոնք սակայն կարող են ենթարկվել օրինականորեն հիմնավորված միջամտությունների¹⁵⁵ (օրինակ, եթե նրանց վարքագիծը որակվում է որպես ոտնձգություն, սպառնալիք կամ այլ քրեականացված գործողություն¹⁵⁶):

- ▶ հավաստիանալ, որ կալանավորված անձինք կարող են գրանցել իրենց հավատքը, որպեսզի անձնակազմը տեղյակ լինի նրանց համոզմունքների և հատուկ կարիքների մասին,
- ▶ հարգել և նպաստել կալանավորված անձանց հավատքի պահանջներին՝ կապված նրանց հագուստի և սննդակարգի հետ,¹⁵⁷
- ▶ պաշտպանել կրոնական առարկաները և (կամ) հավատքի խորհրդանիշները ոչնչացումից կամ հեռացումից,¹⁵⁸
- ▶ թույլատրել կրոնական ծեսերի, պաշտամունքի, աղոթքի և մեղիտացիայի կատարումը նշված համոզմունքին համապատասխան,¹⁵⁹ և հեշտացնել ծիսական լվացումը, երբ այն պահանջվում է համաձայն հավատքի,
- ▶ ապահովել պաշտամունքի, աղոթքի և մեղիտացիայի համար հարմար տարածքներ,¹⁶⁰
- ▶ թույլ տալ կազմակերպել կամ մասնակցել կրոնական ծառայություններին կամ արարողություններին,¹⁶¹
- ▶ երբ կալանավայրի ռեժիմները (օրինակ՝ օրինական կամ ընտանեկան տեսակցությունները, միջոցառումները կամ կրթական ծառայությունները) համընկնում են պաշտամունքի, աղոթքի, մեղիտացիայի կամ հիմնական պահքերի և սրբազան ժամանակաշրջանների հետ, համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու, որ նման գործողությունները ինարավոր լինի իրականացնել կրոնական պրակտիկաներին զուգահեռ,¹⁶²
- ▶ պաշտպանել կալանավորված անձանց հարձակումներից, նվաստացումներից կամ սպառնալիքներից, այդ թվում՝ կրոնական, ռասսայական, գենդերային կամ սեռական դրդապատճառներով չարաշահումից կամ բռնությունից:¹⁶³

4.4. Հանգիստ և ժամանց

Կալանավորված անձանց բարեկեցությունը պահպանելու և խթանելու համար կարևոր է ապահովել, որ նրանք ունենան հնարավորություն և հարմարություններ՝ անվճար զբաղվելու հանգստի և ժամանցային գործունեությամբ:¹⁶⁴ Սա կալանավորված անձանց համար կապահովի զբաղվածություն, կզարգացնի իրենց հմտություններն ու գիտելիքները, հնարավորություն կտա մարզվել և բարելավել իրենց մարզավիճակը, ինչպես նաև շփվել միմյանց հետ:

Այս գործողությունները պետք է հասանելի լինեն՝ անկախ անձի կալանքի տևողությունից՝ ի նկատի ունենալով, որ որքան երկար է կալանքի ժամկետը, այնքան ավելի հագեցած պետք է լինի գործունեությունը:¹⁶⁵ Կա գործունեության և հարմարությունների լայն շրջանակ, որոնք կարող են առաջարկվել կալանավորված անձանց, օրինակ՝

- ▶ սպորտը (մարզասրահ, բացօթյա և շենքի ներսում կատարվող վարժություններ, խմբային սպորտաձևեր և այլն),
- ▶ սոցիալ-մշակութային զբաղմունքներ (արվեստ և
- ▶ արհեստ, երաժշտություն, ընթերցանություն, դրամա և այլն),
- ▶ մաքուր օդի և բնական լույսի հասանելիությամբ բացօթյա տարածքների առկայություն¹⁶⁶, ինչպես նաև մարդկանց վատ եղանակից կամ արևից պաշտպանվելու համար համապատասխան տարածքի առկայություն,¹⁶⁷
- ▶ սեղանի խաղեր և քարտեր,
- ▶ հասանելիություն նպատակային միջոցառումների, ինչպիսիք են լեզվի դասերը, ՏՏ/համակարգչային դասերը, այգեգործությունը, արվեստն ու արհեստը, երաժշտությունը, խոհարարության հմտությունները և «մշակութային խոհանոցները» կամ ընթերցանության դասերը,
- ▶ հասանելիություն հեռուստացույցին,¹⁶⁸ ռադիոյին,¹⁶⁹ համակարգչին և, հնարավորության դեպքում համացանցին,¹⁷⁰ լրագրերին և գրքերին,¹⁷¹
- ▶ հասանելիություն անձնական բջջային հեռախոսին՝ ելնելով կարգուկանոնի և անվտանգության նկատառումներից, կալանավորված անձանց թվին համարժեք քաղաքային հեռախոսների բավարար քանակի ապահովում, համապատասխան լիցքավորման սարքեր՝ կալանքի տակ գտնվողներին հնարավորություն տալով, ըստ իրենց ընտրության, շփվել այլ անձանց հետ:

4.5. Սանիտարահիգիենիկ պայմաններ

Կալանավայրում բոլոր անձանց նկատմամբ մարդկային և արժանապատիվ վերաբերմունք դրսևորելու և նրանց բարեկեցությունը չխաթարելու համար կարևոր է երաշխավորել նրանց հասանելիությունը տարրական անձնական և առամնաբուժական հիգիենայի:¹⁷² Այս նպատակով կալանավորված անձանց պետք է կանոնավոր կերպով անվճար տրամադրել տարրական հիգիենայի պարագաներ¹⁷³, որպեսզի նրանք ունենան ռեսուրսներ՝ պահպանելու իրենց անձնական հիգիենան և սանիտարական պայմանները:¹⁷⁴

Եթե անձը կալանավորված է ավելի քան 24 ժամով, տրամադրելով նրան հիմնական սանիտարական պարագաներով և համապատասխան պարբերականությամբ ապահովելով սպառված իրերի համալրումը, կօգնի հետևողականորեն ապահովել նրանց հասանելիությունը նման ռեսուրսներին:¹⁷⁵ Կախված կալանավորված անձի սեռից, տարիքից կամ անհատական կարիքներից՝ փաթեթը պետք է ներառի համապատասխան քանակությամբ սանիտարական պարագաներ, ինչպիսիք են¹⁷⁶

- ▶ զուգարանի թուղթ կամ հասանելիություն ջրին՝ ըստ համատեքստի և մշակութային նկատառումների,
- ▶ օճառ,
- ▶ շամպուն,
- ▶ ատամի մածուկ և խոզանակ,
- ▶ սանիտարական սրբիչներ,
- ▶ սափրվելու պարագաներ (համաձայն հաստատված կարգի և անվտանգության նկատառումներից),
- ▶ մաքուր և չոր սրբիչներ:

Առօրյա հիգիենան և սանիտարահիգիենիկ պայմանները պահպանելու համար կալանավորված անձինք նաև պետք է ունենան համապատասխան սանիտարական հարմարանքների ազատ և կանոնավոր հասանելիություն (ցնցուղ, լվացարան և զուգարան): Դա կարելի է երաշխավորել՝ ապահովելով հետևյալը.

- ▶ ազատ և կանոնավոր հասանելիություն ցնցուղներին,¹⁷⁷
- ▶ ցանկացած պահին ազատ հասանելիություն զուգարաններին,¹⁷⁸ ներառյալ գիշերը,¹⁷⁹ և առանց անհարկի ուշացման,¹⁸⁰
- ▶ լվացքի միջոցներ՝ տաք և սառը ջրի հասանելիությամբ,¹⁸¹
- ▶ վերանորոգված լավ վիճակում գտնվող ¹⁸² և օգտագործման համար անվտանգ սանտեխնիկա, ¹⁸³ օրինակ՝ լվացարաններ, ծորակներ և այլն,
- ▶ տղամարդկանց և կանանց համար նախատեսված առանձին ցնցուղներ¹⁸⁴ և զուգարաններ¹⁸⁵, որոնք փակվում են դռներով՝ ապահովելով անձանց առանձնությունը,
- ▶ անհատական ցնցուղներ և բավականաչափ տարածք՝ առանց այլ մարդկանց ներկայության հազուստը փոխելու հնարավորությամբ,
- ▶ սանհանգույցներ՝ կառուցված համապատասխան սանտեխնիկայով,¹⁸⁶
- ▶ բավարար քանակությամբ զուգարաններ, ցնցուղներ և լվացարաններ, որոնք համապատասխանում են հաստատությունում գտնվող կալանավորված անձանց թվին,¹⁸⁷
- ▶ սանիտարահիգիենիկ հարմարանքներ, որոնք հաշվի են առնում մարդկանց հատուկ կարիքներն ու խոցելիությունը, օրինակ՝ անվասայլակներով հասանելիությունը:

Ի հավելումս վերը նշված միջոցների՝ կալանավորված անձանց անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ և ծառայություններ՝ իրենց բնակվելու միջավայրը

մաքուր և ախտահանված պահելու համար: Այս կարիքները նվազագույնը հնարավոր է բավարարել հետևյալ քայլերով.

- ▶ մարդկանց ապահովել հիմնական սարքավորումներով և պարագաներով հագուստը լվանալու և չորացնելու համար,¹⁸⁸
- ▶ մարդկանց ապահովել անհրաժեշտ ապրանքներով և սարքավորումներով՝ նրանց կացարանը մաքուր պահելու համար,
- ▶ աղբի և այլ թափոնների կանոնավոր և անվտանգ հեռացում,¹⁸⁹
- ▶ անհրաժեշտության դեպքում և ազգային կանոնակարգերին համապատասխան խցերի, անկողնային պարագաների և սննդի պահեստավորման տարածքների ախտահանում:

4.6. Հատուկ դեպքեր

Որպես կանոն, խոցելի անձանց չի կարելի կալանավորել: Բացառիկ հանգամանքներում, երբ խոցելի անձինք կալանավորվում են որպես վերջին միջոց, երբ գոյություն չունի կալանքին համապատասխան այլընտրանք, և կալանավորման իրավական չափանիշները բավարարվում են՝ հաշվի առնելով խոցելի անձի բոլոր հանգամանքները, կալանավայրերը պետք է համապատասխանաբար հարմարեցվեն իրենց հատուկ կարիքներին՝ բավարարելու նրանց բարեկեցության պաշտպանությունը և խթանումը:¹⁹⁰

Պայմանները պետք է հաշվի առնեն տվյալ անձի առանձնահատուկ կարիքներն ու հանգամանքները, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար պետք է փնտրվեն համապատասխան լուծումներ: Այն դեպքերում, երբ կալանքի պայմանները հաշվի չեն առնում տվյալ անձի առանձնահատուկ կարիքներն ու հանգամանքները, Դատարանը հաճախ համարել է, որ խոցելի իրավիճակներում գտնվող անձանց կալանքի պայմանները համապատասխանում են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պահանջվող շեմին հասնելու համար անհրաժեշտ խստության նվազագույն մակարդակին¹⁹¹: Ստորև բերված օրինակները չեն տրամադրում բոլոր այդպիսի անձանց սպառիչ ցուցակը, այլ ցույց են տալիս կոնկրետ դեպքերի հիմնական օրինակները:

i. Երեխաներ

Վարչական կալանքի կոնկրետ համատեքստում միջազգային չափանիշները նախատեսում են, որ, որպես կանոն, պետք է խուսափել երեխաների կալանավորումից՝ անկախ նրանից՝ առանձնացված են, թե ճանապարհորդում են իրենց ընտանիքի հետ: Դա պայմանավորված է նրանով, որ երեխային կալանավորելը բացառապես նրա ներգաղթի կամ կացության կարգավիճակի բացակայության պատճառով չի պաշտպանում կամ խթանում նրանց լավագույն շահերը,¹⁹² ինչը պետք է դիտարկել որպես առաջնահերթություն ցանկացած որոշում կայացնելիս:¹⁹³

Երեխաները չափահասների համեմատ ունեն հատուկ կարիքներ և իրավունքներ: Օրինակ, յուրաքանչյուր երեխա իրավունք ունի օգտվելու ՄԱԿ-ի

Երեխայի իրավունքների կոնվենցիայով նախատեսված իրավունքներից, նույնիսկ եթե նա զրկված է ազատությունից:¹⁹⁴ Եթե երեխային նույնականացնեն կալանավայրում, դա կառաջացնի հատուկ նկատառումների և գործողությունների անհրաժեշտություն: Ահա թե ինչու շատ կարևոր է, որ անձնակազմի անդամները հնարավորինս արագ հայտնաբերեն երեխաներին և անհապաղ քայլեր ձեռնարկեն նրանց պաշտպանության համար և նախապատրաստեն նրանց տեղափոխումը երեխաների համար համապատասխան կացարան: Դրան կարելի է հասնել հետևյալ քայլերի իրականացմամբ.

- ▶ եթե անձի տարիքը անորոշ է, սակայն առկա է որևէ պատճառ ենթադրելու, որ նա երեխա է, ապա պետք է ենթադրել, որ նա երեխա է,¹⁹⁵ և նրան տրամադրել հատուկ պաշտպանություն և իրավունքներ, որոնց իրավունքը երեխաները ունեն, մինչև պարզվի, որ նրանք չափահաս են տարիքային գնահատման ընթացակարգի միջոցով,¹⁹⁶
- ▶ երբ կան հիմնավոր կասկածներ անձի տարիքի վերաբերյալ, անհրաժեշտ է անհապաղ կազմակերպել տարիքային գնահատում՝ անձի տեղեկացված համաձայնությամբ: Տարիքի նման գնահատումը պետք է համապատասխանի երկրի օրենսդրության համապատասխան ընթացակարգին՝ կիրառելով բազմակողմանի մոտեցում, որը ապացույցահիմն է՝ հիմնված գիտելիքների, մեթոդների և պրակտիկայի վրա և որը երեխայականությունն է,¹⁹⁷
- ▶ երեխային հասկանալի եղանակով՝ գնահատված անձին հնարավորինս արագ տեղեկացնել տարիքի գնահատման որոշման իրավական և ապացույցների վրա հիմնված փաստացի պատճառների մասին,¹⁹⁸
- ▶ տեղեկացնել անձին տարիքային գնահատման արդյունքները վիճարկելու իր իրավունքի, կիրառվող ցանկացած ժամկետների և այդ պաշտպանության միջոցների հասանելիության մասին:¹⁹⁹

Երեխայի բարեկեցությունը պաշտպանելու և խթանելու համար կարևոր է, որ երեխային տրամադրվեն հետևյալ երաշխիքները՝ մինչև նրա կալանքի և պաշտպանության անհապաղ վերանայումը.

- ▶ պետք է իրականացնել երեխաների կարիքների համապարփակ գնահատում, մասնավորապես՝ հասկանալու համար, թե արդյոք կան հրատապ կարիքներ, օրինակ՝ արդյոք երեխան եղել է շահագործման որևէ ձևի գոհ՝ լինի դա սեռական, աշխատանքային, թե քրեական հանցագործություն,
- ▶ երեխաների կարիքներին և տարիքին հարմարեցված կացարաններ, որոնք առանձնացված են իրենց հետ ազգակցական կապ չունեցող մեծահասակներից, համապատասխան պայմաններով, որոնք ապահովում են երեխաների պաշտպանությունը,
- ▶ կանոնավոր շփումներ և տեսակցություններ երեխայի իրավասու խնամակալների²⁰⁰ և (կամ) սոցիալական աշխատողների հետ,²⁰¹
- ▶ ուղեկցվող երեխաների դեպքերում խուսափել ընտանիքների բաժանումից, եթե դա չի բխում երեխայի լավագույն շահերից,²⁰²

- ▶ միջոցներ ձեռնարկել՝ փնտրելու համապատասխան ոչ ազատագրկ-ման խնամքի այլընտրանքներ:²⁰³

Անհրաժեշտ են լրացուցիչ հատուկ քննարկումներ և գործողություններ այն դեպքերում, որոնք վերաբերում են առանց ուղեկցության կամ ընտանիքից առանձնացված երեխաներին, ներառյալ.

- ▶ արագ և համապատասխան քայլեր ձեռնարկել երեխայի ընտանիքին հայտնաբերելու և նրանց վերամիավորելու համար,²⁰⁴
- ▶ խուսափել չափահաս բնակչության մեջ երեխայի կալանավորումից,²⁰⁵ և պաշտպանել նրանց վատ վերաբերմունքից կամ չարաշահումից, ներառյալ գենդերային բռնությունից, մարդկանց թրաֆիքինգից և ստրկության ժամանակակից ձևերից,²⁰⁶
- ▶ խուսափել եղբայրների ու քույրերի բաժանումից,
- ▶ Նախնական հարցազրույցի և ինքնազգացողության գնահատման անցկացում որակավորված մասնագետի հետ երեխայի համար հաս-կանալի լեզվով,
- ▶ Իրավական ներկայացուցչության արագ և ազատ հասանելիության ապահովում,²⁰⁷ ինչպես նաև իրավասու խնամակալի,²⁰⁸ որը կարող է նպաստել երեխայի լավագույն շահերին,
- ▶ Երեխաների համար բողոքների արդյունավետ և մատչելի մեխանիզմ-ների ապահովում (օրինակ, օմբուդսմենների միջոցով) տրամադրում:

Եթե երեխան հայտնվում է կալանավայրում՝ նրա կալանքի և պաշտպա-նության անհապաղ վերանայման ընթացքում, երեխայի բարեկեցության և զարգացման համար շատ կարևոր է ապահովել, որ կալանավորման ընթաց-քում նրանք ունենան ազատ և անսահմանափակ հասանելիություն իրենց տարիքին համապատասխան գործունեության ձևերին:²⁰⁹ Դրանք ներառում են համապատասխան փակ և բաց տարածքներում ապահով տեղադրված խաղային սարքերի ապահովում:²¹⁰

Ի հավելում, կարևոր է հիշել, որ երեխայի կրթության իրավունքը մշտապես պետք է երաշխավորված լինի, որպեսզի նրա զարգացման և բարեկեցության հետագա ռիսկերը մեղմվեն:²¹¹ Դա կարող է առավել արդյունավետ կերպով խթանվել՝ տրամադրելով հետևյալ հիմնական երաշխիքները.

- ▶ ապահովել երեխայի՝ իր տարիքին համապատասխան կրթության շարունակություն,²¹²
- ▶ ապահովել որակյալ ուսուցչական կադրեր՝ կրթական ծառայություններ մատուցելու համար, որոնք ներառում են անհրաժեշտ բոլոր ուսում-նական ծրագրերը,²¹³
- ▶ ապահովել երեխայի պարտադիր կրթությունը շարունակելու համար անհրաժեշտ անվճար և համապատասխան ռեսուրսներ և հարմարու-թյուններ (օրինակ՝ գրենական պիտույքներ, ուսումնառության համար հարմար և ուսումնական տարածք, ուսումնական ուղեցույցներ, գրքեր և համապատասխան ռեսուրսներով հագեցած մանկական գրադարան):

Գործիքակազմ/հետազա ընթերցում

- ▶ HELP առցանց դասընթացներ Փախստական և միգրանտ երեխաներ
- ▶ HELP առցանց դասընթացներ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար
- ▶ Եվրոպայի խորհուրդ, «Միգրացիայի ոլորտում երեխաների համար նպաստավոր մոտեցումների խթանում. ստանդարտներ, ուղեցույցներ և ընթացիկ պրակտիկա», 2020թ.
- ▶ Եվրոպայի խորհուրդ, «Ինչպես միգրացիայի մեջ գտնվող երեխաներին փոխանցել երեխաներին հարմար տեղեկատվություն. ձեռնարկ առաջնային մասնագետների համար», 2018թ.
- ▶ Ապաստանի աջակցության եվրոպական գրասենյակ (EASO), Այն ամենը, ինչ դուք պետք է իմանաք տարիքային գնահատման մասին, EUAA, 2022թ.
- ▶ EASO-ի գործնական ուղեցույց ընտանիքի հետագծման վերաբերյալ, 2016թ.
- ▶ ՄԱԿ ՓՀԳՀ (UNHCR), 2021թ. ՄԱԿ ՓՀԳՀ-ի լավագույն շահերի ընթացակարգի ուղեցույցներ. Երեխայի լավագույն շահերի գնահատում և որոշում, մայիս 2021թ.
- ▶ ՄԱԿ ՓՀԳՀ, ՄՄԿ, ՅՈՒՆԻՍԵֆ, «Անվտանգություն և արժանապատվություն փախստական և միգրանտ երեխաների համար. Եվրոպայում կալանավորման այլընտրանքների և համապատասխան խնամքի պայմանավորվածությունների վերաբերյալ առաջարկություններ», հուլիս 2022 թ.
- ▶ ԽԿԿ (CPT) այցերի հաշվետվությունների, հրապարակային հայտարարությունների և չափորոշիչների հավաքածու

ii. Հղի կանայք և կերակրող մայրեր

Որպես կանոն, պետք է խուսափել հղիներին և կերակրող մայրերին կալանավորելուց:²¹⁴ Երբ հղի կանայք հայտնվում են կալանավայրում, նրանց նախաձննդյան և հետծննդյան կարիքները պետք է բավարարվեն, մինչ նրանց կալանքի անհապաղ վերանայումը:²¹⁵ Օրինակ, հղի կնոջը անհրաժեշտ կլինի բուժաշխատողի և լիցենզավորված սննդաբանի խորհրդատվություն.

- ▶ հավասարակշռված սննդակարգ, որը հարուստ է սպիտակուցով, հատիկավորներով, թարմ մրգերով և բանջարեղենով,²¹⁶
- ▶ ոչ պարենային ապրանքներ՝ ըստ պահանջի (համապատասխան անկողնային պարագաներ և հանգստի հարմարություններ, առավոտյան սրտխառնոցի միջոցներ, հղիների հագուստ և այլն),
- ▶ որակավորված բժշկի կանոնավոր և շարունակական հասանելիություն՝ նրանց առողջության և հղիության կարիքները վերահսկելու և լուծելու համար:²¹⁷

Եթե հղի կինը ցանկանում է դիմել հղիության արհեստական ընդհատման, ապա կարևոր է, որ նա անհապաղ հասանելիություն ունենա վերարտադրողական առողջության վերաբերյալ համապատասխան խորհրդատվության և բուժմանը՝ համաձայն ներպետական օրենսդրության:²¹⁸

iii. Մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհեր

Մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհերի վարչական կալանքից, որպես կանոն, պետք է խուսափել²¹⁹ հաշվի առնելով անդամ պետությունների պարտավորությունը հարգելու նման զոհերին չպատժելու սկզբունքը²²⁰։ Իշխանությունները պետք է բացահայտեն և խելամիտ քայլեր ձեռնարկեն պաշտպանելու մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի (որոնք ներառում են սեռական, քրեական և աշխատանքային շահագործում) զոհերին պաշտպանելու համար²²¹։ Սա կիրառելի է այն պահից, երբ պատասխանատու մարմինը գիտի կամ պետք է իմանա, որ նման զոհը իրենց իրավասության տակ է։ Լիազոր մարմինը պետք է հետևի իր կողմից ղեկավարվող համապատասխան քաղաքականություններին և օրենքներին՝ հայտնաբերելու և հնարավոր զոհին ուղղորդելու այն մարմնին, որը պատասխանատու է նրանց վիճակը գնահատելու և նրանց ցանկացած իրավասու աջակցություն և պաշտպանություն տրամադրելու համար։ Ցուցանիշները, որ անձը զոհ է դարձել, տարբեր են, սակայն կարող են ներառել հետևյալներից մի քանիսը²²²։

- ▶ ճանապարհորդական և (կամ) անձը հաստատող փաստաթղթերի բացակայություն,
- ▶ Նշված պատճառին չհամապատասխանող վնասվածքներ,²²³
- ▶ չափից ավելի հեռախոսազանգերի և (կամ) տեքստային հաղորդագրությունների ստացում,
- ▶ իշխանությունների հետ շփվելու դժկամություն,
- ▶ անբացատրելի բացակայության ժամանակաշրջանների պատմություն,
- ▶ քրեական պատմություն, ներառյալ հանցագործություններ՝ կապված գողության, խարդախության, թմրամիջոցների և սառը զենքի արտադրության, պահպանման և (կամ) մատակարարման հետ,
- ▶ կենցաղային ստրկության կամ հարկադիր ամուսնության, հասարակաց տների կամ բռնի մարմնավաճառության պայմաններում հայտնաբերված անձինք, ինչպես նաև չփաստաթղթավորված աշխատողներ։

Մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհերը պետք է կալանավորվեն միայն կալանքի այլընտրանքային տարբերակների ակտիվ քննարկումից հետո և օրինական կալանքի իրավական թեստը բավարարելու դեպքում։ Եթե այդպիսի զոհը հայտնաբերվում է կալանավայրում,²²⁴ անձնակազմը պետք է ապահովի, որ նրանց հատուկ ֆիզիկական, հոգեբանական և բարեկեցության կարիքները պաշտպանված լինեն՝ մինչև որոշման վերանայումը կամ կալանավորելու հրամանը²²⁵։ Այս նպատակով կարևոր է, որ յուրաքանչյուր դեպքում ձեռնարկվեն հետևյալ քայլերը.

- ▶ անհապաղ ուղղորդում պետության համապատասխան և նշանակված մարմնին, որը պատասխանատու է մարդկանց թրաֆիքինգի զոհերի պաշտոնական նույնականացման, վերականգնման և արտացոլման շրջանի իրականացման և տուժածներին օգնություն և պաշտպանություն տրամադրելու համար՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարիքները²²⁶

- ▶ ցանկացած ֆիզիկական և (կամ) հոգեկան առողջության կարիքների արագ գնահատում²²⁷ և համապատասխան առողջապահական խնամքի ապահովում,²²⁸
- ▶ համապատասխան և ապահով կացարան և նյութական օգնություն,²²⁹
- ▶ տեղեկատվություն հասանելի աջակցության մասին և կալանավորված անձի համաձայնությամբ, անհապաղ ուղղորդում հավատարմագրված ՀԿ-ներին և օժանդակ ծառայություններին:

iv. Սեռի կամ սեռական կողմնորոշման հիման վրա խոշտանգումների և դաժան վերաբերմունքի և բռնության զոհեր

Վարչական կալանքի վայրերը, ամենայն հավանականությամբ, կրնողունեն խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի զոհեր, և կարևոր է, որ լիազոր մարմինները և անձնակազմը տեղյակ լինեն նման անձանց նկատմամբ իրենց պարտավորությունների մասին:²³⁰ Խոշտանգումները և վատ վերաբերմունքը ներառում են գործողություններ, որոնք կարող են ներառել ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնություն, ինչպես օրինակ.

- ▶ բռնաբարություն և սեքսուալ ոտնձգություն,²³¹
- ▶ կանանց սեռական օրգանների խեղում,²³²
- ▶ հարկադիր ստերիլիզացիա/հղիության ընդհատում,²³³
- ▶ «պատվի» համար կատարված բռնություն:²³⁴

Եթե հայտնաբերվի խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի հնարավոր զոհ, մինչև կալանավորման համար նրա համապատասխանության անհապաղ վերանայումը, շատ կարևոր է եթե հայտնաբերվում են խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի հնարավոր զոհեր, մինչև կալանավորման համար նրանց համապատասխանության անհապաղ ստուգումը, կարևոր է, անմիջապես գնահատել նրանց ֆիզիկական և (կամ) հոգեկան առողջության կարիքները և նրանց վիճակին համապատասխանաբար վերաբերմունք և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել:

v. Հաշմանդամություն ունեցող անձինք

Հաշմանդամություն ունեցող անձանց համար առանձնահատուկ դժվարությունների պատճառով (երկարատև ֆիզիկական, մտավոր, ինտելեկտուալ կամ զգայական խանգարումներ) կալանավայրում ապրելը, ընդհանուր առմամբ, դժվար է: Կալանավորման պայմանները պետք է ապահովեն իրավունքներից օգտվելը կամ իրականացումը մյուսների հետ հավասար հիմունքներով:²³⁵

Հաշմանդամություն ունեցող կալանավորված անձանց հատուկ կարիքները կարող են լինել բաց տարածքների և ցերեկային սենյակների, ինչպես նաև սանիտարական հարմարությունների հասանելիությունը անվասայլակով և հարմարեցված մահճակալներ անվասայլակով մարդկանց համար,²³⁶

Ժեստերի լեզվով հաղորդակցվելու հնարավորությունը²³⁷ և տեղաշարժվելու հնարավորությունը տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար:

Ապահովվում է կալանավայրի հարմարեցվածությունը և աջակցությունը՝ երաշխավորելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան մյուսների հետ հավասար հնարավորություններ, ստեղծվեն պայմաններ նրանց ինքնավարության համար և ապահովվի նրանց բարեկեցությունն ու արժանապատվությունը:²³⁸ Օրինակ, կալանավայրում անվասայլակով ազատ տեղաշարժվելու հնարավորությունը նպաստում է նրանց ինքնավարությանը, և, մասնավորապես, սանիտարահիգիենիկ միջոցներից ինքնուրույն օգտվելու կարողությունը ապահովում է նրանց արժանապատվությունը:²³⁹ Մարդիկ չպետք է ապավինեն այլ կալանավորված անձանց, այլ պետք է օգնություն ստանան, հատկապես արտակարգ իրավիճակներում, որը տրամադրվում է անձնակազմի կամ որակավորված անձնակազմի կողմից:²⁴⁰ Ավելին, առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել՝ ապահովելու, որ կալանքի, ներքին կանոնների և ընթացակարգերի մասին տեղեկատվությունը հասանելի լինի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հիշեք.

Իշխանությունները պետք է կարողանան բացահայտել և անմիջապես արձագանքել անազատության մեջ գտնվող խոցելի անձանց կարիքներին: Կալանավորված խոցելի անձանց ոչ ամբողջական ցանկը ներառում է.

- ▶ առանց ուղեկցության երեխաներ, ընտանիքից անջատված երեխաներ, երեխաներով ընտանիքներ, միայնակ ծնողներ երեխաներով,
- ▶ հղի կանայք կամ կերակրող մայրեր,
- ▶ մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհեր,
- ▶ գենդերային բռնության զոհեր,
- ▶ խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի զոհեր,
- ▶ տարեցներ,
- ▶ ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն կամ հիվանդություններ ունեցող անձինք,
- ▶ ԼԳԲՏԻ անձինք:

Կարևոր է, որ երբ բացահայտվի խոցելի անհատը, մինչև նրա կալանքի անհապաղ վերանայումը, իշխանությունները պետք է.

- ▶ հետևեն համապատասխան պաշտպանիչ և քրեական հետաքննության ուղղորդման ընթացակարգերին, ինչպես պահանջվում է ներպետական և միջազգային օրենսդրությամբ կոնկրետ իրավիճակի համար,
- ▶ իրականացնեն անհատի բժշկական զննում ֆիզիկական կամ հոգեկան առողջության պահպանման հատուկ կարիքների համար և տրամադրեն ցանկացած անհրաժեշտ բուժում և (կամ) աջակցություն:

Գործիքակազմ / հետազա ընթերցում

- ▶ ԵԱԱԳ-ի (EASO) ուղեցույց ընդունելության պայմանների վերաբերյալ գործառնական չափանիշներ և ցուցիչներ, 2016թ.
- ▶ Մարդկանց թրաֆիքինգի ցուցանիշներ, ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ
- ▶ Ընդհանուր հանձնարարական թիվ 38 (2020թ.) կանանց և աղջիկների թրաֆիքինգի վերաբերյալ համաշխարհային միգրացիայի համատեքստում, ՄԱԿ-ի Գերագույն հանձնակատարի Մարդու իրավունքների գրասենյակ,
- ▶ Աշխատանքային շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղեցույց, GRETA, 2021թ.
- ▶ Մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակցություն, GRETA, 2019թ.
- ▶ Երեխաների թրաֆիքինգ, GRETA, 2018թ.
- ▶ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱԿ ՓՀԳՀ), ՄՄԿ-ՄԱԿ ՓՀԳՀ, Շրջանակային փաստաթուղթ թրաֆիքինգի զոհերի նույնականացմանն ու պաշտպանությունը հեշտացնելու համար ստանդարտ գործառնական ընթացակարգերի մշակման վերաբերյալ, հունիս 2020թ.

3 ուրաքանչյուր կալանավորված անձ ունի ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր հասանելի չափանիշի իրավունք: Անձի կալանավայրում գտնվելու հանգամանքը պետության վրա է դնում նրա առողջության մասին հոգալու պարտականությունը, որը պետք է լուծի կալանավորված անձի առողջական խնդիրները՝ որպես նրա առողջության իրավունքի մաս: Սա պահանջում է ոչ միայն համապատասխան առողջապահական ծառայությունների մատուցում, այլև հիգիենայի և սանիտարական նվազագույն չափանիշների պահպանում՝ ախտի, վարակների և այլն հիվանդությունների տարածումից խուսափելու համար:

Կալանավորված անձինք իրենց բժշկական և առողջապահական կարիքները հոգալու համար ապավինում են տվյալ հաստատության աշխատակիցներին: Առողջապահությունը վերաբերում է այն ծառայություններին, որոնք վերաբերում են անձի հոգեկան և (կամ) ֆիզիկական առողջության գնահատմանը, բուժմանը և խնամքին:

Խնամքի համարժեքության սկզբունքի համաձայն՝ կալանավորված անձինք իրավունք ունեն բուժվել այնպիսի պայմաններում, ինչպիսին են կալանավայրից դուրս գտնվող հիվանդների պայմանները և առանց խտրականության՝ ելնելով նրանց իրավական կարգավիճակից:²⁴¹

5.1. Պատշաճ առողջապահության հասանելիություն

Հասանելիությունը պատշաճ առողջապահական խնամքին ենթադրում է արագ և ճշգրիտ ախտորոշում և խնամք, որը որոշվում է յուրաքանչյուր դեպքում՝ կանոնավոր և համակարգային վերահսկողության ներքո,²⁴² համապարփակ թերապևտիկ ռազմավարություն և շարունակական բուժում՝ ուղղված անձի հիվանդությունը բուժելուն, կամ, եթե բուժում չկա, կանխարգելում է նրանց վատթարացումը, կայունացում և օժանդակում է նրանց վիճակը, այլ ոչ թե բուժում է ախտանշանային հիմունքներով:²⁴³ Երաշխավորելու համար մարդկանց հասանելիությունը «պատշաճ» առողջապահական խնամքին,²⁴⁴ իրավասու մարմիններին խրախուսվում է անվճար ապահովել հետևյալ նվազագույն ծառայությունները բոլոր կալանավորված անձանց համար:²⁴⁵

- ▶ Կալանավայր ժամանելուն պես բժշկական զննում, որն անցկացվում է բուժաշխատողների կողմից²⁴⁶՝ հայտնաբերելու և բուժելու ցանկացած առողջական կամ հոգեկան հիվանդություն կամ պայմաններ, ինչպես նաև վնասվածքներ, որոնք կարող են ձեռքբերվել ձերբակալության

կամ կալանավորման ընթացքում, կամ բացահայտելու վարակիչ կամ փոխանցվող հիվանդությունների ռիսկերը,

- ▶ բժշկական զննում, ըստ անհրաժեշտության կալանավորման ընթացքում և կալանքից ազատման կամ վերադարձի վայրում,
- ▶ համապատասխան և որակյալ բժշկական օգնությունը պետք է լինի մատչելի, հասանելի և ընդունելի բժշկական զննումից հետո, ներառյալ համապատասխան անձին անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն տրամադրելը,
- ▶ շտապ բուժօգնություն և անհրաժեշտ ֆիզիկական և հոգեբանական հիվանդությունների դեպքում բուժում բուժաշխատողների կողմից,²⁴⁷
- ▶ տեսակցությունների, գնահատումների և բուժման հասանելիություն այն պայմանների և (կամ) ախտանիշների դեպքում, որոնք անհապաղ կյանքին վտանգ չեն սպառնում, ինչպիսիք են սեռական առողջության հետ կապված խնդիրները, սովորական մրսածությունը, վարակները, անքնությունը, անհանգստությունը և այլն,²⁴⁸
- ▶ հասանելիություն որակյալ ատամնաբուժական, ակնաբուժական և գինեկոլոգիական ծառայություններին;²⁴⁹
- ▶ բժշկական օգնության (օժանդակ) պարագաների առկայություն, ինչպիսիք են անվասայլակները, հենակները կամ ձեռնափայտերը;
- ▶ բժշկական զանգատի, նշանակման, գնահատման կամ բուժման հետազոտության ընթացքում, համաձայն պահանջի, որակավորված ազատ և անաչառ թարգմանիչ, որը խոսում է կալանավորված անձին հասկանալի լեզվով:²⁵⁰

5.2. Առողջապահական ծառայություններ

Կալանավայրում գտնվող առողջապահական խնամքի ծառայությունները մշտապես պետք է համապատասխանեն պետության ընդհանուր առողջապահական կառավարմանը:²⁵¹ Դա պահանջում է, որ բոլոր անհրաժեշտ բժշկական ծառայությունները, ներառյալ ժամանակին վիրաբուժական ընթացակարգերը,²⁵² հոգեբուժական առողջական խնամքը²⁵³ և ցանկացած անհրաժեշտ մասնագիտական բուժում, տրամադրվեն կալանավորված անձանց²⁵⁴ համապատասխան և պատշաճ չափանիշի համաձայն և, անհրաժեշտության դեպքում, մասնագիտացված հիվանդանոցներում:²⁵⁵

Բուժաշխատողների համար կարևոր է ուշադրություն դարձնել հետևյալին.

- ▶ բժշկական զննումների ժամանակ առկա բոլոր ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունները և (կամ) վնասվածքները, որոնք ներառում են թմրամիջոցների կամ ալկոհոլի օգտագործումից հետո հեռացման համախտանիշների (աբստինենցիա) տառապանքը և գենդերային բռնության հետ կապված վնասվածքները,²⁵⁶ և ազատությունից զրկման հետևանքով առաջացած սթրեսը կամ հիվանդությունը, անհրաժեշտ է ախտորոշել,

- ▶ ախտորոշումները պետք է լինեն հնարավորինս արագ և ճշգրիտ,²⁵⁷
- ▶ ախտորոշումից հետո բուժաշխատողները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ հայտնաբերված հիվանդությունը և (կամ) վնասվածքը բուժելու համար,²⁵⁸ օգնություն ցուցաբերելու վերականգնմանը և (կամ) կանխելու ցանկացած հնարավոր վատթարացում,²⁵⁹
- ▶ բուժումը և վերականգնումը պահանջում են համապատասխան բուժման պլանի հետևողական և գրագետ իրականացում, որին հաջորդում է համապատասխան բժշկական խնամքի պլանը,²⁶⁰
- ▶ առկա բժշկական բուժումները պետք է շարունակվեն համապատասխան չափանիշով, ըստ անհրաժեշտության,
- ▶ կալանավորված անձի բժշկական քարտը կամ հիվանդության պատմությունը պետք է տեղափոխման դեպքում հասանելի լինի բուժաշխատողներին,
- ▶ առողջապահական խնամքի ծառայությունները պետք է մատուցվեն այնպիսի պայմաններում, որոնք հարգում և պահպանում են կալանավորված անձանց պարկեշտությունը, անձեռնմխելիությունը, արժանապատվությունը և հիվանդների գաղտնիությունը:

Եական է, որ կալանավորված անձանց, ինչպես նաև նրանց փաստաբաններին հասանալի լինեն բժշկական զննությամբ հայտնաբերված տվյալները և (կամ) արդյունքները նրանց համար ընկալելի եղանակով և լեզվով, պայմանով, որ կալանավորված անձը լիովին համաձայն է այդպիսի բացահայտմանը:²⁶¹ Եթե բուժաշխատողները մտահոգված են, որ անձը չի կարողանում լիարժեք շփվել լեզվական խոչընդոտների պատճառով, պետք է որակավորված բանավոր կամ գրավոր թարգմանիչ տրամադրել առանց անհարկի ուշացման:

Բժշկական բուժման մասին ամբողջական տեղեկատվությունը պահանջում է լիարժեք և համապարփակ տեղեկատվություն առաջարկվող բուժման ախտորոշման, նպատակի և բնույթի, ինչպես նաև դրա հնարավոր հետևանքների և այդ բուժումը ձեռնարկելու կամ դրանից հրաժարվելու հնարավոր ռիսկերի և կողմնակի ազդեցությունների մասին: Տեղեկատվությունը պետք է լինի բավականաչափ պարզ և հասկանալի, որպեսզի տվյալ անձը լիովին գնահատի առաջարկվող բուժման անհրաժեշտությունը և ազատ տրամադրի իր համաձայնությունը²⁶² որևէ մեկի կողմից ցանկացած ճնշման բացակայության պայմաններում:

Համաձայնությունը կարող է ունենալ տարբեր ձևեր. այն կարող է լինել արտահայտիչ (բանավոր կամ գրավոր) կամ ենթադրյալ:

Բացառիկ դեպքերում, արտակարգ իրավիճակներում, եթե հնարավոր չէ համապատասխան համաձայնություն ստանալ կյանքը փրկող բուժման համար, անհրաժեշտ բժշկական բուժումը պետք է իրականացնել՝ անկախ անձի կամքից՝ ի շահ նրա առողջության:²⁶³ Նման իրավիճակներում բժշկական բուժումը սահմանափակվում է միայն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ միջամտություններով, որոնք չեն կարող հետաձգվել և չեն

տարածվում ոչ արտակարգ իրավիճակների վրա, ինչպիսիք են վերարտադրողական առողջությանը վերաբերող դեպքերը: ²⁶⁴

Առողջապահական խնամքը ապահովելու համար այն տրամադրվում է թափանցիկ ձևով, որը հնարավորություն կտա պատշաճ կերպով վերահսկել և վերանայել պրակտիկան և ծառայությունները. կարևոր է, որ բժիշկները յուրաքանչյուր խորհրդակցությունից, հետազոտությունից և բուժման ընթացքից հետո կազմեն համաժամանակյա և ճշգրիտ ծանուցում: ²⁶⁵ Դա կարելի է ապահովել հետևյալ գործոնները գրառումներում ներառելով.

- ▶ իրավասու և մանրակրկիտ հետազոտությունից հետո օբյեկտիվ բժշկական բացահայտումների ամբողջական հաշվետվություն: ²⁶⁶
- ▶ հիվանդի գանգատների ճշգրիտ հաշվետվություն,
- ▶ գնահատումից հետո առաջարկվող բուժման պլանը,
- ▶ համաձայնության ձևերի տրամադրում:

5.3. Առողջապահական ծառայություններ մատուցողներ

Արդյունավետ առողջապահական ծառայություն կալանավայրում կարող է տրամադրվել միայն այն դեպքում, եթե հաստատությունը համալրված է բավարար թվով որակավորված բուժաշխատողներով: Բժիշկների ներկայության տևողությունը և հաճախականությունը կարող են տարբեր լինել՝ կախված կալանքի տակ գտնվող անձանց թվից և կարիքներից և նոր ժամանողների հաճախականությունից: Եթե նրանք կարողանան ապահովել անհրաժեշտ բուժում, ապա բուժաշխատողների կամ բուժքույրական անձնակազմի առկայությունը կարող է բավարար լինել: Եթե առողջապահական ծառայությունը տրամադրվում է բուժաշխատողների կամ բուժքույրական անձնակազմի կողմից, ապա պետք է երաշխավորել բժիշկների կողմից կանոնավոր վերահսկողությունը: Արտակարգ իրավիճակների դեպքում բուժաշխատողները պետք է հասանելի լինեն օրվա և գիշերվա ցանկացած ժամի. հակառակ դեպքում կանոնավոր բժշկական խորհրդատվությունները կարող են սահմանափակվել որոշակի կանոնավոր խորհրդակցության ժամերով:

Առողջապահական ծառայությունները կարող են տրամադրվել պետական կամ մասնավոր մարմինների կողմից, ինչպիսիք են մասնավոր ընկերությունները կամ հասարակական կազմակերպությունները կամ միջազգային կազմակերպությունները: Կարևոր հարցն այն է, որ բուժաշխատողները մասնագիտորեն և դեոնտոլոգիապես կամ բժշկական էթիկայից ելնելով անկախ են (անկախ նրանից՝ նրանք կալանավայրերի աշխատողներ են, թե ոչ) և իրենց որոշումները հիմնում են վարչական կալանքի տակ գտնվող անձանց առողջական կարիքների վրա: ²⁶⁷ Բուժաշխատողների անկախությունը պետք է հարգել, և նրանց առաջարկությունները պետք է կատարվեն կալանավայրում գտնվող այլ անձնակազմի կողմից: Կարևոր է ապահովել, որ նրանք պատասխանատվություն չկրեն անհրաժեշտ բժշկական ծառայությունների ֆինանսական և գործնական հետևանքները հաշվի առնելու համար, քանի որ դա կարող է շահերի բախում առաջացնել: ²⁶⁸

Հետևաբար, կարևոր է հաշվի առնել հետևյալ անհրաժեշտ գործողությունները.

- ▶ կալանավայրում աշխատելու համար ներգրավել առնվազն մեկ որակավորված ընդհանուր մասնագիտացված բուժաշխատող և համապատասխան պատրաստվածություն ունեցող առողջապահական անձնակազմ,
- ▶ հնարավորության դեպքում թույլատրել անձանց ստանալ իրենց իսկ ընտրած բժշկի օգնությունը՝ նկատի ունենալով, որ տվյալ իրավիճակում կարող է պահանջվել, որ անձն ինքը կրի պահանջվող ծախսերը,²⁶⁹
- ▶ ցանկացած պահի առանց հապաղելու ապահովել որակավորված բուժաշխատողի հասանելիությունը շտապ բժշկական օգնության անհրաժեշտության դեպքում,²⁷⁰
- ▶ Ապահովել, որ կալանավայրում գտնվող ցանկացած հիվանդանոց կամ առողջապահական բաժանմունք մշտապես ապահովված լինի համապատասխան անձնակազմով և ռեսուրսներով՝ բոլոր հիվանդներին համարժեք և համապատասխան ուշադրություն և բուժում ապահովելու համար, ներառյալ հոգեբանական բուժումը:

Եթե անձը պահանջում է մասնագիտական բժշկական գնահատում, ախտորոշում²⁷¹ և (կամ) բուժում, նրան պետք է ուղեգրել և (կամ) տեղափոխել մասնագիտացված կամ քաղաքացիական հիվանդանոց, եթե համարժեքը հասանելի չէ կալանքի պայմաններում:²⁷² Այդ նպատակով կալանավայրերը պետք է համապատասխան անձնակազմով համալրված լինեն՝ ապահովելու արագ տեղափոխումը հիվանդանոցներ:²⁷³

5.4. Հատուկ իրավիճակների և կարիքների բավարարում

Կալանավայրերում որոշ անձինք կարող են ունենալ հատուկ առողջական կարիքներ կամ հատուկ խոցելիություններ: Այն դեպքում, երբ նման անձինք հայտնաբերվում են, մինչև նրանց կալանքի անհապաղ վերանայումը, նրանց կարիքները պետք է լինեն առաջնահերթություն և կապահանջվի հետևյալը:²⁷⁴

- ▶ քննել, թե արդյոք կարելի է համապատասխան բժշկական օգնություն տրամադրել կալանքի տակ գտնվող հատուկ առողջական կարիքներ ունեցող անձին,²⁷⁵
- ▶ առողջապահության ապահովում, որը համապատասխանում է գենդերային հատուկ կարիքներին: Օրինակ, նույն սեռին պատկանող առողջապահական անձնակազմը պետք է հասանելի լինի, հնարավորության դեպքում, կալանավորված անձի խնդրանքով,²⁷⁶
- ▶ կանոնավոր մշտադիտարկում,
- ▶ երաշխիք, որ համապատասխան բժշկական աջակցությունը բավարարում է կալանավորված անձի հատուկ խոցելիության կարիքներին:²⁷⁷

i. Հաշմանդամություն ունեցող անձինք

Եթե կալանավորման ընթացքում հայտնաբերվում է հաշմանդամություն ունեցող անձ, առաջնահերթություն պետք է լինի անհապաղ վերանայել

կալանքի համար նրա համապատասխանությունը՝ հաշվի առնելով նրա առողջական կարիքները:²⁷⁸ Միջանկյալ ժամանակահատվածում պետք է իրականացվեն հետևյալ միջոցները՝ կալանավայրերում առողջապահության համատեքստում միջազգային նվազագույն չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար.

- ▶ համապատասխան խնամքի և բուժման տրամադրում,²⁷⁹
- ▶ այդ անձինք կալանավայր ժամանելուն պես ենթարկվում են անհապաղ բժշկական զննման և գնահատման,²⁸⁰ կանոնավոր ստուգումների, ինչպես պահանջվում է դրանից հետո,
- ▶ ապահովել, որ գործող հատուկ միջոցները և ամենօրյա աջակցությունը տրամադրվեն միայն բժիշկների կողմից, այլ ոչ թե կալանքի տակ գտնվողների կամ չորակավորված անձնակազմի կողմից:²⁸¹

Հոգեկան առողջության կարիքներ (խնդիրներ) կամ հաշմանդամություն ունեցող անձինք²⁸² և ինքնավնասման և (կամ) ինքնասպանության հակումներ ունեցող անձինք պետք է ստանան անհապաղ և հետևողական մասնագիտական բժշկական օգնություն,²⁸³ և հասանելիություն ունենան համապատասխան խորհրդատվական ծառայություններին,²⁸⁴ մինչև նրանց կալանքի վերանայումը: Հոգեկան առողջության կարիք (խնդիր) ունեցող և ինքնավնասման և (կամ) ինքնասպանության հակումներ²⁸⁵ ունեցող անձանց առողջապահական խնամքը կարող է բարելավվել՝ հաշվի առնելով հետևյալ հարցերը:

- ▶ Կմ արդյոք բավարար թվով անձնակազմ, որը վերապատրաստվել է հոգեկան առողջության խնդիրների, ներառյալ գենդերային բռնության հետ կապված հարցերի մասով:
- ▶ Արդյոք համակարգերը և ընթացակարգերը բավարար են նման հատուկ կարիքներ ունեցող անձանց գնահատելու, բացահայտելու և մշտադիտարկելու համար:²⁸⁶
- ▶ Այն դեպքերում, երբ հոգեկան առողջության կարիքներ ունեցող կալանավորված անձինք չեն կարողանում հստակ կերպով բացատրել իրենց ախտանիշներն ու զգացումները, արդյոք անձնակազմը վերապատրաստված է նման իրավիճակները բացահայտելու և դրանց համապատասխան արձագանքելու համար:²⁸⁷
- ▶ Ապահովվում է խնամքի շարունակականությունը, եթե անձը նախկինում բուժվել է կալանավայրից դուրս:
- ▶ Արդյոք անձինք ստանում են համապատասխան աջակցություն, ուշադրություն և բժշկական օգնություն:
- ▶ Կմ ինքնասպանության կանխարգելման և ինքնավնասման կառավարման ռազմավարություն:
- ▶ Արդյոք անձանց հասանելի է անվճար խորհրդատվություն և անձամբ և (կամ) հեռախոսային աջակցության գիծը:
- ▶ Արդյոք կալանավայրում առկա են արտակարգ իրավիճակների արձագանքման պարագաներ և արդյոք դրանք բավարար քանակությամբ

են: Արդյո՞ք անձնակազմը վերապատրաստված է և գիտի, թե ինչպես օգտագործել այս սարքավորումները:

- ▶ Արդյո՞ք մշակված է բազմաողորտ մոտեցում կալանավորված անձանց նկատմամբ: (Տարբեր թիմերի միջև համակարգում՝ սոցիալական, հոգեբանական, բժշկական, անվտանգության, կառավարման և այլն):
- ▶ Արդյո՞ք կալանավորված անձանց հասանելի է մասնագիտացված բուժումը, ինչպես օր.²⁸⁸ հոգեբուժական բուժումը, անհրաժեշտության դեպքում, մասնագիտացված հաստատություններում կամ քաղաքացիական հիվանդանոցներում:

ii. Տարեցներ

Տարեցները, սովորաբար, ունենում են հատուկ առողջապահական կարիքներ, ինչը նրանց ավելի խոցելի է դարձնում կալանավայրերում: Մինչև խոցելիության հիման վրա իրենց կալանավորման անհապաղ վերանայումը, տարեց անձանց անհրաժեշտ են համապատասխան և գենդերազգայուն առողջապահական ծառայություններ՝ հաշվի առնելով նրանց տարիքը և հարակից բժշկական կարիքները:²⁸⁸

iii. Երեխաներ

Երեխաներին պետք է հասանելի լինեն հատուկ առողջապահական ծառայություններ, որոնք հաշվի կառնեն երեխաների հատուկ կարիքները, նրանց տարիքը և սեռը: Երեխաների համար հատուկ առողջապահական ծառայությունների մատուցումը ենթադրում է մանկաբույժների, առողջապահության մասնագետների և սոցիալական աշխատանքի և երեխաների զարգացման մասնագետների հասանելիություն: Երեխաները պետք է տեղեկացված լինեն երեխային մատչելի և տարիքին համապատասխան ձևով ցանկացած ախտորոշման և առաջարկվող բուժման մասին: Նրանք պետք է կարողանան տեղեկացված համաձայնություն տալ ցանկացած բուժումից առաջ: Եթե նրանք իրավասու չեն տրամադրել տեղեկացված համաձայնություն, պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի համաձայնություն տրամադրեն նրանց ծնողները, կամ ընտանիքից առանձնացված կամ առանց ուղեկցող երեխաների դեպքում՝ օրինական խնամակալը:²⁸⁹

iv. Հղի և կերակրող կանայք

Հղի և կրծքով կերակրող կանանց անհրաժեշտ է օգտվել համապատասխան և մասնագիտացված խնամքի առողջապահական ծառայություններից, ինչպիսիք են համապատասխան և համարժեք նախածննդյան և հետծննդյան առողջապահական խնամքը, որը տրամադրվում և վերահսկվում է որակյալ բուժաշխատողների կողմից (մանկաբարձներ, թերապևտներ, մանկաբարձ-գինեկոլոգներ մանկաբույժներ, սոնոգրաֆիստներ, նորածնային բուժքույրեր և այլն):²⁹⁰ Այս ծառայությունները պետք է լինեն համապարփակ և պետք է

բավարար խորհրդատվություն տրամադրեն կանանց ընդհանուր առողջության, ներառյալ նրանց սննդակարգային կարիքների վերաբերյալ:²⁹¹

v. Սեռական կամ գենդերային բռնության, խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի զոհեր

Սեռական կամ գենդերային բռնության, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձևերի զոհերը, որոնք առանց բացառության կարող են ներառել և տղամարդ, և կին զոհեր, կարիք ունեն համապատասխան մասնագիտացված խնամքի առողջապահական ծառայությունների հասանելիության՝ մինչև նրանց կալանքի անհապաղ վերանայումը: Դրանք կարող են ներառել.

- ▶ ցանկացած հոգեբանական և (կամ) ֆիզիկական վնասվածքի բուժում²⁹², ներառյալ սեռական ճանապարհով փոխանցվող վարակները և (կամ) հիվանդությունները, և սեռական առողջության խնամքը,
- ▶ անհապաղ դատաբժշկական գնահատում և ապացույցների հավաքագրում ենթադրյալ սեռական բռնության դեպքերով, մինչև կալանքի անհապաղ վերանայումը,
- ▶ տրավմայի բուժում և հոգեկան առողջության խորհրդատվություն,²⁹³
- ▶ ինքնասպանության և ինքնավնասման կանխարգելում:

vi. Մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհեր

Մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհերը կարող են ունենալ առողջական հատուկ կարիքներ, որոնք պահանջում են լրացուցիչ առողջապահական խնամքի վերաբերյալ նկատառումներ՝ մինչև նրանց կալանքի անհապաղ վերանայումը: Դրանք կարող են ներառել.

- ▶ ցանկացած ֆիզիկական և (կամ) հոգեկան առողջության կարիքների արագ գնահատում,²⁹⁴
- ▶ Առողջապահական խնամքի համապատասխան ապահովում,²⁹⁵ ներառյալ հոգեկան առողջության, վնասվածքի, սեռական և վերարտադրողական առողջության, անհապաղ բժշկական աջակցություն և դատաբժշկական ապացույցների հավաքագրում բռնաբարության և սեռական ոտնձգության դեպքերում, խորհրդակցություն և խորհրդատվություն:²⁹⁶

vii. Երկարատև կալանքի տակ գտնվող անձինք

Երկարատև կալանքի տակ գտնվող անձինք²⁹⁷ հատկապես խոցելի են ֆիզիկական և (կամ) հոգեբանական առողջական խնդիրների առաջացման կամ նախկինում գոյություն ունեցող հիվանդությունների սրման առումով:²⁹⁸

Տրամադրվող առողջապահական խնամքը պետք է հաշվի առնի կալանավորված անձանց հատուկ իրավիճակը և համապատասխանաբար արձագանքի տվյալ կարիքներին:

viii. Բժշկական մեկուսացման և կարանտինի մեջ գտնվող անձինք

Այլ կալանավորված անձանց փոխանցվող կամ վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ Covid-19) փոխանցումը կանխելու նպատակով իրավասու մարմինները կարող են քննարկել հետևյալ անձանց ֆիզիկապես բաժանումը.

- ▶ նրանք, ովքեր հաստատված փոխանցվող կամ վարակիչ հիվանդություններ ունեն (բժշկական մեկուսացում),
- ▶ նրանք, ովքեր կասկածվում են կամ գտնվում են փոխանցվող կամ վարակիչ հիվանդություններ ունենալու վտանգի տակ, կամ նման հիվանդություններ ունեցող անձանց հետ շփման մեջ են եղել կամ ընդհանուր առողջական վիճակով պայմանավորված կարանտինի մեջ են:

Կալանավորված անձը կարող է հայտնվել բժշկական մեկուսացման մեջ, երբ բուժաշխատողի կողմից հաստատված է փոխանցվող կամ վարակիչ հիվանդությունը, որով նա տառապում է կամ կարող է տառապել: Անձը կարող է կարանտինի ենթարկվել կալանավայր ժամանելուն պես (որոշակի տարածքում ընդհանուր առողջական վիճակի պատճառով), կամ կալանքի տևողությամբ (այն անձանց հետ սերտ շփման դեպքում, ովքեր ունեն կամ կասկածվում են, որ ունեն փոխանցվող կամ վարակիչ հիվանդություններ):

Երկու դեպքում էլ իրավասու մարմինները պետք է նկատի ունենան, որ ի տարբերություն մեկուսացման, որն օգտագործվում է որպես կարգապահական միջոց, բժշկական մեկուսացումը և կարանտինը պատժիչ բնույթ չեն կրում և պետք է ծառայեն միայն անձի առողջության պաշտպանության նպատակին: Երբ կիրառվում է բժշկական մեկուսացում և կարանտին, տուժած անձինք պետք է ստանան համապարփակ տեղեկատվություն դրանց նպատակի և տևողության մասին՝ իրենց հասկանալի լեզվով: Միայն այն իրավունքները, որոնց օգտագործումը անհամատեղելի է հիվանդության բնույթի հետ, կարող են սահմանափակվել մեկուսացման կամ կարանտինում պահվող անձանց նկատմամբ (օրինակ՝ ընտանեկան տեսակցությունները):

Թեև օրինական և ողջամիտ է ոչ էական գործունեության կասեցումը, սակայն մեկուսացման կամ կարանտինի մեջ գտնվող կալանավորված անձանց հիմնարար իրավունքները պետք է լիովին հարգվեն: Ավելին, արտաքին աշխարհի հետ շփման ցանկացած սահմանափակում, ներառյալ տեսակցությունները, պետք է փոխհատուցել այլընտրանքային կապի միջոցներով (օրինակ՝ հեռախոսային կամ ինտերնետ կապի) հասանելիության ավելացմամբ:²⁹⁹

Շատ կարևոր է, որ բժշկական մեկուսացման և կարանտինի տևողությունը չզերազանցի համապատասխան հիվանդություններին բնորոշ ժամկետները: Պետք է նկատի ունենալ, որ.

- ▶ բժշկական մեկուսացման մեջ գտնվող անձը պետք է անմիջապես ազատ արձակվի այն բանից հետո, երբ նրա լիարժեք ապաքինումը կհաստատվի որակավորված բժիշկի կողմից,
- ▶ կարանտինում գտնվող անձը պետք է ազատ արձակվի, եթե կասկածվող հիվանդությանը հատուկ ժամանակահատվածում նրա մոտ համապատասխան ախտանիշներ չեն գտնվում:

Բժշկական մեկուսացման մեջ կամ կարանտինում պահվելիս անձինք պետք է ենթարկվեն կանոնավոր բժշկական և հոգեբանական ստուգումների՝ նրանց առողջական վիճակը գնահատելու նպատակով: Այն դեպքերում, երբ կարանտինում գտնվող անձի մոտ զարգանում են փոխանցվող կամ վարակիչ հիվանդության ախտանիշներ, նա պետք է մեկուսացվի առանց անհարկի ուշացման:

Կախված հիվանդության բնույթից՝ մեկուսացված անձինք կարող են պահվել մեկուսարանում, մինչդեռ դա միշտ չէ, որ հնարավոր է կարանտինային պայմաններում: Երբ կարանտինում գտնվող անձինք պահվում են միասին, լիազոր մարմինները պետք է ապահովեն, որ.

- ▶ բնակելի տարածքները լավ օդափոխվեն և բավականաչափ առանձնացված լինեն ոչ կարանտինային տարածքներից,
- ▶ կարանտինային տարածք մուտքը թույլատրվում է միայն լիազորված անձնակազմին և պետք է ուղեկցվի անվտանգության համապատասխան միջոցներով (օրինակ՝ դիմակներ, ձեռնոցներ կամ հատուկ համազգեստ կրելը),
- ▶ բնակելի տարածքները գերբնակեցված չլինեն և պահպանվի սոցիալական հեռավորությունը:

Մեկուսացված կամ կարանտինում գտնվող անձինք կարող են ենթարկվել պարտադիր թեստերի մինչև ազատ արձակվելը՝ կախված հաստատված կամ կասկածելի հիվանդության բնույթից:

ix. Հացադուլավորներ

Հացադուլը տարածված երևույթ է այն իրավիճակում, երբ մարդիկ զրկված են ազատությունից: Հացադուլը կարող է օգտագործվել ազատությունից զրկված անձանց կողմից տարբեր նպատակների հասնելու համար, օրինակ՝ ազատագրման կամ իրավասու մարմինների գործողության կամ որոշման դեմ բողոքի:

Իրավասու մարմինները պարտավոր են հոգ տանել իրենց կալանավայրում կալանքի տակ գտնվող անձանց նկատմամբ: Խնամքի այս պարտականությունը ներառում է կալանավորված անձի կյանքի պաշտպանությունը, ներառյալ ինքնասպանության կանխումը և տվյալ անձի կողմից ցանկացած այլ գործողություն, որը կարող է հանգեցնել մահվան կամ անդամնալի ֆիզիկական վնասի: Հացադուլ սկսած կալանավորված անձը պետք է տեղեկացված լինի իր իրավունքների և իր առողջության համար հացադուլի հնարավոր

հետևանքների մասին և ենթարկվի կանոնավոր բժշկական և հոգեբանական ստուգումների՝ առողջական վիճակը պարզելու նպատակով:

Հացադուլի մեջ գտնվող կալանավորի կամքին հակառակ սնվելու որոշումը սկզբունքորեն կարող է հիմնավորվել՝ կանխելու այդ անձի մշտական ֆիզիկական վնասը կամ մահը:³⁰⁰ Հացադուլի դեպքում միջամտությունը, մասնավորապես՝ հարկադիր կերակրման ձևով, չպետք է նպատակաուղղված լինի հացադուլավորին հետ պահելու բողոքի ակցիան շարունակելուց: Հացադուլի (կամ ջրադուլի) մեջ գտնվող կալանավորված անձանց կառավարումը և հարկադիր կերակրման հարցը շատ զգայուն խնդիր է, որոնք առաջացնում են բազմաթիվ հիմնարար հարցեր, մասնավորապես իրավական, բժշկական, դեոնտոլոգիական և էթիկական բնույթի:³⁰¹ Համապատասխանաբար, ազատությունից զրկված անձանց հետ աշխատող անձնակազմը պետք է ունենա հացադուլների դեպքերի հետ աշխատելու գիտելիքներ և հմտություններ:

Հարկադիր սնուցումը, երբ դա հիմնավորված է օրենքով, պետք է իրականացվի մարդկային արժանապատվության նկատմամբ լիակատար հարգանքով և բժշկի կամ այլ բժշկական փորձագետի ներկայությամբ: Հարկադիր սնուցման համար օգտագործվող մեթոդները չպետք է լինեն անհարկի ցավոտ և պետք է կիրառվեն հմտությամբ և նվազագույն ուժի կիրառմամբ: Ընդհանուր առմամբ, հարկադիր սնուցումը պետք է հնարավորինս քիչ խախտի հացադուլավորի ֆիզիկական անձնամխելիությունը: Ցանկացած ֆիզիկական գործողության դիմելը պետք է խստորեն սահմանափակվի նրանով, որն անհրաժեշտ է հարկադիր սնուցման իրականացումն ապահովելու համար: Նման սահմանափակումը պետք է դիտարկվի որպես բժշկական խնդիր:³⁰² Պետք է միանշանակ խուսափել այնպիսի մեթոդներից, ինչպիսիք են հացադուլավորին ձեռնաշղթաներ հագցնելը կամ սնունդ ընդունելու ժամանակ ուժեղ ցավ պատճառելը:

Հացադուլի (կամ ջրադուլի) մեջ գտնվող անձին առանձնացված վայրում կամ մեկուսարանում տեղափոխելը չպետք է կրի սիստեմատիկ բնույթ, և դա երբեք չպետք է որոշվի որպես պատժիչ միջոց: Ցանկացած նման տեղակայում պետք է նախատեսվի միայն տվյալ անձին ավելի լավ վերահսկելու հստակ նպատակով³⁰³ և չպետք է ուղեկցվի պատժիչ բնույթի միջոցներով (օրինակ՝ անձին որևէ կահույքից կամ սարքավորումներից զուրկ, կամ չջեռուցվող խցում պահելը կամ ստիպելը՝ կրել պատռվածքների նկատմամբ կայուն հագուստ):³⁰⁴

5.5. Առողջապահական գրանցումներ և գաղտնիություն

Բժշկական գաղտնիությունը կարևոր դեր է խաղում մասնագիտական առողջապահական ծառայությունների մատուցման գործում: Բոլոր բուժառուներն իրավունք ունեն իրենց բժշկական խորհրդատվությունները, գնահատումները և բուժումը ստանալու առանձնացված և ամբողջական գաղտնիության պայմաններում: Սույն չափանիշը կիրառվում է կալանավայրերում՝

պահանջելով, որ կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ բժշկական գաղտնիությունը հարգվի այնպես ինչպես³⁰⁵ այն հարգվում է ազատության մեջ գտնվող անձանց դեպքում³⁰⁶։ Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ բոլոր հիվանդները պահպանեն իրենց բժշկական գաղտնիքը։ Դրանք ներառում են հետևյալը.

- ▶ Բժշկական խորհրդատվության և (կամ) հետազոտության ընթացքում ոչ առողջապահական մասնագետները չպետք է ներկա լինեն կամ գտնվեն լսելու կամ տեսնելու հնարավոր հեռավորության վրա։
- ▶ Եթե բացառիկ պատճառներով անձնակազմի անդամի ներկայությունը անհրաժեշտ է, օրինակ՝ անվտանգության նկատառումներից ելնելով, ապա այդ անձնակազմի ներկայացուցիչը պետք է լինի նույն սեռի, և գործընթացը մշտապես պետք է ապահովի հիվանդի բժշկական գաղտնիքի ապահովումը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը և արժանապատվությունը (այն կարող է տեղի ունենալ անվտանգության աշխատակիցների տեսադաշտում, սակայն չպետք է լսելի լինի վերջիններիս համար)։
- ▶ Գրավոր և բանավոր թարգմանիչները կարող են ներկա գտնվել խորհրդատվության կամ հետազոտության ժամանակ միայն բուժաշխատողների կամ հիվանդի խնդրանքով։
- ▶ Բուժառուների թվային և (կամ) ֆիզիկական բժշկական քարտերը պետք է պահվեն ապահով և անվտանգ վայրում և չպետք է հասանելի լինեն ոչ առողջապահական անձնակազմի համար³⁰⁷։
- ▶ Բուժառուները պետք է իրենց խնդրանքով հասանելիություն ունենան իրենց բժշկական փաստաթղթերին։
- ▶ Հիվանդների բժշկական փաստաթղթերը կարող են ուղարկվել երրորդ կողմին միայն նրանց լիարժեք և տեղեկացված համաձայնությամբ³⁰⁸։
- ▶ Բժշկական արտակարգ իրավիճակի (և վնասի անմիջական սպառնալիքի) դեպքում ոչ առողջապահական անձնակազմին կարող է թույլատրվել հասանելիություն ունենալ բժշկական փաստաթղթերի (օրինակ, էպիլեպսիայի կամ հեմոֆիլիայի դեպքում)՝ պահպանելով գաղտնիությունը։
- ▶ Այն դեպքերում, երբ անձը տեղափոխվում է մեկ այլ կալանավայր, բժշկական գաղտնիքը պետք է պահպանել։
- ▶ Ազատ արձակվելուց կամ այլ վայր տեղափոխելու հրամանը կատարելուց հետո տվյալ անձին պետք է տրվի նրա բժշկական գործի արձանագրության պատճենը։
- ▶ Պետք է հետևել հանրային առողջության միջազգային, եվրոպական և ազգային հանձնարարականներին ցանկացած կոնկրետ համաճարակի/համավարակի դեպքում։

5.6. Վատ վերաբերմունքի ենթադրությունների, կասկածների և բժշկական ապացույցների փաստաթղթավորում և հաղորդում

Առողջապահության ոլորտի աշխատողները կալանավայրերում, ամենայն հավանականությամբ, կհանդիպեն մարդկանց, ովքեր ենթարկվել են դաժան վերաբերմունքի: Սա կարող է ներառել մարդկանց թրաֆիքինգը և ստրկության ժամանակակից ձևերը, գենդերային կամ սեռական բռնությունը, և վատ վերաբերմունքը կամ խոշտանգումները, ինչպես կալանքից առաջ, այնպես էլ դրա ընթացքում:³⁰⁹ Այս իրավիճակներում շատ կարևոր է և բխում է հիվանդի լավագույն շահից, որ բժիշկները հայտնաբերեն վատ վերաբերմունքի որևէ նշան, անկախ նրանից՝ նրանք համարում են, որ դրանք տեղի են ունեցել անձի վարչական կալանքից առաջ կամ դրա ընթացքում:

Անձնակազմը պետք է հիշի, որ երբեմն անձը կարող է նույնիսկ չիմանալ, որ դաժան վերաբերմունքի զոհ է դարձել, կամ կարող է ժխտել իր զոհ լինելը: Սա կարող է պայմանավորված լինել սեռով, սոցիալական, մշակութային և (կամ) կրոնական գործոններով, որոնք կարող են ազդել անձի վերաբերմունքի վրա՝ որպես զոհ իրեն ճանաչելու, կամ վախի պատճառով, որ նա կարող է ենթարկվել հնարավոր վնասի, եթե նրանք զեկույցեն կամ բողոքեն իրենց հանգամանքների մասին:

Լուրջ ուշադրություն դարձնելով խոշտանգումների և (կամ) այլ դաժան վերաբերմունքի որևէ նշանի առկայությանը, բժիշկ-մասնագետները կարող են մեծացնել զոհերի նույնականացման հավանականությունը: Նման խոցելիության նշանները կարող են ներառել.

- ▶ Ինքնահայտարարագրում,
- ▶ Ֆիզիկական վնասվածք, ներառյալ հին և ապաքինված սպիներն ու հետքերը,
- ▶ Ֆիզիկական վնասվածք, որը չի համապատասխանում անձի բացատրությանը,
- ▶ տագնապի, անհանգստության, կամ վախի առկայություն,
- ▶ հոգեկան առողջության խնդիրների դրսևորումներ,
- ▶ ինքնավնասում և (կամ) ինքնասպանության փորձեր,
- ▶ ինքնավնասման և (կամ) ինքնասպանության փորձի միտումներ,
- ▶ բժշկական մասնագետների հետ շփվելու կամ նրանց բացատրություններ տալու դժկամություն. խոշտանգումների և (կամ) վատ վերաբերմունքի ժխտումը որոշ դեպքերում կարող է նաև դրական ցուցիչ լինել,
- ▶ անբացատրելի բացակայող ժամանակաշրջանների պատմություն,
- ▶ գողության, անձը հաստատող փաստաթղթերի, թմրանյութերի կամ սառը զենք կրելու հետ կապված քրեական հանցագործությունների պատմություն:

Եթե բուժաշխատողը մտավախություն ունի, որ իր հիվանդը որևէ տեսակի դաժան վերաբերմունքի զոհ է, նա պետք է ապահովի, որ դա անհապաղ,

ամբողջությամբ և ճշգրիտ կերպով գրանցվի և հաղորդվի համապատասխան մարմիններին, որպեսզի անհապաղ ձեռնարկվեն բոլոր համապատասխան քայլերը՝ պաշտպանելու կալանավորված անձին։³¹⁰

5.7. Հանրային առողջություն

Համաճարակի կամ համավարակի ընթացքում կալանավայրում առողջապահական խնամքը պետք է հարմարեցվի՝ ապահովելու, որ վարակիչ հիվանդությունների և/կամ հիվանդությունների տարածումը կասեցվի, զսպվի և մեղմվի, և կանխվի հետագա տարածման վտանգը։³¹¹ Կարևոր է, որ այս պարտավորությունների կատարման համար ձեռնարկվող ցանկացած միջոց հիմնավորված լինի օրենքով և կիրառվի ոչ խտրական ձևով։³¹² Ելնելով տվյալ հանրային առողջապահական իրավիճակի հատուկ կարիքներից՝ անվճար տրամադրվող համապատասխան միջոցները և ռեսուրսները կարող են ներառել.

- ▶ տեղեկատվության հավասար հասանելիություն,³¹³
- ▶ անհատական պաշտպանության միջոցներ,³¹⁴
- ▶ հիգիենայի պարագաներ, ինչպիսիք են օճառը, լվացող միջոցները և լվացքի փոշին,³¹⁵
- ▶ կալանավորված անձանց համաձայնությամբ կամ ներպետական օրենսդրությանը համապատասխան և նրանց բժշկական գաղտնիության պահպանմամբ զննման գործընթացները և կանոնավոր թեստավորումը,³¹⁶
- ▶ անձանց մեկուսացում որոնք կասկածվում են վարակի ժամանակահատվածում վարակիչ և (կամ) վարակիչ հիվանդություններ կրելու մեջ՝ միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխանող պայմաններում³¹⁷,
- ▶ որակյալ բժշկական մասնագետների կողմից նման անձանց արագ, համարժեք և անվճար բուժում,
- ▶ հասանելի են հաստատված պատվաստանյութերը ցանկացած անձի համար, ով ցանկանում է պատվաստվել՝ առաջնահերթություն տալով առողջապահական անձնակազմի կողմից որպես առավել խոցելի զնահատված անձանց համար,³¹⁸
- ▶ բավարար տարածք սոցիալական հեռավորության ցանկացախ կանոններին համապատասխանելու համար։³¹⁹

Նման իրավիճակներում կալանավորված անձինք, որոնք հատկապես խոցելի են, օրինակ՝ իրենց տարիքի կամ նախկինում գոյություն ունեցող հիվանդության պատճառով, պետք է պատշաճ կերպով պաշտպանված լինեն վարակներից։³²⁰ Նրանց անհրաժեշտ կլինի անհապաղ և համապատասխան առողջապահական խնամքի հասանելիություն, եթե նրանք վարակվեն։³²¹

Եթե իրավասու մարմինները դիմում են անհատների մեկուսացմանը՝ ի պատասխան հանրային առողջապահական իրավիճակի, ինչպիսին է

համաճարակը կամ համավարակը, և դա արդարացված է օրենքով³²², ապա կարևոր է, որ պահպանվեն կալանքի միջազգային նվազագույն չափանիշները, և որ նրանց կալանավորումը փաստացի չդառնա մեկուսացում կամ հանդիսանա դաժան վերաբերմունքի որևէ ծն:³²³ Այս համատեքստում կարևոր է նշել, որ մարդուն չպետք է մեկուսացնել միայն այն պատճառով, որ նա ՄԻԱԿ դրական է:

Հիշեք.

Իրավասու մարմինները պետք է կատարեն բժշկական զննումներ՝ նախապես սահմանված հստակ ընթացակարգի համաձայն, և բոլոր բուժաշխատողները պետք է պատշաճ կերպով համապատասխանաբար վերապատրաստվեն: Շման զննումներին վերաբերող մի քանի կարևոր կետերը հետևյալն են.

- ▶ Բժշկական զննումները պետք է կատարվեն բուժաշխատողների կողմից,
- ▶ հնարավորության դեպքում կին բժիշկները/բուժքույրերը պետք է հասանելի լինեն կանանց համար,
- ▶ շահագրգիռ անձինք պետք է պատշաճ կերպով տեղեկացված լինեն բուժզննման ընթացակարգի, մեթոդների և պատճառների մասին,
- ▶ շահագրգիռ անձը պետք է իրավունք ունենա արտահայտելու իր կարծիքն ու տեսակետը բժշկական զննության հետ կապված ցանկացած հանգամանքի վերաբերյալ,
- ▶ բժշկական զննումը պետք է կիրառի նվազագույն միջամտական մեթոդներ՝ անհրաժեշտ բժշկական տեղեկատվություն ստանալու համար,
- ▶ բժշկական զննության մեթոդները պետք է լինեն գենդերազգային, և հարգեն հետազոտության ենթարկվող անձի սեռը, տարիքը, էթնիկական, մշակութային, կրոնական կամ այլ յուրահատկությունները,
- ▶ բժշկական զննության արդյունքը պետք է հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացվի շահագրգիռ անձին. Արդյունքը կարող է նաև ներկայացվել իրավասու մարմնին միայն այն դեպքում, եթե դրա համար առկա է օրինական պատճառ կամ կալանավորված անձի համաձայնությունը,
- ▶ բժշկական զննության ընթացքում ձեռք բերված տվյալները պետք է պահպանվեն, դիտարկվեն որպես գաղտնի տեղեկատվություն և պատշաճ կերպով պաշտպանված լինեն.
- ▶ տվյալ անձինք պետք է ունենան արդյունավետ պաշտպանության իրավունք բժշկական հետազոտության հետ կապված ցանկացած պահանջի մասով, և նրանք պետք է պատշաճ կերպով տեղեկացված լինեն այդ իրավունքի մասին,
- ▶ բժշկական զննումները պետք է լինեն անվճար. սակայն, եթե տվյալ անհատը լրացուցիչ հետազոտություններ է պահանջում դրսից հրավիրվող բժիշկից, այդ հետազոտությունները կարող են լինել իր սեփական ծախսերի հաշվին:

Գործիքակազմ/հետազա ընթերցում

- ▶ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (OHCHR), [Կալանավորման ուղեցույց. Միգրանտների վարչական կալանք](#), 2006թ.
- ▶ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը (ՄԱԿ ՓՀԳՀ), [Ուղեցույց ապաստան հայցողների կալանավորմանը վերաբերող կիրառելի չափանիշների և չափորոշիչների և կալանավորման այլընտրանքների վերաբերյալ](#), 2012թ.
- ▶ ՄԱԿ ՓՀԳՀ, [Միջազգային կալանքի կոալիցիա. խոցելիության ստուգման գործիք. գործիք ապաստանի և միգրացիոն համակարգերի համար](#), 2016թ.
- ▶ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (OHCHR), [ՔՈՎԻԴ-19 ուղեցույց. OHCHR և COVID-19](#)
- ▶ ԽԿԿ այցերի հաշվետվությունների, հրապարակային հայտարարությունների և չափորոշիչների հավաքածու
- ▶ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն. [Անդրադառնալով ներգաղթային կալանքի առողջապահական մարտահրավերներին և կալանքի այլընտրանքներին. իրականացման ուղեցույց](#), 2022թ.

Գլուխ 6

ԱՆՁՆԱԿԱԶՄ

Անձնակազմի արդյունավետությունն ու արհեստավարժությունը պետք է բարելավվեն և ապահովվեն աշխատանքի ընդունման արդար, թափանցիկ և հետևողական գործընթացների, վերապատրաստման ժամանակացույցերի և կարգապահական և բողոքների ներկայացման համակարգերի միջոցով:

Անձնակազմին պետք է հնարավորություն ընձեռել գործատուին փոխանցել աշխատանքային ճնշումների վերաբերյալ իրենց մտահոգությունները կամ կարիքները՝ առանց վտանգելու իրենց աշխատանքի ապահովությունը: Դրան կարելի է հասնել՝ համապատասխան մշտադիտարկման և գնահատման քաղաքականության իրականացմամբ՝ ուղղված անձնակազմի բարեկեցության խնդիրներին. ցուցանիշների սահմանում և համապատասխան ընթացակարգերի ապահովում, ինչպիսիք են անձնակազմի կանոնավոր գնահատումները, աշխատանքի ընթացքում հետադարձ կապի հնարավորությունները, աշխատանքն ավարտելիս ելքի հարցազրույցները և անհրաժեշտության դեպքում աջակցության և (կամ) ուղղորդման ծառայությունների առկայությունը, օրինակ՝ աշխատանքային առողջության վերանայումից հետո:

6.1. Անձնակազմ և վերապատրաստում

i. Կադրերի հավաքագրում և ընտրություն

Կալանավայրերում աշխատող ողջ անձնակազմը պետք է ընտրվի խնամքով, ինչպես նաև պետք է ապահովվի աշխատակազմի պատշաճ քանակը, որպեսզի նրանք անհատապես և հավաքական ձևով կարողանան գործարկել հաստատությունը վարչական կալանքի պայմանների և կալանավորված անձանց նկատմամբ վերաբերմունքի միջազգային նվազագույն չափանիշներին համապատասխան:³²⁴

Վարչական կալանավայրերում աշխատող անձնակազմը պետք է ուշադիր ընտրվի՝ նկատի ունենալով նրանց աշխատանքի կոնկրետ համատեքստը ոչ ազատագրկման և ոչ պատժիչ միջավայրում: Ընտրության գործընթացում թեկնածուների համար չափանիշների առկայությունը կօգնի ապահովելու գնահատման հետևողական և համապատասխան չափանիշի մշտապես կիրառությունը, որպեսզի հավաքագրվեն ամենահամապատասխան թեկնածուները:³²⁵

Այդ չափանիշները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով.

- ▶ քրեական անցյալի բացակայություն և ազնվության դրսևորում,

- ▶ լեզվական հմտություններ (աշխատակազմի այլ անդամների հետ արդյունավետ հաղորդակցվելու կարողություն),³²⁶
- ▶ միջանձնային հմտություններ և համապատասխան անձնային հատկանիշներ,³²⁷
- ▶ մշակութային առումով զգայուն հաղորդակցության հմտություններ,³²⁸
- ▶ տարբեր մշակութային կամ կրոնական ծագում ունեցող մարդկանց հետ աշխատելու փորձ,
- ▶ ճնշման տակ արդյունավետ աշխատելու կարողություն,
- ▶ հավասարակշռություն տղամարդ և կին թեկնածուների ներկայացվածության մեջ,³²⁹
- ▶ անձնակազմի և կալանավորված անձանց գեղեցիկության համապատասխան հարաբերակցությամբ նույն սեռի անձնակազմի առկայությունը:

Կալանավորված անձանց իրավունքներն օրվա ցանկացած ժամի (այդ թվում՝ գիշերը) պատշաճ կերպով ապահովելու համար պետք է լինի բավարար անձնակազմ: Կախված նրանից, թե կալանավայրում կալանքի տակ տղամարդիկ և կանայք են, արական և իգական սեռի անձնակազմը, հնարավորության դեպքում, մշտապես պետք է բավարար քանակությամբ ներկայություն ապահովի (ներառյալ գիշերը) վարչական կալանքի տակ գտնվող բոլոր անձանց հատուկ կարիքները բավարարելու համար:³³⁰

ii. Վերապատրաստում

Ապահովելու համար, որ բոլոր աշխատակիցները լիովին տեղյակ են և ի վիճակի են կատարել իրենց բոլոր պարտականությունները կալանավայրում աշխատելիս, կարևոր է, որ նրանք շարունակաբար վերապատրաստվեն աշխատանքի ողջ ընթացքում՝ ծանոթանալու հետևյալ թեմաներին.

- ▶ ազգային և միջազգային գործիքների համառոտ նկարագրություն, որոնք առնչվում են իրենց դերին, կալանքի պայմաններին և կալանավորված անձանց նկատմամբ վերաբերմունքին,³³¹
- ▶ վարքագծի կանոնագիրք,
- ▶ անձնակազմի բոլոր անդամների պարտականությունները, ներառյալ մարդու իրավունքների հարգումը կալանավորման համատեքստում,
- ▶ տվյալների և տեղեկատվության պաշտպանության մասին օրենքներ³³², ներառյալ գաղտնիության կանոնները,³³³
- ▶ առաջին օգնություն,
- ▶ առողջական և անվտանգության ընթացակարգեր,
- ▶ ճգնաժամային կառավարման ռազմավարություններ, ներառյալ արտակարգ իրավիճակների ընթացակարգեր,
- ▶ ազդարարման, անձնակազմի բողոքների ընդունման և քննման ընթացակարգեր,

- ▶ սթրեսի, ֆիզիկական և (կամ) հոգեկան առողջության հնարավոր ախտանիշների և ինքնավնասման և ինքնասպանության ռիսկերի հայտնաբերում և անհրաժեշտ հետագա գործողություններ, ինչպիսիք են ուղղորդումները մասնագետներին և այլ օժանդակ ծառայություններին,³³⁴
- ▶ խոցելի խմբերի հատուկ կարիքներ,
- ▶ մշակութային տեղեկացվածություն, կրոնական հանդուրժողականություն և զգայունակություն,
- ▶ միջանձնային³³⁵ և միջմշակութային հաղորդակցություն,³³⁶
- ▶ կարգուկանոնի, անվտանգության, կարգապահության և զսպման միջոցների պահպանմանն առնչվող քաղաքականություն և կանոններ. ներառյալ նման
- ▶ կանոններին կամ քաղաքականությանը չհամապատասխանելու հետևանքները,³³⁷
- ▶ բազմազանության, ներառյալ սոցիալական, մշակութային, լեզվական և կրոնական բազմազանության, կանանց նկատմամբ բռնության, մարդկանց թրաֆիքինգի, գենդերային հավասարության և միջմշակութային խնդիրների ընկալումը,³³⁸ և խոցելի մարդկանց հատուկ կարիքները:

Ապահովելու համար անձնակազմի գիտելիքների ու հմտությունների նորացումը և թարմացումը, կարևոր է հնարավորինս կանոնավոր կերպով նրանց տրամադրել ոչ պարտադիր վերապատրաստման անվճար դասընթացներ: Համապատասխան անձնակազմը, մասնավորապես առաջին գծում աշխատող կազմը, որն անմիջականորեն շփվում է կալանավորված անձանց հետ, առողջապահական անձնակազմը և խոցելի անձանց հետ կապված հատուկ պարտականություններ ու պատասխանատվություններ ունեցող անձնակազմը, պետք է նաև վերապատրաստվի խոցելի անձանց և նրանց կարիքները զննելու և բացահայտելու վերաբերյալ, և նրանց համապատասխան օգնության ծառայություններ ուղղորդելու վերաբերյալ: Անձնակազմի մյուս մասը, օրինակ՝ կալանավորված անձանց հետ անմիջական կապի մեջ չգտնվող անձինք, պարտադիր չէ, որ հատուկ վերապատրաստում անցնեն խոցելի խմբերի բացահայտման վերաբերյալ և կարող են կամավոր հիմունքներով մասնակցել նման վերապատրաստման դասընթացներին:

iii. Մասնագիտական պարտականություններ

Կալանավայրում անձնակազմի անդամների պարտականությունները, վարքագծի կանոնները և գործառնությունները տարբերվում են՝ կախված նրանց հատուկ պաշտոններից և ցանկացած մասնագիտական և (կամ) կանոնակարգային պարտականություններից, որոնք նրանք կարող են ստանձնել: Ի լրումն այլ կիրառելի մասնագիտական, կարգավորող և (կամ) պայմանագրային պարտավորությունների, որոնք արդեն իսկ ստանձնել են անձնակազմի անդամները, բոլոր անդամները պետք է ապահովեն իրենց համապատասխանությունը հետևյալ նվազագույն չափանիշներին:³³⁹

- ▶ Կալանքի տակ գնտվող բոլոր անձանց խնամքի պարտավորություն,

- ▶ բոլոր կալանավորված անձանց մարդու իրավունքների լիարժեք պաշտպանություն, խթանում և հարգանք՝ պահանջելով, որ անձանց կալանքի և վերաբերմունքի պայմանները համապատասխանեն նվազագույն միջազգային չափանիշներին,³⁴⁰
- ▶ հարգանքով վերաբերվել բոլոր կալանավորված անձանց,³⁴¹
- ▶ որևէ հանգամանքում ոչ ուղղակիորեն, ոչ անուղղակիորեն չխթանել, չենթարկել կամ չհանդուրժել խոշտանգումներ կամ դաժան վերաբերմունք կամ գենդերային հիմքով որևէ տեսակի բռնություն որևէ կալանավորվածի նկատմամբ, ցանկացած անձի կողմից, լինի դա անձնակազմի անդամ, թե կալանավորված անձ,³⁴² և նման վարքագծի մասին տեղեկացնել և հաղորդել լիազոր մարմիններին,³⁴³
- ▶ հարգել բազմակարծությունն ու բազմազանությունը, խտրականություն չդնել որևէ կալանավորված անձի նկատմամբ՝ հիմնված որևէ պաշտպանված հատկանիշի վրա, որը նրանք կարող են ունենալ,³⁴⁴ և նման վարքագծի մասին տեղեկացնել և հաղորդել լիազոր մարմիններին:³⁴⁵
- ▶ լիովին հաշվի առնելով անհանդուրժողականության բոլոր ձևերի (ռասիզմ, սեքսիզմ, կրոնական անհանդուրժողականություն, այլատյացություն, հոմոֆոբիա և տրանսֆոբիա) մարտահրավեր նետելու և դրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև խթանել գենդերային զգայունությունը և կանխել սեռական և գենդերային բռնությունը: ազգային օրենսդրությամբ ամրագրված կամ միջազգային չափանիշներից բխող գաղտնիության կանոններին համապատասխան՝ պահպանելով իրենց պաշտոնական կարողությունների շնորհիվ ստացվող տեղեկատվության գաղտնիությունը,
- ▶ անձնակազմ-կալանավոր ոչ պատշաճ հարաբերությունների կամ դինամիկայի մեջ չներգրավվել, օրինակ՝ սեռական հարաբերությունները, ցանկացած տեսակի շահագործումը կամ մանիպուլյատիվ կամ վիրավորական վարքագիծը:

Եթե անձնակազմի որևէ անդամը հիմքեր ունի ենթադրելու, որ կալանավորված անձը եղել կամ հնարավոր է, որ դառնա խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձևերի կամ բռնության այլ ձևերի զոհ, ապա հարցը պետք է անհապաղ հաղորդել և քննարկել իրավասու մարմինների հետ: Որպեսզի իշխանությունները հետաքննեն մեղադրանքները, անձնակազմին պետք է խրախուսել անհապաղ հաղորդել կասկածելի դեպքերի մասին: Անձնակազմի համար պետք է ստեղծել իրավական և վարչական դաշտ՝ համապատասխան միջադեպերի մասին զեկուցելու համար: Անձնակազմը պետք է կարողանա զեկուցել միջադեպերի մասին և պահպանել իր ինքնության գաղտնիությունը:

Իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ վարքագծի կանոնները իրապարակվեն և հասանելի լինեն անձնակազմի բոլոր անդամներին, ինչպես նաև ընթերցվեն և հասկացվեն որևէ դեր ստանձնելուց առաջ: Իրավասու մարմինները պետք է պահանջեն, որ անձնակազմի բոլոր պայմանագրերը և (կամ) հանձնարարականները ներառեն պայմաններ, որոնք պահանջում են համապատասխանություն վերը նշված բոլոր պարտականություններին և վարքագծի կանոններին:³⁴⁶

6.2. Արտակարգ իրավիճակների կառավարում

Համաձայն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի և այլ համապատասխան միջազգային փաստաթղթերի՝ իրավասու մարմինները պարտավոր են պաշտպանել իրենց բացառիկ վերահսկողության ներքո գտնվող անձանց կյանքը, ինչպես կալանավորված անձանց դեպքում: Պարտավորությունը կատարելու համար պետությունները պետք է ապահովեն կալանավորված անձանց անվտանգությունը արտակարգ իրավիճակներում: Այդ նպատակով պետք է համապատասխան ընթացակարգեր իրականացվեն արտակարգ իրավիճակները կառավարելու համար: Կալանավայրերը և դրանց ամենօրյա կառավարման և գործունեության համար պատասխանատու անձնակազմը պետք է ունենան լիարժեք հնարավորություններ և ռեսուրսներ՝ ցանկացած պահի հաղթահարելու բոլոր տեսակի արտակարգ իրավիճակները: Կան տարբեր տեսակի արտակարգ իրավիճակներ, որոնք պետք է կանխատեսել և պատրաստվել: Արտակարգ իրավիճակների տարբեր տեսակները, որոնք կներկայացվեն տարբեր մակարդակներով, ներառում են.

- ▶ խիստ եղանակային պայմաններ,
- ▶ հրդեհ և պայթյուններ,
- ▶ վտանգավոր նյութեր,
- ▶ համավարակ/համաճարակ/վարակիչ հիվանդության բացահայտում,
- ▶ անկարգություն / ապստամբություններ,
- ▶ պատանդառություն,
- ▶ անձնակազմի կամ կալանավորված անձանց դժբախտ պատահարներ,
- ▶ ինքնասպանության փորձեր,
- ▶ վնասվածքներով միջադեպեր,
- ▶ մահեր:

Ազգային և միջազգային օրենքներին համապատասխան արտակարգ իրավիճակների ընթացակարգերի իրականացումը կօգնի խթանել բոլոր անձանց ապահովությունն ու անվտանգությունը, օրինակ՝

- ▶ արտակարգ իրավիճակի տեսակին և մակարդակին համապատասխան գործառնական և արտակարգ իրավիճակների ծրագրերի պլանավորում և վերանայում՝ համապատասխան մասնագետների հետ խորհրդակցությամբ,
- ▶ հնարավորություն կալանավորման ընթացքում բոլոր անձանց ցանկացած պահի հայտնելու արտակարգ միջադեպի մասին,³⁴⁷
- ▶ ապահովել, որ բոլոր անձինք տեղեկացված լինեն այն մասին, թե ինչպես կարող են հայտնել միջադեպերի մասին և ունենան ռեսուրսներ դա անելու համար,³⁴⁸
- ▶ ներպետական և միջազգային իրավունքին համապատասխան ռիսկերի գնահատման իրականացում,
- ▶ ապահովել առաջին բուժօգնության ոլորտում վերապատրաստված անձնակազմի հստակ նույնականացումը (կրելով առաջին օգնության

կրծքանշաններ կամ ցուցադրելով առաջին օգնության որակավորված անձնակազմի լուսանկարներն ու անունները կալանավայրում),

- ▶ ապահովել առաջին օգնության պարագաները բավարար քանակությամբ բոլոր բնակեցված վայրերում,
- ▶ ապահովել հրդեհային անվտանգության սարքավորումների անվտանգ տեղադրումը, աշխատանքային վիճակում և կանոնավոր ստուգումը, անհրաժեշտության դեպքում, արագ սպասարկումը (ծխի/ջերմային սենսորների և ահազանգերի, հրդեհաշիջման սարքերի և ցնցուղների ստուգում),
- ▶ վթարային ելքի երթուղիների և տարիանման վայրերի պատշաճ ցուցումների ապահովելը,
- ▶ անվտանգության միջոցառումների գրանցամատյանների լրացման և թարմացման ապահովում:

Հիշեք.

Կարևոր է ապահովել, որ մարդիկ, ովքեր աշխատում են այն միջավայրում, որտեղ կան կալանավորված անձինք, լինեն լիարժեք կերպով վերապատրաստված իրենց համապատասխան պարտականությունների և պատասխանատվությունների, առողջության և անվտանգության և պաշտպանության ընթացակարգերի վերաբերյալ, օրինակ՝

- ▶ արդար և համապատասխան աշխատանքի և պայմանագրերի կնքման գործընթացներ՝ ապահովելու համար համապատասխան հմտություններով, փորձով և գիտելիքներով առավել հարմար թեկնածուներ, որոնք ընտրվում են կոնկրետ դերի համար,
- ▶ պարտադիր վերապատրաստման ամբողջական իրականացում և կոնկրետ աշխատակցի դերին և պարտականություններին հատուկ շարունակական զարգացում,
- ▶ հնարավորության դեպքում ոչ պարտադիր վերապատրաստման շարունակական հիմունքներով խրախուսում:

Գործիաքակազմ/հետագա ընթերցում

- ▶ EASO-ի ուղեցույց արտակարգ իրավիճակների պլանավորման վերաբերյալ ընդունման համատեքստում, 2018թ.
- ▶ Ապաստանի և ընդունարանի անձնակազմի բարեկեցության վերաբերյալ գործնական ուղեցույց
- ▶ Գործնական ձեռնարկ ներգաղթի կալանքի մշտադիտարկման վերաբերյալ
- ▶ ԽԿԿ այցերի հաշվետվությունների, հրապարակային հայտարարությունների և չափորոշիչների հավաքածու

Գլուխ 7

ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Այս բաժինը, հիմնվելով հիմնական միջազգային և եվրոպական չափանիշների վրա, առաջարկում է հիմնական սկզբունքներ, գնահատման չափանիշներ, գործնական նկատառումներ և ընդհանուր առաջարկություններ՝ կապված ներգաղթի կալանավայրերի կազուկանոնի պահպանման առանձնահատկությունների հետ: Այս գլուխը նախատեսված է կալանավայրերում պահվող անձանց հետ սերտ համագործակցող ողջ անձնակազմի համար:

7.1. Անվտանգություն, կարգապահություն, մեկուսացում և խափանման միջոցներ

Կալանավայրերը պետք է գործեն այնպես, որ պաշտպանեն և խթանեն կալանքի տակ գտնվող բոլոր անձանց ապահովությունն ու անվտանգությունը:³⁴⁹ Սա պահանջում է, որ պահպանվի կարգուկանոնի համակարգը՝ երաշխավորելով կալանքի պայմանների նվազագույն չափանիշները, որոնք հարգում են մարդու իրավունքները և արժանապատվությունը,³⁵⁰ կանոնաւոր և արդյունավետ ռիսկերի գնահատում, ապահովության և անվտանգության հաշվետվությունների ընթացակարգեր, որոնք ցանկացած պահի ազատորեն հասանելի են կալանավորված անձանց և անձնակազմին³⁵¹ և, անհրաժեշտության դեպքում՝ համաչափ անվտանգության և կարգապահական միջոցներ՝ հիմնված ռիսկերի գնահատման վրա:³⁵²

i. Անվտանգություն և կարգապահություն

Կարգապահական կանոնները որպես իրենց միակ նպատակ պետք է ապահովեն կալանավայրում կարգուկանոնի պահպանում և վարչական կալանքի տակ գտնվող անձանց, ինչպես նաև կալանավայրում գտնվող անձնակազմի և երրորդ անձանց անվտանգության պաշտպանությունը:³⁵³ Այդ կանոններին չհամապատասխանելը պետք է լուծել առաջին հերթին հաշտեցման կամ միջնորդության միջոցով, ըստ անհրաժեշտության: Ուղեցույցի նպատակներից ելնելով՝ կարգապահական կանոնները պետք է ընկալվեն որպես վարչական կալանքի տակ գտնվող անձանց վարքագծի և կարգապահական կանոնների ցանկացած խախտման դեպքում որոշակի միջոցներ կիրառելու կանոններ: Կարգապահական կանոնները պետք է լինեն հստակ և գրավոր՝ պարզ սահմանելով բոլոր կարգապահական իրավախախտումները և հնարավոր հետևանքները, ինչպես նաև կարգապահական միջոցներ կիրառելու կարգը:

Միջազգային նվազագույն չափորոշիչները պահանջում են, որ կիրառվող անվտանգության և (կամ) կարգապահական միջոցները օգտագործվեն միայն որպես վերջին միջոց և նվազագույն ժամկետով, որն անհրաժեշտ է կալանավարում ապահովությունն ու անվտանգությունը ապահովելու համար:³⁵⁴

Կալանավորված անձինք պետք է բանավոր տեղեկացված լինեն անվտանգության և (կամ) կարգապահական կանոնների մասին և նրանց պետք է հանձնեն կանոնների գրավոր պատճենը տվյալ անձի համար հասկանալի լեզվով և ձևով:³⁵⁵ Կալանավորված անձանց համար պետք է պարզ և կանխատեսելի լինի, թե ինչպիսի վարքագիծը կարող է հանգեցնել անվտանգային և (կամ) կարգապահական միջոցների և ինչ իրավունքներ ունի տվյալ անձը կարգապահական միջոցներ կիրառելու ընթացակարգում:

Ցանկացած կալանավորված անձ, որը ենթարկվում է կարգապահական գործընթացի, ենթակա է միջազգային իրավունքով նախատեսված պատշաճ ընթացակարգի: Որպեսզի այդ իրավունքը չխաթարվի, անհրաժեշտ են հետևյալ երաշխիքները.

- ▶ Կարգապահական միջոցները և դրանց կիրառման ընթացակարգերը պետք է հստակ սահմանվեն:³⁵⁶ Բոլոր կարգապահական ընթացակարգերը պետք է սահմանվեն օրենքով:³⁵⁷ սա ներառում է ցանկացած կարգապահական միջոցների տեսակներն ու տևողությունը, պատասխանատու որոշում կայացնողը և համապատասխան վերանայման և (կամ) բողոքների ներկայացման գործընթացները:³⁵⁸
- ▶ Կարգապահական խախտման մեջ մեղադրվող բոլոր կալանավորված անձինք պետք է իրենց հասկանալի լեզվով ու ձևով և մանրամասն տեղեկացվեն համապատասխան մեղադրանքի և դրա պատճառների մասին, և նրանց պետք է առաջարկվեն համապատասխան և անհրաժեշտ երաշխիքներ՝ իրենց պաշտպանությունը նախապատրաստելու և ներկայացնելու համար, եթե այդպիսի ցանկություն ունեն:³⁵⁹
- ▶ Նշանակված ցանկացած կարգապահական միջոց պետք է համաչափ լինի կարգապահական իրավախախտմանը՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, ներառյալ կալանավորված անձի անձնական հանգամանքները: Կարգապահական տույժի համաչափությունը նշանակում է, որ նշանակված միջոցը կարգապահական կանոնների խախտման անմիջական հետևանք է և համարժեք է կատարված խախտմանը:³⁶⁰
- ▶ Կարգապահական միջոցները երբեք չպետք է լինեն կամայական կամ չափազանցված՝ թե՛ տևողության, թե՛ շրջանակի առումով:³⁶¹
- ▶ Կարգապահական միջոցները երբեք չպետք է կրեն խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի որևէ ձև:
- ▶ Կալանավորված անձանց պետք է տրվի բողոք ներկայացնելու և իրավասու և անկախ մարմնի առջև կարգապահական միջոցները վիճարկելու իրավունք:³⁶² Իրավասու մարմինը պետք է լինի անձնապես և ինստիտուցիոնալ անկախ և ի վիճակի լինի չեղարկել այդ միջոցը:

ii. Մեկուսացում

Ընդհանուր առմամբ, պետք է խուսափել մեկուսացման և մենախցի կիրառումից,³⁶³ բացառությամբ այն դեպքերի, երբ այն խիստ անհրաժեշտ է որպես վերջին միջոց:³⁶⁴ Ցանկացած նման մեկուսացման կամ մեկուսարանի տևողությունը պետք է սահմանափակվի որոշակի ժամանակով³⁶⁵ և լինի հնարավորինս կարճ ժամկետով, որն անհրաժեշտ է օրինական անվտանգության նպատակին հասնելու համար³⁶⁶ միաժամանակ ապահովելով, որ պայմանները երբեք չհասնեն լիակատար զգայական և սոցիալական մեկուսացման իրավիճակին:³⁶⁷

Կալանավորված անձինք երբեք չպետք է ենթարկվեն նման ճնշող և պատժիչ միջոցառմանը, եթե դա արդարացված չէ կարգուկանոնի և անվտանգության նկատառումներով ռիսկի գնահատումից հետո և չի իրականացվում միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխան: Նման միջոցի կիրառման դեպքում պետք է լինեն նվազագույն երաշխիքներ՝ կալանավորված անձի բարեկեցությունն ապահովելու համար:³⁶⁸ Այս երաշխիքները ներառում են.³⁶⁹

- ▶ մեկուսացման և (կամ) մեկուսի բանտարկության արագ, ամբողջական և ճշգրիտ արձանագրություն, ներառյալ իրավական հիմքը, պայմանները, տևողությունը և ներգրավված անձնակազմը,³⁷⁰
- ▶ բժշկի և այլ բուժաշխատողների առկայությունը, ովքեր կարող են վերահսկել ֆիզիկական և մտավոր պայմանները և անհապաղ ապահովել համապատասխան բժշկական գնահատում և բուժում,³⁷¹
- ▶ բժշկական զննումներ մեկուսացումից առաջ, ընթացքում և հետո,³⁷²
- ▶ օրական առնվազն մեկ ժամ բացօթյա վարժություններ,³⁷³
- ▶ բողոքների ներկայացման ներքին և արտաքին մեխանիզմների ազատ և գաղտնի հասանելիություն:³⁷⁴

iii. Խափանման միջոցներ

Կալանավորված անձանց նկատմամբ ուժ չպետք է կիրառվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է³⁷⁵ ինքնապաշտպանության կամ օրինական կարգուկանոնի նպատակներով:³⁷⁶ Հետևյալ սկզբունքներն ու միջոցները կօգնեն մեղմել սույն ստանդարտից շեղվելու ռիսկերը,

- ▶ ցանկացած ուժի և (կամ) զսպման կիրառում պետք է իրականացնել այնպես, որ հարգվեն կալանավորված անձի իրավունքները և արժանապատվությունը,³⁷⁷
- ▶ պետք է օգտագործել միայն համաչափ ուժի կամ զսպման միջոցներին նվազագույն մակարդակ,
- ▶ ուժի և (կամ) զսպման միջոցների կիրառումը պետք է լինի ամենակարճ ժամանակում, որն անհրաժեշտ է օրինական նպատակին հասնելու համար,³⁷⁸

- ▶ ուժի կամ զսպման կիրառումը երբեք չպետք է օգտագործել որպես պատժի միջոց,
- ▶ Շղթաներ կամ կապանքներ ոչ մի դեպքում չպետք է օգտագործվեն կալանավորված անձանց նկատմամբ:

Պետք է մշակվեն մանրամասն կանոններ, որոնք կկարգավորեն նման մեթոդների կիրառումը, և անձնակազմը պետք է ամբողջությամբ վերապատրաստվի դրանց վերաբերյալ՝ նախքան որևէ նման մեթոդ կիրառելը: Կանոնները պետք է ընդգրկեն առնվազն հետևյալը.

- ▶ ուժի և (կամ) զսպման թույլատրելի միջոցներ և սարքավորումներ,
- ▶ իրավասու մարմիններ , որոնց թույլատրվում է իրականացնել բոլոր թույլատրելի մեթոդները,
- ▶ գործընթացներ և միջոցներ բոլոր թույլատրելի մեթոդների համար,
- ▶ ուժի և (կամ) զսպման ցանկացած կիրառումից հետո զեկուցելու և ծանուցելու ընթացակարգեր,
- ▶ նման կանոնների խախտման հետևանքները:

7.2. Խուզարկություններ

Կալանավորված անձանց արժանապատվության պաշտպանությունն ու խթանումը և կալանավայրերում մարդասիրական վերաբերմունքը պահանջում են, որ խուզարկություններ չանցկացվեն նրանց անձի կամ գույքի նկատմամբ, եթե դա անհրաժեշտ և համաչափ չէ օրինական նպատակին:³⁷⁹

Անձի խուզարկությունները պետք է ենթադրեն նվազագույն երաշխիքներ ազգային և միջազգային իրավունքի համաձայն³⁸⁰ և պետք է հետևեն հետևյալ կանոններին.

- ▶ Բոլոր խուզարկությունները պետք է համապատասխանեն նման խուզարկությունները կարգավորող իրավական ընթացակարգերին,
- ▶ Մարմնի խուզարկությունները պետք է իրականացվեն նույն սեռին պատկանող անձանց կողմից:
- ▶ Խուզարկությունները պետք է տևեն անհրաժեշտ ամենակարճ ժամանակահատվածով:
- ▶ Խուզարկությունները պետք է ցուցաբերեն պատշաճ ուշադրություն և լիակատար հարգանք կալանավորված անձի մարդու իրավունքների նկատմամբ³⁸¹, ներառյալ նրանց գաղտնիության իրավունքը³⁸² և սեփականությունից օգտվելու իրավունքը:
- ▶ Ընթացակարգը պետք է իրականացնի միայն խուզարկության օրինական լիազորություն ունեցող անձնակազմը:
- ▶ Եթե բացառիկ դեպքերում մերկ խուզարկություն է անհրաժեշտ, ապա դա կարող է անել միայն նույն սեռին պատկանող աշխատակիցը,

որն իրավասու է վարել ընթացակարգը³⁸³ այնպես, որ լիովին հարգի կալանավորված անձի արժանապատվությունը³⁸⁴ և գաղտնիությունը:³⁸⁵

- ▶ Պետք է կազմել և պահել խուզարկությունների օպերատիվ, ամբողջական և ճշգրիտ արձանագրություն:

Հիշեք.

Իրավասու մարմինները պատասխանատու են բոլոր կալանավորված անձանց առողջության և անվտանգության համար: Կարգ ու կանոնի պահպանմանը այնպիսի ձևով, որը լիովին հարգում է մարդկանց մարդու իրավունքները, կարելի է հասնել՝ ապահովելով, հետևյալը.

- ▶ կիրառված անվտանգության և (կամ) կարգապահական ցանկացած միջոց նախատեսված է օրենքով, համաչափ է իրավախախտմանը և օգտագործվում է միայն որպես վերջին միջոց՝ ապահովությունն ու անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն ժամանակահատվածում,
- ▶ կալանավորված անձինք, որոնք ենթարկվում են նման միջոցների, տեղեկացված են իրենց դեմ ներկայացված մեղադրանքի (մեղադրանքների) և ապացույցների մասին, կարող են արձագանքել մեղադրանքին (մեղադրանքներին) և կարող են բողոքարկել ցանկացած ոչ նպաստավոր որոշում օրենքով սահմանված իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնին՝ հասանելիություն ունենալով օրինական ներկայացուցչության ցանկացած կարգապահական վարույթում,
- ▶ Կալանավորված անձինք կարող են բողոքել կալանավայրից և (կամ) նրա անձնակազմից՝ օգտագործելով բողոքների ներքին մեխանիզմները, որոնք գործում են արդար, արդյունավետ և թափանցիկ՝ առանց որևէ հետևանքների բողոք ներկայացնող անձի ապահովության և անվտանգության համար,
- ▶ Կարգապահական վարույթի և (կամ) պատժամիջոցների կիրառման ժամանակ կալանավորված անձանց՝ Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների լիարժեք պահպանում:

Գործիքակազմ/հետագա ընթերցում

- ▶ **ԽԿԿ** այցելությունների հաշվետվությունների, հրապարակային հայտարարությունների և չափորոշիչների հավաքածու

Գլուխ 8

ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

3 ուրաքանչյուր ոք իրավունք ունի բողոքելու ցանկացած չարաչափ-ման վերաբերյալ, որին բախվում է կալանքի տակ, ինչպես նաև նման բողոքների արդյունավետ հետաքննության՝ առանց անհիմն ձգձգումների:³⁸⁶ Որպեսզի բողոքների ներկայացման մեխանիզմները և մշտադիտարկման գործընթացները հասանելի և արդյունավետ լինեն, կարևոր է երաշխավորել, որ լինի ազատություն՝ ընթացակարգերն անկախ ու թափանցիկ օգտագործելու և գործարկելու համար: Անկախ մշտադիտարկման մարմինների առկայությունը և աշխատանքը կալանավայրերում լրացուցիչ պաշտպանության կարևոր շերտ են ավելացնում կալանավորների անվտանգությանը և բարեկեցությանը: Այս գլուխը միավորում է այս խնդիրների վերաբերյալ առկա չափանիշներն ու ուղեցույցները:

8.1. Բողոքների ներկայացման մեխանիզմներ

Լիազոր մարմինները պետք է ապահովեն, որ կալանավորված անձինք կարողանան բողոքել իրենց կալանքի պայմանների կամ կալանավայրում իրենց նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ³⁸⁷, ինչպես նաև պահանջեն խախտված իրավունքների վերականգնում և (կամ) փոխհատուցում բողոքների ներկայացման և հետաքննության արդար, անկախ և թափանցիկ ընթացակարգի միջոցով:³⁸⁸

Ստացված բողոքները կարող են առաջացնել նաև այլ իրավապահ մարմիններ ուղղորդելու անհրաժեշտություն, օրինակ՝ ոստիկանություն, այն դեպքերում, երբ բարձրացվում են խոշտանգումների և (կամ) դաժան վերաբերմունքի հետ կապված հարցեր:³⁸⁹

Բողոքների ներկայացման մեխանիզմները պետք է ապահովեն որոշակի նվազագույն երաշխիքներ՝ հավաստիանալու, որ դրանք գործում են արդար և արդյունավետ:³⁹⁰ Սա ներառում է հետևյալը.

- ▶ Բողոքների ներկայացման համակարգը պետք է հասանելի լինի բոլոր կալանավորված անձանց համար:
- ▶ Բոլոր կալանավորված անձինք պետք է տեղեկացված լինեն բողոքելու իրենց իրավունքի և նման բողոք ներկայացնելու կարգի մասին:
- ▶ Անհրաժեշտության դեպքում պետք է ապահովվեն թարգմանիչներ, որպեսզի կալանավորված անձը կարողանա բովանդակալից և լիարժեք ներգրավվել բողոքների գործընթացում:
- ▶ Բողոքների ներկայացման ընթացակարգը պետք է գործի գաղտնի, և ցանկացած տեսակի բողոք ներկայացնող ցանկացած կալանավորված անձ պետք է զերծ լինի հաշվեհարդարից:
- ▶ Բոլոր բողոքները պետք է ամբողջությամբ և ճշգրիտ արձանագրվեն. բողոքի կրկնօրինակը պետք է տրամադրել բողոքարկողին և (կամ) որևէ մեկին, ում նրանք լիազորում են իրենց անունից (օրինակ՝ օրինական ներկայացուցիչներ, բժիշկներ կամ հյուպատոսական մարմիններ):
- ▶ Կալանավորված անձը պետք է տեղեկացված լինի իր բողոքի ընթացքի մասին և իր կողմից պահանջ ներկայացնելու դեպքում նրան պետք տրամադրվի որոշման պատճենը՝ բանավոր բացատրությամբ:
- ▶ Անհրաժեշտ է գործի վերանայման արդար, անկախ և թափանցիկ համակարգ, որը թույլ կտա կալանավորված անձին վիճարկել ցանկացած որոշում, որը կայացվել է բողոքից հետո, և վերանայման դիմում ներկայացնելու համար կիրառելի ժամկետները պետք է անհապաղ գրավոր տեղեկացվեն շահագրգիռ անձին:

Դատարանի համապատասխան նախադեպային իրավունք

«Գջինին ընդդեմ Սերբիայի» (2019թ.). Թեև բանտարկյալը պաշտոնական բողոք չի ներկայացրել բանտարկյալների միջև բռնության մասին, լիազոր այն մարմինները, որոնք պետք է նկատած լինեին դաժան վերաբերմունքը, խախտել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածը՝ համապատասխան մարմիններին չտեղեկացնելով:³⁹¹

8.2. Անկախ մշտադիտարկում

Կալանքի պայմանների միջազգային նվազագույն չափանիշներին համապատասխանեցնելու և երաշխավորելու համար բոլոր կալանավայրերը պետք է ենթարկվեն կանոնավոր անկախ մշտադիտարկման,³⁹² որն անցկացվում է մշտադիտարկող անկախ մարմինների և վերապատրաստված անձնակազմի կողմից:³⁹³ «Անկախ մարմիններ» նշանակում է մարմիններ, որոնք իրավասու են վերահսկել կալանավայրերը՝ ըստ ներպետական օրենսդրության կամ համաձայն պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների: Անկախության աստիճանը պետք է համապատասխանի իրենց մանդատին, և իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ մշտադիտարկում իրականացնող մարմինները լիարժեք և անխոչընդոտ մուտք ունենան

բոլոր վայրեր և հաստատություններ, ինչպես նաև տարածքներում գտնվող բոլոր կալանավորված անձանց և անձնակազմին:

Անկախ մշտադիտարկումը կարող է կանխարգելել և կանխել ներգաղթյալների կալանքի հետ կապված նվազագույն չափանիշներից ցանկացած շեղում, քանի որ կալանավայրերի պահպանման և շահագործման համար պատասխանատուները գիտեն, որ չհայտարարված և չվերահսկվող այցելություններ հաստատություն կարող են լինել ցանկացած պահի: Այս մարմինները կարող են նաև խթանել իշխանությունների միջև երկխոսությունը՝ տալով առաջարկություններ այն մասին, թե ինչպես կարող են բարելավվել համակարգերն ու գործընթացները՝ ապահովելու համար, որ կալանքի նվազագույն չափորոշիչները յուրաքանչյուր դեպքում պահպանվեն:

Մշտադիտարկման մարմինները՝ լինի դա ներքին, թե արտաքին, պետք է հիմնված լինեն իշխանություններից անկախության, բարեվարքության, օբյեկտիվության, տեսանելիության և թափանցիկության սկզբունքների վրա:³⁹⁴ Նրանց աշխատանքը պետք է իրականացվի անվախ, բժախնդիր ազնվությամբ և անաչառ, ինչպես նաև համապատասխանի սահմանված կանոններին և ընթացակարգերին, որոնք ենթակա չեն պետական կարգավորման կամ կառավարման:³⁹⁵ Մշտադիտարկման բոլոր մարմիններն իրենց այցելությունների ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնեն, թե արդյոք հետևյալ ծառայությունները և պայմանները համապատասխանում են միջազգային և ազգային նվազագույն չափանիշներին.

- ▶ կալանքի տակ գտնվող անձանց բուժում,
- ▶ բողոքներ և բողոքների ընթացակարգեր,
- ▶ ուժի և զսպող միջոցների կիրառում,
- ▶ կարգապահական վարույթներ և միջոցներ,
- ▶ հատուկ վերաբերմունք անապահով կալանավորված անձանց նկատմամբ,
- ▶ սննդի և ջրի ապահովում,
- ▶ հագուստ, անկողնային պարագաներ և այլ ոչ պարենային ապրանքներ,
- ▶ կրթական և ժամանցային գործողություններ,
- ▶ կապ ընտանիքի անդամների հետ,
- ▶ իրավական օգնության, իրավական ներկայացուցչության և դատական պաշտպանության միջոցների հասանելիություն,
- ▶ խնամքի առողջապահական ծառայություններ,
- ▶ սանիտարահիգիենիկ պայմաններ,
- ▶ կալանավայրերը, ներառյալ լուսավորությունը, օդափոխությունը, ջեռուցումը, սանտեխնիկան, զուգարանները և ցնցուղները,
- ▶ շտապ արձագանքներ:

Ներքին մշտադիտարկման մարմիններին պետք է թույլատրել չհայտարարված և չվերահսկվող այցեր և (կամ) ստուգումներ կատարել կալանավայրեր՝

այնտեղ ցանկացած վայր կամ փաստաթուղթ ստուգելու և ցանկացած կալանավորված անձի հետ զաղտնի խոսելու ազատությամբ:³⁹⁶ Նրանց գործառույթը պետք է լինի վերահսկել անձնակազմի համապատասխանությունը ներքին և ազգային օրենքներին, կանոնակարգերին և քաղաքականություններին, որոնք կարգավորում են կալանքի պայմանները և բոլոր կալանավորված անձանց նկատմամբ վերաբերմունքը: Առանց անձնական և այլ շահերի բախումներից, ներքին մշտադիտարկողները պետք է զեկուցեն լիազոր մարմիններին իրենց հայտնաբերած մտահոգությունների մասին և իրականացնեն հետագա ընթացակարգեր՝ վերահսկելու առաջարկվող կամ պահանջվող ուղղիչ գործողությունների առաջընթացը:

Իրենց լիազորություններին համապատասխան՝ արտաքին անկախ դիտորդները և (կամ) տեսուչները պետք է կանոնավոր չվերահսկվող և չհայտարարված այցելություններ կատարեն կալանավայրեր: Դիտորդական խորհուրդների անդամները պետք է ունենան համապատասխան որակավորում և փորձառություն և նշանակվեն իրավասու պետական մարմնի կողմից, անկախ կալանավայրի պահպանման և շահագործման համար պատասխանատուներից:³⁹⁷ Արտաքին անկախ մշտադիտարկման մարմինները կարող են բաղկացած լինել ազգային և (կամ) միջազգային մարմիններից, և երկուսի միավորումը լավ պրակտիկա է: Նման մարմինները կարող են ներառել, օրինակ.

- ▶ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ),
- ▶ Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ,
- ▶ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար,
- ▶ Խոշտանգումների դեմ կոմիտե,
- ▶ Կարմիր խաչի միջազգային կոմիտե,
- ▶ Ազգային կանխարգելիչ մեխանիզմներ,
- ▶ Ազգային օմբուդսմենի ինստիտուտները,
- ▶ Ազգային տեսչություններ կամ մշտադիտարկողներ,
- ▶ Ազգային խորհրդարանականներ,
- ▶ Ընդունող պետության կողմից հավատարմագրված ազգային իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ:

Նրանց գործառույթների արդյունավետ և բովանդակալից իրականացումն ապահովելու համար պետք է երաշխավորվել հետևյալը.

- ▶ այցելությունները, ներառյալ հետագա այցելությունները, նույնպես պետք է լինեն չհայտարարված և չվերահսկվող,³⁹⁸
- ▶ մշտադիտարկողներին պետք է երաշխավորվի հասանելիություն ցանկացած կայք և ցանկացած փաստաթուղթ, բացառությամբ այն

դեպքերի, երբ այն ապահովագրված է բժշկական կամ մասնագիտական գաղտնիությամբ կամ դասակարգված է,

- ▶ հասանելիություն պետք է տրամադրել առանց ուշացման,
- ▶ կալանավորված անձանց պետք է թույլատրել ազատ և լիովին վստահորեն շփվել մշտադիտարկողների հետ՝ առանց որևէ հաշվեհարդարից վախենալու և անհրաժեշտության դեպքում թարգմանչի ուղեկցությամբ,
- ▶ լիազոր մարմինները պետք է կազմակերպչական աջակցություն ցուցաբերեն մշտադիտարկողների և հարցվողների միջև հաղորդակցության համար, ինչպես օրինակ՝ առանձնացնել սենյակ հարցազրույցների համար, կամ համոզվել, որ կալանավորված անձինք և անձնակազմը հասանելի են հարցազրույցների համար (Նրանց տեղեկացնելով մշտադիտարկող մարմինների կողմից հարցազրույցների ցանկացած խնդրանքի մասին կամ մշտադիտարկող մարմինն տրամադրելով համապատասխան կոնտակտային տվյալներով),
- ▶ մշտադիտարկողներին պետք է թույլատրել դիտարկել ցանկացած կարգապահական վարույթ,
- ▶ մշտադիտարկողները պետք է ամբողջական և ճշգրիտ արձանագրեն իրենց այցելությունները և իրենց կողմից հայտնաբերած ցանկացած մտահոգություն անհապաղ զեկուցեն լիազոր մարմիններին՝ ապահովելով, որ հետագա այցելությունները և ստուգումները ժամանակին պլանավորվեն՝ հայտնաբերված ցանկացած մտահոգության լուծումը վերահսկելու համար:
- ▶ մշտադիտարկողները պետք է հաճախակի զեկուցեն կալանքի պայմանների մասին,
- ▶ մշտադիտարկողները մշտապես պետք է մտահոգվեն «մի վնասիր» և գաղտնիության սկզբունքներով՝ ապահովելով, որ նրանք չվատացնեն կալանավորված անձանց վիճակը՝ խախտելով նրանց գաղտնիությունը կամ ռիսկի ենթարկելով նրանց:

Ոչ մի իշխանություն կամ պաշտոնյա չպետք է ձեռնարկի, թույլատրի կամ հանդուրժի որևէ ահաբեկող կամ պատասխան գործողություն որևէ անձի կամ կազմակերպության դեմ՝ ԽԿԿ-ին կամ որևէ այլ կանխարգելիչ կամ մշտադիտարկման մարմնին տեղեկատվություն հաղորդելու կամ փոխանցելու համար, և ոչ մի այդպիսի անձի կամ կազմակերպության նկատմամբ չպետք է լինի որևէ նախապաշարում: Այս մարմինները կառավարող կանոնների շրջանակներում պահվող անձանց հետ ցանկացած հաղորդակցության գաղտնիությունը պետք է լիովին հարգվի:

Հիշեք.

Կարևոր է, որ կալանքի տակ գտնվող անձանց հասանելի լինեն բողոքների ներկայացման արդյունավետ մեխանիզմները, ինչպես նաև կապը անկախ մշտադիտարկողների հետ՝ բացահայտելու, արձանագրելու և նրանց բուժման հետ կապված ցանկացած խնդիր լուծելու համար: Դրան կարելի է հասնել՝ ապահովելով հետևյալը.

- ▶ Բողոքների ներկայացման մեխանիզմներն հասանելի են կիրառելու համար, անկախ են, անաչառ և թափանցիկ,
- ▶ անհատները տեղեկացված են, թե ինչպես կարող են բողոքել,
- ▶ անհատները պաշտպանված են ցանկացած վախից կամ վրեժխնդրության սպառնալիքից՝ ի պատասխան բողոքի,
- ▶ անհատներին ողջամիտ պարբերականությամբ տրամադրվում են թարմացումներ իրենց բողոքի արդյունքների վերաբերյալ,
- ▶ բողոքները լուծվում են առանց անհարկի ձգձգումների, և անհատները տեղեկացվում են որոշման և դրա պատճառների մասին,
- ▶ լիազորված անկախ մշտադիտարկողները կարող են ցանկացած պահի կատարել չվերահսկվող և չհայտարարված այցելություններ,
- ▶ լիազորված անկախ մշտադիտարկողները կարող են ստուգել և արձանագրել իրենց բացահայտումները կալանավայրի ցանկացած վայրի կամ փաստաթղթի վերաբերյալ և առանձին խոսել ցանկացած անձի հետ:

Գործիքակազմ/հետազա ընթերցում

- ▶ APT, IDC և UNHCR. Ներգաղթի կալանքի մշտադիտարկում: Գործնական ձեռնարկ
- ▶ FRA. ԵՄ արտաքին սահմաններում հիմնարար իրավունքների համապատասխանության մշտադիտարկման համար ազգային անկախ մեխանիզմների ստեղծում
- ▶ ՄՄԿ. (IOM) Միջազգային միգրացիոն իրավունքի տեղեկատվական նշում
- ▶ ՄԱԿ ՓՀԳՀ (UNHCR) ուղեցույցներ ապաստան հայցողների կալանավորման և կալանքի այլընտրանքների վերաբերյալ կիրառելի չափանիշների և չափորոշիչների վերաբերյալ, 2012թ.

Հավելված 1

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս ստուգաթերթը նպատակաուղղված չէ փոխարինել, փոխել կամ հավելել մասնագիտական վարժագծի կանոնները և ազգային և միջազգային օրենքները, որոնք ղեկավարում և կարգավորում են փաստաբանների գործունեությունը:

Հատկանշական է, որ այս ստուգաթերթը չի անդրադառնում կալանքի օրինականությանը վերաբերող իրավունքի կամ որևէ այլ իրավական պահանջի, լինի դա քաղաքացիական, քրեական կամ հանրային իրավունքով:

Փոխարենը, այս ստուգաթերթը նպատակ ունի որոշակի գործնական ուղեցույց տրամադրել բոլոր փաստաբաններին, ովքեր աշխատում են վարչական կալանքի տակ գտնվող անձանց հետ՝ օգնելու նրանց բացահայտելու իրենց պաշտպանյալի ցանկացած խոցելիությունը:

Այս ստուգաթերթն ընդգրկում է որոշ հիմնական նկատառումներ, որոնք յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվեն փաստաբանի կողմից: Դրանց դիտարկման աստիճանը կտարբերվի առանձին դեպքերում՝ կախված պաշտպանյալի հատուկ կարիքներից և գործի խնդիրներից: Հետևաբար, այս ստուգաթերթը ցուցիչ է և չի տրամադրում բոլոր այն նկատառումների ամբողջական ցանկը, որոնք փաստաբանը պետք է անի վարչական կալանքի տակ գտնվող անձանց հետ աշխատելիս, քանի որ անհրաժեշտ նկատառումների ամբողջական ցանկը միշտ կախված կլինի կոնկրետ գործից:

1. Վստահորդի հետ շփումը

- ▶ Կարող եք խոսել ձեր վստահորդի հետ առանձին միջավայրում, որը հարմար է տեղեկատվություն ստանալու և գաղտնի խորհրդատվություն տրամադրելու համար:
- ▶ Անհրաժեշտության դեպքում, իրավաբանական ծառայությունների և ներկայացուցչության համար անհրաժեշտ լեզվով որակավորված թարգմանիչն ազատ հասանելի է:

- ▶ Արդյո՞ք ձեր վստահորդից որքան հնարավոր է շատ տեղեկատվություն եք ստացել նրանց անձնական, ներգաղթի, ընտանեկան և ցանկացած այլ համապատասխան հանգամանքների մասին, օրինակ՝ դատվածության մասին:
- ▶ Արդյո՞ք ձեր վստահորդը խոցելիության առերևույթ նշաններ ունի, ինչպիսիք են երեխա լինելը, հղի լինելը, մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհ լինելը, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի նշաններ ունենալը, հոգեկան առողջության հետ կապված կամ առողջական խնդիրներ ունենալը:

2. Խոցելիություններ

i. Տարիք

- ▶ Քանի՞ տարեկան է ձեր վստահորդը՝ նրա ասելով:
- ▶ Եթե նրանք չգիտեն, թե քանի տարեկան են, ունեն անձը հաստատող փաստաթուղթ՝ ծննդյան ամսաթվով:
- ▶ Եթե նրանց տարիքը չի ստուգվել, և ենթադրվում է, որ նրանք անչափահաս են, արդյո՞ք նրանց վերաբերվում են որպես այդպիսին:
- ▶ Եթե նրանք երեխա են, անմիջապես քայլեր ձեռնարկվո՞ւմ են կալանքի այլընտրանք ապահովելու համար:
- ▶ Եթե նրանք ուղեկցվող երեխա են, ձեռնարկվո՞ւմ են անհապաղ քայլեր՝ ապահովելու համար, որ նրանք չբաժանվեն իրենց ընտանիքից, եթե դա չի բխում նրանց լավագույն շահերից:
- ▶ Եթե նրանք առանց ուղեկցության երեխա են, արդյո՞ք նրանք ազատ հասանելիություն ունեն խնամակալին և (կամ) սոցիալական աշխատողին և իրենց օրինական ներկայացուցչին: Արդյո՞ք բոլոր քայլերը ձեռնարկվում են ընտանիքի վերամիավորումն ապահովելու համար, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից:
- ▶ Բավարարվո՞ւմ են արդյոք նրանց հատուկ առողջապահական, կրթական, ժամանցի և ապրուստի կարիքները որպես երեխա:

ii. Հղիություն

- ▶ Արդյո՞ք ձեր վստահորդը հայտարարում է, որ հնարավոր է հղի է: Եթե այո, արդյո՞ք նա ունի հասանելիություն հղիության թեստից անվճար օգտվելու այս փաստը հաստատելու համար: Հիշեք, որ կրոնական, մշակութային և (կամ) հասարակական գործոնները կարող են հանգեցնել, որ որոշ կանայք չցանկանան բացահայտել հնարավոր հղիությունը:
- ▶ Արդյո՞ք հղիության դեպքում քայլեր ձեռնարկվում են անմիջապես կալանքին այլընտրանք փնտրելու համար:
- ▶ Հղիության դեպքում բավարարվո՞ւմ են արդյոք նրա՝ որպես հղի կնոջ հատուկ առողջական, սանիտարական և կենսապահովման կարիքները:

iii. Մարդկանց թրաֆիքինգի և ստրկության ժամանակակից ձևերի զոհեր

- ▶ Արդյո՞ք մարդկանց թրաֆիքինգի և (կամ) ստրկության ժամանակակից ձևերի ենթարկված անձինք հայտարարում/հայտնում են այդ մասին: Հիշեք, որոշ մարդիկ կարող են նույնիսկ չիմանալ, որ իրենք զոհ են, կամ որոնք են մարդկանց թրաֆիքինգի կամ ստրկության ժամանակակից ձևերը:
- ▶ Ոմանք կարող են չվստահել այդ մասին բացահայտել որևէ պաշտոնատար անձի, իսկ որոշ մարդիկ կարող են հերքել զոհ լինելը՝ վախենալով իրենց կամ իրենց ընտանիքի անձնական ապահովության և անվտանգության համար (կանայք կարող են իգական սեռի ներկայացուցիչ անձնակազմի կարիք ունենալ՝ բացահայտելու մարդկանց թրաֆիքինգի մասով իրենց փորձը, ինչպես նաև առանձին հարցազրույցներ ունենալ ընտանիքի անդամների/երեխաների բացակայությամբ):
- ▶ Արդյո՞ք նրանց ներգաղթի պատմությունը որևէ ցուցանիշ է պարունակում:
 - Ինչպե՞ս են նրանք ժամանել ներկայիս վայր: Որևէ մեկին վճարել են մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու համար:
 - Արդյո՞ք ունեն անձը հաստատող փաստաթուղթ: Որտե՞ղ են դրանք: Ինչ-որ մեկը պահում է դրանք իր մոտ, օրինակ՝ մաքսանենգ, կամ՝ «գործատու»:
 - Որտե՞ղ են նրանց բերման ենթարկել իշխանությունները, եթե այդպես են հայտնվել կալանքի տակ:
- ▶ Նրանց քրեական պատմությունը, եթե այդպիսին կա, ինչ-որ ցուցանիշ պարունակում է: Նկատի ունեցեք, որ որոշ դեպքերում թրաֆիքինգի և (կամ) ստրկության ժամանակակից ձևերի զոհերը կարող են հանցավոր շահագործման ենթարկվել, երբեմն, բայց ոչ միշտ՝ պարտքով պայմանավորված ստրկության միջոցով: Կան տարբեր քրեական հանցագործություններ, որոնք կարող են որոշակի հարցեր առաջ քաշել. դրանք ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.
 - ապօրինի թմրամիջոցների պահպանում, արտադրություն կամ վաճառք,
 - սառը զենքի առկայություն,
 - անձը հաստատող կեղծ փաստաթղթերի արտադրություն, վաճառք կամ օգտագործում,
 - գողություն:
- ▶ Արդյո՞ք նրանց «աշխատանքային» պատմությունը, եթե այդպիսին կա, ինչ-որ ցուցանիշ է պարունակում:
 - Նրանք աշխատավարձ ստացել են:
 - Նրանք աշխատանքային պայմանագիր ունեցել՞ են:
 - Նրանք աշխատանքի թույլտվություն ունեցել են:
 - Որքա՞ն են նրանք վարձատրվել իրենց աշխատանքի համար:

- Ինչպիսին էին նրանց աշխատանքային պայմանագրի պայմանները:
- Ինչպե՞ս էր նրանց «գործատուն» նրանց վերաբերվում:
- Կարողացել են ընդմիջումներ անել: Եթե այո, ապա ինչքան ժամանակով:
- ▶ Արդյո՞ք կան այլ ցուցանիշներ:
 - Վնասվածքներ կամ սպիներ, որոնք համապատասխանում են հավաստի բացատրությանը:
 - Արդյո՞ք կան անբացատրելի վնասվածքներ կամ սպիներ:
 - Արդյո՞ք զուսպ է, տազնապած կամ անհանգիստ:
 - Արդյո՞ք դժկամություն է ցուցաբերում ներգրավվել քննարկումներում:
 - Արդյո՞ք առկա են ավելորդ հեռախոսազանգեր:
 - Արդյո՞ք առկա են անբացատրելի բացակայող ժամանակաշրջաններ:
 - Արդյո՞ք բռնաբարության և (կամ) սեռական ոտնձգության զոհ է:
- ▶ Եթե չափահաս մարդիկ են, նրանք համաձայնվում են, որ դուք բացա-
հայտեք այդ ցուցանիշները լիազոր մարմիններին:

iv. Խոշտանգումներ/այլ դաժան վերաբերմունք, ներառյալ գենդերային/սեռական բռնություն

- ▶ Արդյո՞ք նրանք հասկանում են, թե ինչ է նշանակում խոշտանգում և (կամ) վատ վերաբերմունք, գենդերային և սեռական բռնություն:
- ▶ Նրանք հայտարարել են, որ իրենք տուժել են այս ձևերից որևէ մեկով: Հաշվի առնել, որ կրոնական, մշակութային և հասարակական պատ-
ճառներով կամ իրենց կամ իրենց ընտանիքի անվտանգության և
ապահովության համար վախով պայմանավորված ոմանք կարող
են չցանկանալ բողոքել որևէ դաժան վերաբերմունքից: Նաև հաշվի
առնել, որ կանանց կարող է անհրաժեշտ լինել կին անձնակազմի
ներկայությունը՝ բացահայտելու գենդերային բռնության իրենց փորձը
և առանձին հարցազրույցներ ընտանիքի որևէ անդամի բացակայու-
թյան դեպքում, նույն սեռի անձնակազմի ներկայության պահանջը
վերաբերում է սեռական բռնության ցանկացած զոհի:
- ▶ Արդյո՞ք նրանց բժշկական փաստաթղթերը ցույց են տալիս, որ վնաս-
վածքներ են ստացել կալանավորումից առաջ կամ ընթացքում:
- ▶ Նրանք տեսանելի վնասվածքներ ունեն և (կամ) հին կամ նոր սպիներ
կամ հետքեր:
- ▶ Կամ գենդերային հիմքով բռնության կասկածներ, ինչպիսիք են բռնա-
բարությունը, սեռական ոտնձգությունը, կանանց սեռական օրգանների
խեղումը, հարկադիր ստերիլիզացումը կամ հղիության հարկադիր
ընդհատումը:
- ▶ Արդյո՞ք կասկածներ կան հարկադիր կամ մանկահասակ տարիքում
ամուսնության վերաբերյալ:

v. Մտավոր և ֆիզիկական առողջություն

- ▶ Արդյո՞ք նրանք հայտարարել են, որ ունեն ֆիզիկական և (կամ) հոգեկան առողջության հետ կապված կարիքներ: Հաշվի առնել, որ կրոնական, մշակութային և հասարակական պատճառներով ոմանք կարող են չցանկանալ բացահայտել առողջական որևէ մտահոգություն:
- ▶ Արդյո՞ք ձեր վստահորդը համաձայն է, որ դուք ստանաք իր բժշկական փաստաթղթերը: Արդյո՞ք ներգաղթը, կալանքը և (կամ) համայնքի բժշկական փաստաթղթերը որևէ առողջական խնդիր են ցույց տալիս:
- ▶ Հարցեր, որոնք պետք է հաշվի առնել՝ խնդրելով օգնել հաճախորդներին խոսել իրենց առողջական վիճակի մասին և այն մասին, թե ինչպես են իրենց հետ վարվում կալանքի տակ.
 - Նրանց մոտ երբևէ ախտորոշվել է որևէ լուրջ ֆիզիկական կամ հոգեբանական հիվանդություն:
 - Արդյո՞ք նրանք ֆիզիկական ցավ են զգում: Եթե այո, ապա ի՞նչ մասում և ի՞նչ աստիճանի:
 - Արդյո՞ք նրանց մոտ նկատվում է տրամադրության անկում, քնի վատթարացում, նախկինի անդրադարձեր, մտքեր կամ ինքնավնասման և (կամ) ինքնասպանություն գործելու փորձեր: Արդյո՞ք նրանք երբևէ դրսևորել են այս ախտանիշները, նույնիսկ կալանքից առաջ:
 - Նրանք այդ մասին տեղյակ պահել են իրենց կալանավայրի անձնակազմին: Եթե այո, ապա ե՞րբ: Ո՞ւմ հետ են խոսել: Ի՞նչ հետագա գնահատում և (կամ) բուժում է նախատեսվում:
 - Բժշկական այցելությունների ժամանակ ապահովվո՞ւմ է արդյոք նրանց գաղտնիությունը: Որքան ժամանակ է անցկացվում բուժաշխատողի հետ: Արդյո՞ք բժիշկը նշումներ է կատարում այցի ընթացքում: Արդյո՞ք բժիշկը լսում է նրանց բողոքները և հարցեր տալիս կամ հետազոտում դրանք: Արդյո՞ք բացատրված և կազմակերպված է բուժման որևէ պլան:
 - Ի՞նչ դեղեր են նշանակվում, եթե այդպիսիք կան, և ինչպե՞ս է դա ազդում նրանց վիճակի վրա: Որքան հաճախ է նրանց դեղորայքային բուժումը վերանայվում առողջապահական անձնակազմի կողմից:
 - Ինչպե՞ս են կալանքի պայմաններն ազդում նրանց ինքնազգացողության վրա:
 - Ինչպե՞ս է ազդում կալանքի տևողությունը նրանց ինքնազգացողության վրա:

3. Կալանքի ընդհանուր պայմաններ

Մանրամասն տեղեկատվություն ստանալ հետևյալ պայմանների վերաբերյալ.

i. Քուն

- ▶ Որո՞նք են նրանց քնելու պայմանները:
- ▶ Արդյո՞ք նրանք իրենց ապահով են զգում քնելու համար նախատեսված տարածքներում:
- ▶ Արդյո՞ք նրանք ապովահովված են առանձին մահճակալով կամ, եթե դա կարճատև է՝ հարթակով:
- ▶ Արդյո՞ք ներքնակները և սավանները մաքուր են և լվացվում են ողջամիտ ընդմիջումներով անվճար հիմունքներով:
- ▶ Արդյո՞ք գիշերվա ընթացքում աղմուկը ցածր է:
- ▶ Գիշերվա ընթացքում լույսերն անջատված են:
- ▶ Արդյո՞ք օդափոխությունը և (կամ) ջեռուցումը բավարար է:
- ▶ Որքանի՞նչ մեկ սենյակում կալանավորված անձանց թվի սահմանափակումը և իրականում քանի՞սն են քնում նույն սենյակում:

ii. Չուգարան և ցնցուղ

- ▶ Կա՞ն արդյոք հեշտ հասանելիություն զուգարանին, ըստ անհրաժեշտության:
- ▶ Արդյո՞ք կա ցնցուղի և տաք հոսող ջրի բավարար հասանելիություն:
- ▶ Արդյո՞ք այդ հարմարությունները համարժեք են կալանավորված անձանց թվին:
- ▶ Արդյո՞ք դրանք գործում են և ունեն համապատասխան սանտեխնիկա:
- ▶ Արդյո՞ք բոլոր հիմնական լոգանքի պարագաները տրամադրվում են անվճար և լրացվում են սպառվելուն պես:
- ▶ Արդյո՞ք կան առանձին զուգարան և ցնցուղ տղամարդկանց, կանանց և ընտանիքների համար:
- ▶ Արդյո՞ք նրանք իրենց ապահով են զգում զուգարանի և ցնցուղի համար նախատեսված վայրերում:

iii. Սանիտարահիգիենիկ պայմաններ

- ▶ Արդյո՞ք սանիտարահիգիենիկ պարագաներն ու մաքրող միջոցները հասանելի են և անհրաժեշտության դեպքում դրանց համալրումը իրականացվում է անվճար:
- ▶ Արդյո՞ք ողջամիտ պարբերականությամբ կատարվում է բնակելի միջավայրի, լոգարանների, զուգարանների և մահճակալների խորը մաքրում, ախտահանում և օդափոխություն:

iv. Մնունդ և խմելու ջուր

- ▶ Արդյո՞ք կա օրական երեք բավարար սննդի և թարմ խմելու ջրի անվճար հասանելիություն ցանկացած պահի:

- ▶ Արդյո՞ք բավարար տեղ կա ուտելու համար:
- ▶ Արդյո՞ք մաքուր են սեղանից օգտվելու պարագաները:
- ▶ Արդյո՞ք սննդամթերքի պատրաստումը և սպասարկումը համահունչ են առողջության և անվտանգության կանոններին:
- ▶ Արդյո՞ք առաջարկվող ճաշացանկը բավարարում է որևէ կրոնական կամ ոչ կրոնական համոզմունքների կամ առողջական կարիքների:

v. Հագուստ և այլ պարագաներ

- ▶ Արդյո՞ք ձեր վստահորդը ի վիճակի է կրել իր սեփական հագուստը:
- ▶ Արդյո՞ք լվացքի և չորացման հնարավորությունները և սարքավորումները տրամադրվում են անվճար և ողջամիտ պարբերականությամբ:
- ▶ Արդյո՞ք անհրաժեշտության դեպքում համապատասխան հագուստ տրամադրվում է անվճար:

vi. Կրթական և ժամանցային գործունեություն

- ▶ Արդյո՞ք առաջարկվում է անվճար և հավասար հասանելիություն որևէ կրթական դասընթացի:
- ▶ Արդյո՞ք կրթական դասընթացներ առաջարկվում են ազգային ծրագրերին համապատասխան:
- ▶ Արդյո՞ք ուսումնասիրության և վերանայման նյութերը, ներառյալ համապատասխան ռեսուրսներով ապահովված և հասանելի գրադարանը և գրենական պիտույքները, տրամադրվում են անվճար:
- ▶ Արդյո՞ք հասանելի են համապատասխան ժամանցային միջոցառումներ՝ հաշվի առնելով կալանավորված անձանց կարիքները:

vii. Անձնակազմ

- ▶ Ձեր վստահորդին կամ կալանավորված այլ անձանց ինչպե՞ս են վերաբերվում կալանավայրի աշխատակիցները:
- ▶ Կա՞ն որևէ բողոքների ներկայացման գործընթացներ:
- ▶ Հասանելի են արդյո՞ք անկախ մշտադիտարկողներ:
- ▶ Հասանելի է արդյո՞ք բուժանձնակազմ:

viii. Բերման ենթարկված անձանց նկատմամբ կիրառելի կարգապահական միջոցներ

- ▶ Արդյո՞ք գումար գանձվում է որևէ ընթացակարգի համար:
- ▶ Արդյո՞ք կիրառվում են պատժամիջոցներ:
- ▶ Արդյո՞ք կան բողոքների ներկայացման գործընթացներ:

- ▶ Որո՞նք են կարգապահական միջոցների տևողությունը և բնույթը և այդ միջոցների կիրառման պայմանները:
- ▶ Կա՞ն հատուկ նկատառումներ մեկուսացման որևէ դեպքի վերաբերյալ:

ix. Բջջային սարքեր կամ հասանելիություն հեռախոսին

- ▶ Արդյո՞ք կալանավորված անձն ազատ ձևով կամ օրվա որոշակի ժամերին հասանելիություն ունի իր բջջային սարքերին, թե՞ ընդհանրապես հասանելիություն չունի:
- ▶ Արդյո՞ք նա կալանավայրում հասանելիություն ունի անվճար հեռախոսի:

Հավելված 2

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս ստուգաթերթը նպատակ ունի ծառայել որպես գործնական ուղեցույց բոլոր բուժաշխատողների համար, ովքեր աշխատում են վարչական կալանքի տակ գտնվող անձանց հետ՝ օգնելու նրանց բացահայտելու իրենց բուժառուի ցանկացած խոցելիություն: 399 Այս ստուգաթերթը ներառում է որոշ հիմնական նկատառումներ, որոնք պետք է իրականացվեն ժամանելուն պես՝ նրանց ներկայության ժամանակ կալանավայրում և մեկնելուց հետո: Դրանք առանձին դեպքերում հաշվի կառնվեն տարբեր աստիճաններով՝ կախված տվյալ անձի հատուկ կարիքներից և գործին առնչվող հարցերից:

Հետևաբար, այս ստուգաթերթը ցուցիչ է և չի ներկայացնում այն բոլոր նկատառումների սպառիչ ցանկը, որոնք բուժաշխատողը պետք է իրականացնի վարչական կալանքի տակ գտնվող անձանց հետ աշխատելիս, քանի որ անհրաժեշտ նկատառումների ամբողջական ցանկը միշտ կախված կլինի կոնկրետ գործից:

1. Անձի՝ կալանավայր ժամանելու պահին

- ▶ Սկզբում հարցնել կալանավորված անձին, արդյոք նա որևէ հատուկ գանգատ(ներ) ունի իր առողջության վերաբերյալ:
- ▶ Կալանքի տակ գտնվող անձին հարցնել, թե արդյոք նա տառապել է որևէ տեսակի հիվանդությամբ մինչ կալանավորումը:
- ▶ Կալանքի տակ գտնվող անձին հարցնել, թե արդյոք նա կանոնավոր կերպով որևէ դեղամիջոց է օգտագործում, եթե այո, ապա ինչ պատճառներով և ինչ հաճախականությամբ: Եթե պարզվի, որ կալանքի տակ գտնվող անձը պարբերաբար օգտագործում է որևէ դեղամիջոց, ապա ձեռնարկել ողջամիտ և անհրաժեշտ քայլեր՝ նրան անհրաժեշտ դեղամիջոցներով ապահովելու համար:
- ▶ Կալանքի տակ գտնվող անձին հարցնել, թե արդյոք նա երբևէ հոգեբանական և (կամ) հոգեբուժական բուժում է ստացել, և եթե այո, մի՞ր և ի՞նչ պատճառներով:
- ▶ Կալանավայր ժամանելիս իրականացնել կալանավորված անձի բժշկական ստուգում՝ համոզվելու համար, որ նա վատ վերաբերմունքի գոհ չի եղել կամ չի տառապում որևէ հիվանդությամբ:

- ▶ Ստուգել՝ արդյոք անձը հանդիսանում է կանանց նկատմամբ բռնության, օրինակ՝ ընտանեկան բռնության կամ կանանց սեռական օրգանների խեղման, կամ տվյալ անձի ծագման երկրում վնասակար առողջական պրակտիկայի զոհ է, ինչպիսին է ստերջացումը:
- ▶ Գրանցել կալանավորված անձի առողջական վիճակը ժամանման պահին՝ նշելով նվազագույնը՝ նրա անուն ազգանունը, ծննդյան տարեթիվը, սեռը, հարցազրույցի և բժշկական ստուգման արդյունքում ստացված բժշկական տվյալները:
- ▶ Նշել կալանավորված անձի բժշկական հարցաքննման և յուրաքանչյուր բժշկական ստուգման ամսաթիվը և ժամը:
- ▶ Տեղեկացնել կալանքի տակ գտնվող անձանց, թե ինչպես նրանք կարող են դիմել բժշկական ծառայությունների համար բժշկական կարիքի դեպքում:
- ▶ Կալանավայրում կազմել և թարմացնել տեղեկատվություն համավարակի կամ վարակիչ հիվանդությունների դեպքում, ներառյալ՝ նման ժամանակահատվածում լիազոր մարմինների և կալանավորված անձանց կողմից ձեռնարկվելիք միջոցների մասին:

2. Անձի՝ կալանավայրից հեռանալու պահին

- ▶ Հարցնել կալանավորված անձին, արդյոք նա վնասվածք ստացել է կալանավորման ընթացքում:
- ▶ Այն դեպքերում, երբ հայտնաբերվում են վնասվածքի նշաններ, հարցնել կալանավորված անձին, թե ինչ հանգամանքներում է նա դրանք ստացել:
- ▶ Կալանավորված անձի կալանավայրից հեռանալու պահին կատարել բժշկական ստուգում՝ համոզվելու համար, որ նա վատ վերաբերմունքի կամ հիվանդության զոհ չի եղել:
- ▶ Հարցաքննության և բուժքննման միջոցով ձեռք բերված տվյալների հիման վրա գրանցել կալանավորված անձի առողջական վիճակը կալանավայրից մեկնելու պահին:

3. Կալանքի ողջ ընթացքում

Բոլոր հարցերը/խնդիրները, որոնք թվարկված են ժամանման/մեկնման պահին, պետք է տրվեն/քննարկվեն նաև բժիշկների կողմից կալանքի/ընդունման ողջ ընթացքում: Բացի այդ, կալանքի ողջ ընթացքում հետևյալ ուղղորդող ցուցիչները կարող են օգնել բժիշկների ավելի լավ կատարել իրենց առաքելությունը և արդյունավետ կերպով պաշտպանել կալանավորված անձանց մարդու իրավունքները:

- ▶ Պատրաստել և տարածել տեղեկատվություն հիգիենայի և սանիտարական միջոցառումների վերաբերյալ, որոնք պետք է հարգեն և հետևեն կալանավայրում գտնվող բոլոր անձինք:

- ▶ Համոզվել, որ կալանավայրերը պարբերաբար մաքրվում և ախտահանվում են պրոֆեսիոնալ անձնակազմի կողմից:
